



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

391.99

ML-95





- 6 NOV 2011

Հրատարակութիւն ՍՈՒՐԷՆ ԹԱՐՎԵՐԴԵԱՆԻ

3074
891.99 542-3
ՈՒ-95 4V

ՈՒՐԻԱՆԿԱՐՆԵՐ

8 վեպիկներով

1004
15013



Արմենիա
Եղիշ Տորո

ԲՍ.ԳՈՒ

Տպարան Եղբ. Ղազարեանների

1904.

27.09.2013

59.606



Ո Ւ Ր Ի Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր

Ա.

Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Յուրա քամին վզվզում էր, բզի նման մտնում մարդու մարմնի մէջ և ծակոտում սարսուռ առաջացնում այնտեղ: Ես գտնւում էի քաղաքից հեռու մի բլրի վրայ: Այ ոք չկար շուրջս. եթէ մէկը լինէր իսկ, չէի կարող նրան նշմարել, քանի որ այքերս բաց անել չէր լաջողւում ինձ. աւազի մանր հատիկներն ու փոշին ծածկել էին արդէն դէմքս, գլխարկս, վերարկուս իւր ամբողջ երկայնութեամբ: Այ ձեռքով պինդ բռնած և մինչև ունքերս քաշած գլխարկս, գնում էի այն ուղղութեամբ, ուր քշում էր ինձ քամին՝ առանց իմանալու, թէ ուր եմ գնում:

Յանկարծ ծուխի և գէշի մի ծակող հոտ լըցւեց թոքերիս մէջ: Եունչս կտրւում էր չէի կարողանում ոտքերիս վրայ կանգնել, և նստեցի: Քամին շարունակում էր բոլոր ուժով մէջքս հարուածել, ծուխը լցւում էր քթածակերիս մէջ, բայց ես տեղիցս չէի շարժւում. որոշել էի այդտեղ մընալ, մինչև քամին քիչ կըհանդարտուի: Մի քանի

Дозволено Цензурою,
24 Сентября 1904 года, г. Тифлисъ.

րուպէ մնացի այդ դրուժեան մէջ, յետոյ վերկացայ
և նայեցի այն կողմը, որտեղից ծուխը գալիս էր
դէպի ինձ: Այնտեղ հագիւն նշմարուում էին կեղտոտ,
մուժ թմբեր, որոնցից մի քանիսը ծխում էին:
Կանգնեցի և սկսեցի առաջանալ դէպի այդ թըմ-
բերը:

Հինգ րուպէ յետոյ աչքիս առաջ պարզուեց
մէկը կեանքի դրամի սոսկալի պատկերներէց, ուր
երևում են մարդիկ վախ մարմիններով, ապուշ
դէմքերով, մարդկային արտայայտութիւնը կոր-
ցրած, սևացած, մոխրի, ծխի և փոշու մէջ թա-
թախուած մարդիկ, որ ման են գալիս երկու ո-
տերի վրայ և որոնց մէջքը միշտ կոր է չորս ոտք
ունեցող անասունների նման:

Բլրի լանջին ընդարձակ դաշտավայրում, ուր
թափուում են քաղաքի կեղտերն ու աղբը, մի քա-
նի պարսիկ բանուորներ թիակներով հաւաքում են
աղբը մի տեղ, կազմում են թմբեր և կրակ են
տալիս. քամին ոլորում է թմբերի շուրջը, կայծը
տարածում է և առանց բոցավառուելու այրում է
թմբի մէջ գտնուող փայտի կտորտանքը, քուր-
ջերը, չորացած աղբը բարձրանում է, խեղդող
դարձահոտ մի ծուխ, որը կուլ են տալիս խեղճ
բանուորները լիաթոք: Նրանց ձեռները սառել են,
շնչով ջանում են տաքացնել և դարձեալ բռնում
են թիերի կոթերից, կազմում են աղբերից թմբեր
և կրակում. ծուխը դարձեալ բարձրանում է, դար-
ձեալ նրանք լիաթոք շրնչում են այդ ծուխը և
այդպէս տարին տասներկու ամիս ամեն օր: Մենակ

չեն սակայն բանուորները, նրանց գլխի վրայ կան-
գնած է աղբակոյտերի վերակացուն՝ մի երիտա-
սարդ թուրք տղամարդ, վերարկուի մէջ պինդ փա-
թաթուած, կոշիկները մինչև ծնկները քաշած,
մտրակը ձեռին, աչքերին ակնոց և գլխին բաշլիխ:
Նա շրջագայում է աղբանոցի տարածութեան վրայ
և հէնց որ նկատում է մի թումբ կրակից գերծ,
հրամայում է բանուորներին խսկոյն կրակել այն
թումբը: Այդ րուպէին նա ահարկու է. վայ թէ
բանուորը մի րուպէ տատանուեց, մտրակը մէջքին է
իջնում անխնայ: Ստրուկը հրամանատար է դառել
և անողոք է իրենից տկարների նկատմամբ, ինչպէս
իրենից զօրաւորները անողոք են իւր նկատմամբ:
Այնտեղ է և հրէայ կապալառուն, որ ցնցոտիների
մէջ պինդ գրկուած շիշեր է հաւաքում. այնտեղ
են և մի գոյգ երջանիկ ամուսիններ, որ հին կօ-
շիկներ ու քուրջեր են հաւաքում, այնտեղ է վեր-
ջապէս և՛ օգտասէր պարսիկը, որ երկաթ է հա-
ւաքում: Տեսնում էք, ընթերցող, քանի՜ մարդ-
կանց է կերակրում քաղաքի աղբը:

Մօտենում եմ իւրաքանչիւրին. նայում եմ
բանուորներին, որոնք վազում են շուտ քաղաքից
աղբ բերող սայլի մօտ, որ իւր բեռը թափում և
գնում է. նրանք աշխատում են խսկոյն թմբեր
կազմել, կրակ տալ նրանց և ծուխ բարձրացնել.
բայց շուտ նրանց մօտ հասնում են հրէայ կապա-
լառուն, պարսիկ երկաթահաւաքը, երջանիկ կօշ-
կահաւաք ամուսինները և ջանում են կրակի ձեռից
մի բան խլել... Ազուաները սատկած էջի վրայ են

վազում... Քամին փչում, թափանցում է նրանց մարմնի մէջ, ծուխը բարձրանում, լցում է նրանց թոքերի մէջ, նրանք դողում են, խեղդում են և շարունակում իւրաքանչիւրը իւր գործը... Ծուխը հետզհետէ թանձրանում է, նրանց աչքերը չեն զօրում բացուել. բոլորը հեռանում են այրուող թմբերի մօտից և դիմում են դէպի մի ուրիշ սալ, որ նոր է հասել և որ առաջինների նման բերում է քաղաքի աւելցուքները:

Ընդարձակ դաշտավայրի վրայ մի քանի տանակ շներ էլ գէշեր, կտորներ են փնտռում, իսկ հարիւրից աւելի խոզեր աղբի մէջ խրած իրենց քթերը արածում են:

Սարսափելի է:

Բայց ո՛չ, սարսափը նոր է գալիս:

Ս. չքերս գրեթէ փակ պահած անցնում եմ աղբի թմբերի, ստտակած կենդանեաց դիակների և գարշելի հոտ բուրոյ կեղտոտութեան ճահիճների մօտով և դիմում եմ դէպի հեռում երևացող տնակի կողմը, ուր հանգստութիւն եմ յուսում գտնել: Յանկարծ կանգնում եմ... Երկու երեխաներ 10—12 տարեկան, ոտաբոբիկ, մէկ-մէկ շապիկ թիկներին գցած և պատառ-պատառ եղած մէկ-մէկ վարտիկ հագած, գլուխները բաց, վտիտ մարմնով, սարսուլով, դողալով, ձախ ձեռքով, իւրաքանչիւրը քաշում էր իւր լեռեից մի պարկ և աջ ձեռքով քանդում թմբերը, պեղում փոքրիկ փայտերով և, եթէ տեսնում էր նրանց մէջ դնելու զրջից էլ աւելի բարակ փայտի կտորներ,

վերցնում էր իւր կապտած, մկանները քաշուած մատներով ու ձգում պարկի մէջ: Երկուսի աչքերից էլ կաթիլ-կաթիլ դուրս էին ցայտում արտասուքի հատիկները և գլորուելով ընկնում կեղտոտ գետնի վրայ... Նրանց ամբողջ մարմինը կապտած է... Նրանց ոտները ծակոտում են ապակու կրտորներին և մեխերի սուր ծայրերին հանդիպելով. այդպիսի դիպուածում նրանք թռչում, ոստնում էին և հազիւ կարողանում կանգնել իրենց արիւնոտած ոտների վրայ. բայց նրանք ուշադրութիւն չէին դարձնում իրենց կսկծին, ուշք չէին դարձնում նոյն իսկ և այն բանին, թէ ինչպէս քամին բարձրացնում էր իրենց շապիկները մինչև ուսները և իրենց մէջքը բաց անում, (և այդ մէջքները կմախքներ են ներկայացնում), նրանք ուշ չէին դարձնում և՛ իրենց խեղդող ծխին ու շարունակ աղբի մէջ փայտի կտորներ էին փնտռում: Նրանք ժպտում էին նոյն իսկ, եթէ իրենց վարտիկի ճեղքերը բացում էին և երևում իրենց նիհար զիստերը:

— Կարօ, ուրախացիր, մի փայտ եմ գտել, որով կարող եմ մի «մեծ» թէյաման ջուր եփ տալ, — կանչեց փոքրը առաջին անգամ լուութիւնը խրդելով հատիկ հատիկ և դժուարութեամբ բառերը արտասանելով և ցոյց տուեց մեծին հացի սովորական դանակի մեծութեամբ մի փայտ, որը հազիւ կարողանում էր պահել իւր դողացող ձեռների մէջ:

— Տուր ինձ, Ս. Լ. Գ. օ, տուր ինձ, — ասաց մեծը

գուրգուրալով ու մօտեցաւ նրան. — դու փոքր ես, հիւանդ տեղիցդ նոր ես վեր կացել, — շարունակեց կարեկցութեամբ նրա ձեռից բռնելով, որ փայտն առնի, — դու չես կարող այդ փայտը տանել մինչև տուն:

— Չէ, չեմ տալ, — բղաւեց Աւդօն իւր ձեռքը նրա ձեռի միջից ազատել փորձելով. — ուզում ես մայրիկին ասել, թէ դու ես գտել այս փայտը, որ նա քեզ մի բաժակ թէյ աւելի տայ:

— Ինչո՞ւ եմ սուտ ասելու, ինչո՞ւ եմ խաբելու, չէ որ հայրիկն ասում էր միշտ, թէ ով սուտ կըխօսի, նա Աստուծո՞ւ աչքից կընկնի:

— Ուրեմն մայրիկին տալիս պիտի ասես, որ Աւդօն է գտել, հա՛:

— Ի հարկէ, ի հարկէ...

— Երդում արա՛... ասաց վերջապէս Աւդօն մի ըոպէ մտածելուց յետոյ, շքնչասպառ յաղթական տոնով, կարծես գտել էր իւր եղբօր ճշմարտախօսութիւնը փորձելու միակ հնարը:

Էն Աստուած... Կարօն աջ ձեռքն մօտեցրեց ճակատին երեք մատները միացած:

— Չէ, չեմ ուզում, չեմ ուզում, երդում մի անիլ... առ այս փայտը և գնանք... ես մրսում եմ...

— Քիչ էլ հաւաքենք:

— Չէ, չեմ կարող, — մրմնջաց փոքրիկը, — չեմ կարող, ամբողջ մարմնով դողում եմ:

Յիրաւի խեղճ փոքրիկ Աւդօն ոտի վրայ այլ ևս կանգնած մնալ չէր կարողանում:

Նրանց տեսքը հէնց առաջին ըոպէից ճմլեց

սիրտս, իսկ նրանց խօսակցութիւնը ինձ յուզեց:

Կարօն և Աւդօն իւրաքանչիւրը շալակեց իւր բեռը՝ կէսկէս պարկ փայտ և պինդ բռնած պարկերի ոլորած բերաններից պատրաստուեցան առաջանալ: Չմոռանամ ասելու, որ Կարօն իւր ձեռին բռնած պահեց Աւդօյի գտած «մեծ» փայտը, որովհետև նա մտածում էր, որ մայրը սպասելիս կըլինի դրան առաջ և «մեծ» փայտը իւր ձեռին տեսնելով կուրախանայ, այդպէս էլ նա բացատրեց իւր փոքր եղբօրը: Որը յորդորում էր նրան պարկի մէջ ձգել: Նրանք մի քանի քայլ առաջ գնացին:

Կարօ, Աւդօ, — ասացի ես նրանց հասնելով, — դուք հա՛յ էք:

— Որ հայ չլինենք, ինչո՞ւ են ուրեմն մեր անունը Կարօ, Աւդօ դրել, — պատասխանեց մեծը մի ըոպէ կասկածամտութեամբ երեսս նայելուց յետոյ: — Քուրդի, թուրքի, նասրանիի անունը Կարօ, Աւդօ չի լինիլ, — շարունակեց ճիգ գործ դնելով իւր վրայ, որ քամու հակառակ ուղղութեամբը առաջ գնայ:

Աւդօն արտասուալից աչքերով մտիկ էր անում ինձ աչքի տակով և բռնած եղբօր շապկի ծայրից հետևում էր նրան:

— Ո՛րտեղացի էք, — շարունակեցի ես, — ո՛րտեղ էք ապրում:

— Հայաստանցի ենք, — ասացին երկուսը միաբերան և լռեցին:

Այդ մի բառը ամեն բան արտայայտում էր.

աւելի խօսել պէտք չէր: Մի քանի քայլ դարձեալ առաջացան, ես հետևում էի նրանց:

— Ո՞րտեղ էք ապրում, — կրկնեցի:

Կարօն աչքերը բարձրացրեց ինձ վրայ, մի վայրկեան նայեց դէմքիս, կարծես ուզում էր կարգալ նրա վրայ, թէ ինչո՞ւ եմ հետաքրքրւում ես իրենցով, յետոյ ցուցամատը երկարացրեց քամուհակառակ ուղղութեամբ և աչքերը փակելով գըլուխն էլ մեկնեց դէպի առաջ:

— Ապրում ենք, տէս, այն տնու՞մ... է... որ քաղաքի ծայրին է երևում:

Բացի նրա ցուցամատից ոչինչ չկարողացայ տեսնել, որովհետև այդ ըոպէին քամին մի բուռ աւազ ածեց երեսիս:

Մի քանի քայլ էլ անխօս առաջ գնացինք:

— Այս փայտն ինչո՞ւ էք հաւաքել, — խղեցի ես լուռ թիւնը:

— Մայրս ուրիշի համար լուացք է անում, երբեմն էլ թէլ տաքացնում մեզ համար:

Նա լուեց, ձախ ձեռքը մօտեցրեց աչքերին և սրբեց, յետոյ նայեց ինձ ու շարունակեց.

— Առանց փայտի նա ոչինչ չի կարող անել և մենք փող չունինք, որ փայտ առնենք:

Մի քանի քայլ դարձեալ առաջ գնացինք: Քամին սկսեց աւելի շատ աւազ թափել մեզ վրայ: Երեխերքը շատ շուտ փոխում էին իրենց ձեռքերը պարկերի բերաններից բռնելու համար. նրանք դողում էին, և շատ պարզ լսում էի նրանց ատամների իրար խփելուց հանած ձայնը:

— Այնտեղ մեր երկրում փայտ շատ ունէինք, — ասաց լանկարծ Կարօն դողացող ձայնով, — այ՛ն, շատ փայտ ունէինք: Բայց որ զուլումը եկաւ...

Նա հառաչեց և լուեց: Արտասուքի կաթիլներն իրար յետևեց, գլորւում էին դէմքի վրայով և ընկնում էին գետին: Նա ամբողջ ջղերով պրկւում էր: Աւգօն նույնպէս պրկւում էր, ոտի վրայ մնալ չէր կարողանում և մի կերպ քաշ էր գալիս իւր եղբօր շապկի ծայրից բռնած, ահագին պարկը ուսերին զցած: Նա դողում էր, սարսուռ և պարկը ոպառնում էր նրան իւր տակով անել:

— Աղքատութիւնը շատ վատ բան է...

Ես չհասկացայ այդ խօսքերի իմաստը, որովհետև այս ըոպէին կուռում էի քամու դէմ գլխարկս պաշտպանելու համար: Մի քանի քայլ էլ յառաջացանք:

— Այ՛ն, աղքատութիւնը շատ վատ բան է, — շարունակեց նա. — մենք այստեղ, դարիբուժեան մէջ տեսանք աղքատութիւնը, մեր երկրում այսպէս չէր, ձմեռ ժամանակ հազնում էինք բրդէ կապայ և խաղ անում ձիւնի գնդակներով... Երբ որ մրսում էինք վազում էինք տուն և բուխարու առաջ տաքանում:

Նա դարձեալ լուեց և դարձեալ ճիզ դործ դրեց առաջ գնալու համար:

— Այնտեղ ցախ շատ ունէինք:

Քամին ոռնաց, ուժգին խփեց երեխաների պարկերին. Կարօն հազիւ կարողացաւ ինքն իրան ոտի վրայ պահել, իսկ Աւգօն ընկաւ գետին իւր

բեռը հեռի ձգելով:

— Կարճ . . . ճչաց նա:

Կարօն լետ դարձաւ, գրեց իւր բեռը գետին, մօտեցաւ նրան ու հազիւ կարողացաւ նրան ընկած տեղից բարձրացնել: Աւգօն հազիւ կարողանում էր ոտի վրայ կանգնել, կծկւում, կուչ էր գալիս, ձեռները սեղմում էր կրծքին խաչաձև: Նա արտասուալից աչքերը յառեց ինձ վրայ վախկոտ և ամաչկոտ լետոյ նայեց պարկի վրայ:

— Շատ ծանր է, կարողացաւ ասել միայն:

— Ի՞նչ գնահ, ինքս կրբերնմ, — ասացի ես զըլ-խարկս աւելի ցած քաշելով, մօտեցայ պարկին, բարձրացրի գետնից. շատ թեթև էր. վերջրի և ուսիս վրայ գցեցի:

Մի քանի քայլ հազիւ էինք արել, որ պարկը ձեռիցս ընկաւ: Քամին աւազի հատիկները խըփում էր դէմքիս, ձեռքիս. չկարողացայ այդ ցաւը տանել ու բաց թողեցի պարկի բերանը: Քամին ոռնաց, ուժգին խփեց պարկին ու շարտեց մի քանի քայլ այն կողմ: Կանգնեցի, մէջքս տուի քամու հարուածներին մի ըրպէ հանգիստ շունչ քաշելու համար, լետոյ մօտեցայ պարկին ու ծռեցայ, որ վերցնեմ:

Կարօն առաջս կտրեց և ասաց.

— Ո՛չ, պարոն, դու չես կարող տանել, քո ձեռները մրսում են, ես կըտանեմ երկուսը միասին:

Եւ առանց մի բառ ասելու կամ մի շարժում անելու ժամանակ տալու՝ նա աւելացրեց.

— Մենք սովորել ենք սրան . . . բայց այնտեղ լաւ էր, այնտեղ մենք էլ չէինք վերցնում այսպիսի բեռներ, այնտեղ ցախ շատ ունէինք:

— Չէ որ այնտեղ զուլում կայ, այնտեղ չէ որ կոտորում են մարդկանց:

— Երանի մեզ էլ կոտորէին:

Այլևս ոչինչ չասաց նա, դատարկեց, կէս արեց Աւգօյի բեռի և ինքը երկու բեռը միասին շալակած արտասուքի կաթիլներ թափելով սկսեց դարձեալ առաջ գնալ: Աւգօն նրա շապկից բռնած հետևում էր նրան:

Քամին ոռնում էր, ուժգին բախում էր նըրանց մէջքին, բաց էր անում նրանց վարդիկի ճեղքերը, բարձրացնում էր նրանց շապկիը և անընդհատ աւազ ու փոշի էր խփում նրանց երեսներին:



Բ.

Հ Ա Ր Ո Ւ Ս Տ Փ Ե Ս Ա Յ Ո Ւ

(Արդիւր Կէրիմ Սիվաղլը'ից)

Երբ մեռաւ իւր հայրը՝ կօշկակար ուստայ Խա-
լիլը, Ձէմալէն արդէն 17 տարեկան հասած աղջիկ
էր, բայց և՛ այնպէս անմեղ և միամիտ, ինչպէս
իւր բոլոր հասակակից ընկերուհիները, որոնք ապ-
րում էին Եգիւրնէ-Քափուսի արուարձանում փայ-
տաշէն հին ու խարխուլ տների մէջ: Նրանց տե-
սողութեան հորիզոնը լայն չէր, բացի իրենց տնե-
րի առաջ գտնուող փոշիոտ կամ ցեխոտ փողոցնե-
րից կամ այն փողոցների երկու կողմը շինուած
խարխուլ տներից նրանք ոչինչ ուրիշ բան չէին
տեսել, եթէ չհաշուենք այն, որ նրանց տեսողու-
թիւնը զուարճանում էր երբեմն քաղաքի պարիսպ-
ներից դուրս գտնուող անտառային ծառերի խիտ
և սաղարթախիտ գազաթներին նայելով: Կէս ժա-
մուայ հեռաւորութիւն միայն կար իրենց տան և
այն անտառի մէջ, բայց Ձէմալէին այդ թւում էր
շատ ժամանակ և նրա վրայ հէքիաթների ազդե-
ցութիւն էին թողնում բոլոր այն պատմութիւն-
ները, բոլոր այն դէպքերը, որոնք կատարուած է-
ին յիշեալ սաղարթախիտ ծառերի ստորոտին: Ձէ-
մալէն դեռ քաղաքի կենդրոնական շքեղ շէնքերն

ու ապարանքներն էլ չէր տեսել, բայց և՛ այնպէս
նա երջանիկ էր, որովհետեւ առանց դրանց էլ
իրեն շրջապատող աշխարհը շատ լայն էր թւում
իրեն: Նա երջանիկ էր, քանի որ ուստայ Խալիլը
աշխատասէր էր և ամեն երեկոյ շուկայից գալիս
բերում էր իւր հետ ինչ որ պէտք էր «լաւ» ապ-
րելու համար: Պառաւ Հատիջէն էլ պարապ չէր
մնում, երբեմն նա լուացք էր անում, երբեմն
կարկատան և միշտ իւր աչքի լոյս Ձէմալէի հա-
մար քաղցրեղէններ էր գնում, որը նա բաժանում
էր իւր ընկերուհիների հետ: Երջանիկ էր Ձէմա-
լէն և՛ նրանով, որ ազատ անում էր տան մէջ,
ինչ որ քէֆը տալիս էր. թափում էր, լցնում,
շինում, կտրատում և ոչ ոք իրենից հաշիւ
չէր պահանջում: Նա երջանիկ էր և՛ այն ժամա-
նակ, երբ իրենց սենեակի նեղլիկ և ցած պատու-
հանի պտտգամբին լեռնած իւր հայացքով խորա-
սուզուած էր հեռու ծառերի ստուերների մէջ և
աւելի հեռու երկնքի կապուտակ խորութեան մէջ
և երազում, երազում բոլոր այն երանութիւնների
մասին, որոնց արժանանալու էր նա իբրև «լաւ
ասողի» տակ ծնուած աղջիկ: Բացի երջանիկ լի-
նելուց նա հպարտ էլ էր. և ինչո՞ւ հպարտ չպի-
տի լինէր նա, քանի որ հարևան բոլոր երիտա-
սարդները զբաւուած էին նրանով, քանի որ ինքն
զգում էր, որ իւր ներկայութիւնը շատերին բա-
ւականութիւն է պատճառում և կանացի նուրբ
հոտառութեամբ ըմբռնում էր, որ այդ բաւակա-
նութեան պատճառը իւր գեղեցկութիւնն էր: Եւ

նա հպարտ ու վէս և միանգամայն խոնարհ ու հնազանդ ժպտում էր երջանիկ աղջկայ քաղցր, դուրեկան, չարածճի ժպիտով բոլորին, բոլորին: Նա չէր փախչում ոչ ոքից, որովհետև անմեղ էր նա:

Բայց երկար չապրեց նա այդպէս. մեռաւ նըրա հայր ուստայ Խալիլը. պառաւ Հատիջէն չէր կարողանում այլևս միայն իւր աշխատանքով տուն տեղ պահել, և թշուառութիւնը սպառնում էր գալ իւր ամբողջ արհաւիրքներով և թառամեցնել այն միշտ ժպտուն և անմեղ գեղեցկութիւնը, որին պաշտում էին բոլոր հարևան երիտասարդները: Թշուառութեան առաջն առնելու միայն երկու հնար կար, կամ պէտք էր Ձէմալէին մարդու տալ և կամ պէտք էր նրան էլ աշխատեցնել այնպէս, ինչպէս ինքն էր աշխատում. երկու հնարներն էլ Հատիջէին դիւր չէին գալիս: Նրա միակ նպատակը, որ այդքան տարի շարունակ թագցրել էր նոյնիսկ իւր ամուսնուց և իւր աղջկանից էլ, այն էր, որ Ձէմալէին տայ հարուստ մարդու, որպէս զի նա էլ ստիպուած չլինի իրեն նման գիշեր-ցերեկ աշխատել, իւր մատերը ծակել ուրիշ շրեբը կարկատելիս կամ իւր մէջքը կտրել ուրիշ համար շոր լուանալիս: Եւ հարուստ մարդը չկար, թշուառութիւնը սպառնում էր, Հատիջէն մռայլուում էր, Ձէմալէն սկսել էր մտածել, այլևս նա այնպէս ժպտուն չէր, ինչպէս առաջ:

Վերջապէս Հատիճէն մի օր հակառակ սովորականին շատ ուրախ փուն մտաւ բանի տեղից

վերադառնալիս. նրա գէմքը ժպտուն էր և ուրախ: — Գիտես ինչ կայ, աչքիս լոյս, այսօր մի գաւբան է պատահել ինձ, ինչալլահ մեր բաղնիքում ուր շուտ կըբացուի և մենք էլ այնպէս երջանիկ կըլինենք, ինչպէս են նրանք, որոնք իրենց սեպհական ապարանքումն են ապրում, էհ, տեսնում ես այս ծառերից հեռու... —

— Ի՞նչ է պատահել մայր, հարցրեց Ձէմալէն:

— Սենք շուտ պէտք է փոխադրուենք այստեղից. Ն. բէյի կնիկը ինձ վերցրեց իւր մօտ իբրև լուացարարուհի: տալիս է մեզ սենեակ և ճաշ իրենց ապարանքում, որ գտնուում է ծովեզերքին և բուրաստանով ու այգիով է շրջապատուած, մենք այնտեղ կըլինենք աւելի ազատ քան այստեղ, և աւելի երջանիկ, քանի որ շրջապատուած կըլինենք հարուստ ընտանիքներով:

Հատիջէն լուեց, թաշկինակը մօտեցրեց աչքերին իւր ուրախութեան արտասուքը սրբելու համար: Ձէմալէն ոչինչ չկարողացաւ պատասխանել նրան. նա տխրեց և տրտմութեան մառայլը պատեց իւր գէմքը, որ մի լոպէ պայծառացել էր տեսնելով իւր մօրը ուրախ տուն մտնելիս: Ո՛հ, շատ դժուար էր իրեն համար բաժանուել իւր ընկերուհիներից, որոնց սիրել էր իւր մանկական հասակից, իւր հարևանուհիներից որոնց հետ կապուել էր կարծես հարազատների կապերով, իրենց հարևան երիտասարդներից, որոնց տեսքն իրեն բաւականութիւն էր պատճառում, երբ նրանք ինքնագոհ վերադառնում էին իրենց բանատեղերից,

և, որ գլխաւորն է, նա չէր կարող բաժանուիլ իրենց բնակարանի նեղլիք պատուհանից, որտեղից նա նայում էր պարսպից հեռի գտնուող ծառերի գագաթներին և հեռաւոր հորիզոնին և զուարճանում նրանց տեսքով: Իսկ ի՞նչ էր իրեն սպասում այնտեղ... այդ չգիտէր նա. բայց զգում էր, որ այնտեղ լաւ բան չէր կարող սպասել իրեն:

— Միթէ ուրախ չես, որ մենք ազատելու ենք վերջապէս տան վարձի առթած մտատանջութիւններից և դժգոհութիւններից:

— Շատ ուրախ եմ, միայն կարողացաւ պատասխանել Ջէմալէն, փախաւ իւր սենեակը և ամբողջ այդ գիշերը լաց եղաւ:

* *
*

Շատ բարի և սիրալիր կին էր Ն. Բէյի ամուսին Խ. Խանումը: Նա ոչ մի վատ խօսք չէր ասել դեռ Հատիջէին, թէ և նա իրենց մօտ գալուօրից բաւական թերութիւններ ունեցել էր, և մի առանձին հոգածութեամբ էր վերաբերւում դէպի իրենց լուացարարութեան աղջիկը, որ իւր համեստ ու հնազանդ վարք ու բարքով և յափշտակիչ գեղեցկութեամբ շուտով ամբողջ տնեցիների ուշք գրաւել էր, նոյնիսկ Ն. Բէյն էլ հետաքրքրւում էր նրա վիճակով, իսկ երիտասարդ էֆէնդիների համար նա մի տեսակ կէտ նպատակի էր, ուր ձգտում էին բոլոր ուժով:

Երեք հասած որդի ունէր Ն. Բէյը. Մահմուտ, Ալի և Ֆէյզուլահ էֆէնտիները, որոնք բարձրա-

գոյն կրթութիւն ստացած լինելով (հանդերձ, ոչ մի գործի չէին կաշոււմ, եթէ իհարկէ չհաշուէինք այն, որ նրանցից երկու առաջինները քարտուղարների պաշտօնն ունէին իրենց հօր մօտ, որ բարձրաստիճան պաշտօնեայ էր արդարադատութեան մինիստրութեան, իսկ երրորդը առանց ուճիկի ծառայում էր արտաքին գործերի մինիստրութեան մէջ: Նրանք ամբողջ օրուայ ընթացքում երկու ժամ միայն մնում էին իրենց պաշտօնատեղերում, իսկ մնացած բոլոր ժամերին ազատ թրև էին գալիս կանանց լետեից:

Տեսնելով իրենց տան մէջ Ջէմալէին, որի միամտութեան և անմեղութեան մասին չէին կարող կասկածել, երեք եղբայրներն էլ, ի հարկէ առանց իրար մի բան յայտնելու իրենց զգացումների մասին, սկսեցին հետևիլ նրան, Մահմուտ էֆէնտին կատարեալ անասնական վավաշտութեամբ, որ շատ զգուշանք և արհամարհանք ծնեցրեց 17-ամեայ աղքատ աղջկայ սրտում, Ֆէյզուլահ էֆէնտին՝ շատ քիչ եռանդով, իսկ Ալի էֆէնտին կատարեալ քնքուշութեամբ և բարեացակամութեամբ: Ինչպէս ասացինք, Ջէմալէն զգուշեց առաջին եղբօրից, ուշադրութիւն չդարձրեց երկրորդ եղբօր վրայ, և սկսեց խուսափել քնքոյշ և բարեացակամ Ալի էֆէնտիից:

— Ո՛հ, որքան դժուար է ապրել այստեղ, այս շքեղ ապարանքում, մտածում էր շատ անգամ Ջէմալէն ինքնիրեն, կարծես սրանց պարտեզի ծառերը ճնշում են ինձ... մինչդեռ այնտեղ

այսպէս չէր, այնտեղ հայեացքս յամառութեամբ յաւուում էր ծառերի սաղարթախիտ գագաթներին և կարողանում էի նայել երկար, երկար, մինչդեռ այստեղ, չեմ համարձակուում աչքերս գետնից բարձրացնել... Ինչո՞ւ այսպէս է... Ինչո՞ւ... Ինչո՞ւ...

Եւ նա լաց էր լինում շատ անգամ ամբողջ ժամերով նստած իւր մահճակալի վրայ, ձեռների մէջ պինդ բռնած իւր գլուխը:

— Այնտեղ կարողանում էի մարդկանց երեսին էլ նայել համարձակ, այնտեղ մտերմանում էի բոլորի հետ, այնտեղ նոյնիսկ տղամարդկանցից էլ չէի ծածկում իմ դէմքը... Իսկ այստեղ... ո՞չ, ո՞չ, այսպէս ճնշուած, քաշուած, փոքրացած ապրել չի կարելի... պէտք է մայրիկից խնդրեմ, որ հեռանանք այստեղից...

Նա որոշում էր երկու օրը գրեթէ մի անգամ հեռանալ այս նոր աշխարհից, որ իրեն բոլորովին օտար էր, հեռանալ այն մարդկանց շրջանից, որոնց հետ չէր համարձակուում նոյն իսկ խօսել, հեռանալ այն այգուց, որի ծառերի ստուերները նոյն իսկ ճնշում էին իրեն, բայց նա չէր համարձակուում յայտնել դրա մասին մօրը, չէր ուզում ազատուել այն ճնշումի տակից, որ իրեն տանջում և միանգամայն մի ինչ որ յուզող բաւականութիւն էր պատճառում:

* * *

— Երկնքի աստղերը թող վկայ լինին, որ իմ խօսքերը ճշմարիտ են, ես քեզ սիրում եմ Ձէմա-

լէ, թռչնակս, սիրում եմ այնպէս, ինչպէս բլբուլըն է սիրում վարդին, որի գլխավերևին կանգնած նա կէս գիշերալին լուսթեան մէջ երգում է իւր յաւիտենական անխարդախ սէրը: Այս ծառերը, որ սօսափում են մեր գլխին և խորհրդաւոր կերպով փսփսում իրար ականջին, երգում են նոյնպէս այն սէրը, որ ես տածում եմ դէպի քեզ, Ձէմալէ, իմ երկնային հրեշտակս...

Այսպէս էր խօսում Ալի Էֆէնդին լուսնկայ գիշերով պարտեզի աւազանից քիչ հեռի մի ծառի տակ ծունկ չոքած Ձէմալէի առաջ և բռնած նրա ձեռներից: Նրա աչքերը փայլում էին ինչ որ ներքին կրակով և բոցավառուում. նա դողում էր բոլոր մարմնով, նրա դէմքը արտայայտում էր ներքին հոգեկան կռիւ, նրա կուրծքը սկսում էր աւելի անկանոն ու արագ ելևէջներ անել, և նա աւելի ու աւելի էր պինդ սղմում Ձէմալէի ձեռներն իրենների մէջ և քաշում նրան դէպի ինքը: Ձէմալէն էլ յուզուած էր, նա էլ դողում էր ամբողջ մարմնով ամօթից և զայրոյթից, ուզում էր հեռի փախչիլ նրանից, բայց ընդհակառակը մի ներքին ուժից մղուած աւելի ու աւելի էր մօտենում նրան: Ինչ է այս, ինչո՞ւ այս այսպէս է, մտածում էր Ձէմալէն և ոչինչ չէր հասկանում, թէ ինչ է մտածում ինքը, միայն զգում էր որ կուրծքը սղմում է, ճնշում է ինչ որ տարօրինակ ծանրութեան տակ և յորդորում է իւր մէջ մի այնպիսի բան, որի մասին գիտակցութիւն իսկ չունէր մի քանի ամիս առաջ:

— Զէմալէ, հաւատան, թռչնակս, որ սիրում եմ քեզ այնպէս, ինչպէս Քէրիմը չի սիրել Ս.սլուն:

Եւ աւելի ու աւելի էր քաշում նրան դէպի ինքը: Զէմալէն այլ ևս անկարող էր դիմադրել նրան, նա անձնատուր եղաւ հաղիւ լսելի ձայնով մրմնջելով:

— Ստուած է վկայ որ ես էլ քեզ եմ սիրում...

Եւ նրանց շրթները մօտեցան, պինդ սեղմուեցին իրար...

Այդ գիշերը Զէմալէն չկարողացաւ քնել, երկրորդ օրն էլ ամօթահար քաշուած մնաց իւր սենեակում: Նա անհանգիստ էր, նրա կուրծքը ամենից շատ այժմ էր ճնշում, բայց ոչ այնպէս խիստ, ինչպէս առաջ, այլ մի տեսակ քնքոյշ ու զեղուն զգացումների տակ: Նա խուսափելով հանդերձ Ալի-էֆէնդիից սիրել էր նրան, այդ սէրը յուզել ու տանջել էր իրեն մի քանի ամիս շարունակ, և յուսահատութեան էր հասցրել իրեն այն միտքը, թէ երբէք Ալի-էֆէնդին, այն հարուստ կնոջ տղան, որին ծառայում էր իր մայրը, չի կարող սիրել իրեն նման մի աղքատ աղջկայ: Խեղճ Զէմալէն ամիսներ շարունակ մտածել էր վճռելու համար այն հարցը, թէ ինքը լսւ է անում, որ սիրում է Ալի-բէյին, և առանց այդ հարցը վճռել կարենալու, նա արդէն անձնատուր էր եղել նրան, այդ օտար մարդուն, որը նոյն իսկ իրեն չէր համբուրել:

Եւ Զէմալէն շառագնում էր, սպրտնում մի քանի օր շարունակ, երբ չիշում էր իրենց խոստո-

վանութեան ընկալի մասին: Նա ուզում էր վախճել, կորչիլ այդ տեղից, բայց չէր կարողանում, նա բոլոր հոգով ձգտում էր այդտեղ մնալ, մնալ իւր սիրած էակին շատ մօտ և միշտ... լաւիտեան...

Հատիճէն, տեսնելով իւր աղջկայ տրամադրութեան մէջ եղած փոփոխութիւնը, իսկոյն գուշակեց, որ մի բարդ և միանգամայն ուրախալի բան է տեղի ունեցել իւր աղջկայ կեանքի մէջ, այլապէս ինչո՞ւ նա տանջւում է և ժպտում միանգամայն, աւելի ջարդուած է և արագաշարժ է միանգամայն: Նա դիմեց մի քանի օր լետոյ իւր աղջկան և նրանից հարցրեց, թէ ինչ է պատահել նրան:

Զէմալէն սկզբում խուսափում էր նրան անկեղծ պատասխաններ տալուց, բայց շուտ տեղի տուեց նրա լամառ հարցապնդումների ու հայացքի առաջ և խոստովանուեց անկեղծութեամբ այն բոլորը, ինչ որ տեղի էր ունեցել իւր և Ալի-էֆէնդիի մէջ:

— Ո՛հ, այդ կատարեալ երջանկութիւն է ասաց ժպտելով Հատիջէն և գրկեց նրան, առաջին քայլը արուած է... աշխատիր... աշխատիր առաջ գնալ:

Զէմալէն ոչինչ չպատասխանեց, նա կարմրեց մինչև ականջները և երեսը ծածկեց ձեռներով:

* * *

Երեք ամիս լետոյ Զէմալէն յղի էր, Խ. Խանումը զայրացած այդ անպատուութեան հանդէպ իւր տնից դուրս արեց նրան իւր մօր հետ միասին և նրանք չգիտեմ ինչ եղան:

Գ Ի Չ Ե Ր Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ձմեռնային մի շատ հանդարտ գիշեր էր. կիսալուսինը մեղմ փայլում էր պարզ, վճիտ, կիսախաւար երկնքում. աստղերն իրենց կարմիր լույսը ձգել էին ջրի հանդարտ ալիքների մէջ ու սչրում էին նայողի երեսին ամալի ամեն մի շերտի ետև ծածկուելով կամ դուրս գալով: Քամի չկար, ձայն չկար: Կէս գիշերն անց էր. թատրոնից տուն էի վերադառնում: Ճանապարհս երկար էր, բայց զուարճալի. իմ ձախ կողմը տարածւում էր մութ լայն ծովային տարածութիւնը, որ իւր մեղմիկ ալիքներով փսփսում էր ծովեզերեայ քարերի մէջ, գալիս խփում էր քարափներին և դարձեալ յետ քաշում ու շփշփում, օրօրում: Ծովը գեղեցիկ էր մանաւանդ նրանով, որ իւր փոքրիկ ալիքների վրայ պար էր անում կիսալուսնի կաթնանման լույսը. այդ լույսն ամբողջովին անդրադարձել էր ջրի մէջ և այդ խաւար տարածութեան մէջ հեռուն փայլփլոզ ելեքտրական լույսերի շողքերի հետ կազմում էր օրօրուող փանտաստիկ լույսերի մի փունջ: Ծովեզերեայ փողոցի ձախ կողմը բարձրացող բարձր ու հարուստ տների բոլոր պատուհաններն ու դռներն երկտակ փակուած էին և հազիւ այդ տը-

ների շարքին հարիւրաւոր պատուհաններից մէկի յետև լույս կարելի էր նշմարել: Մի քանի տեղ ճանապարհի երկայնքը մեծ ելեքտրական լամպերով էին լուսաւորուած, իսկ հասարակ նաւթային լապտերները սիւների վրայ ցցուած փոքրիկ շատ խորհրդաւոր լույս էին սփռում իրենց շուշր: Ես շատ բանգաղ էի առաջանում մտքի ընթացքի մէջ խորասուզուած, աչքերս ծովի մութ տարածութեան յառած, ականջ տալով ալիքների մեղմ շնչիւնին, որ շատ պարզ լսում էր գիշերուայ այդ լուռութեան մէջ: Այդ լուռութիւնն երբեմն միայն խառնակում էր հարեան փողոցներից արագ սլացող կառքերի անիւների ձայներով, որ լսում էին մի քանի րոպէ, ապա լուռ, կորչում, անհետանում խաւարի մէջ: Ետ ճանապարհ ունէի գնալու, բայց գիշերն այնքան խորհրդաւոր էր, այնքան մեղմօրօր, որ աւելի ու աւելի ուշ էի ուզում տուն հասնել, մանաւանդ որ ուզում էի աւելի երկար ժամանակ մենակ մնալ թատրոնում ստացած սպաւորութիւնների հետ, որոնց պիտի կորցնէի, հէնց որ տուն հասնէի. ընթրիքի ըսպասելիս կըլինէին տանը, մի քանի նկատողութիւններ կանէին ուշ վերադառնալուս առթիւ և տրամադրութիւնս կըվատանար: Ոչ ոք չկար փողոցում, ծովի վրայ կային նսւեր, որոնց կայմերի վրայ վառուող ելեքտրական լույսերը նոյնպէս խորհրդաւոր կերպով անդրադառնում էին ծովի ջրերի մէջ և դողում, օրօրում: Քնած քաղաքի գործարանական կեանքը չէր քնած միայն. հեռուից խուլ որոտումի նման

Հասնում էր գիշերային օդի այդ յստակութեան միջից իմ ականջին տանջուող, օրն ի բուն քրտնող երկաթեայ մեքենայի տնքոցը: Ինչէր չէ պատմում այդ տնքոցը այդ հանդարտ ժամուն, երբ մեռելները լուռ փսփսում են, երբ քամին մեղմիկ է սուլում, երբ ծովը հանդարտ է ծփում. այդ տրնքոցը բանող ձեռքի յաւիտենական բողոքն է, հարստահարող ձեռքի յաւիտենական հրամանը. այդ տնքոցը շատ յոյսեր է խորտակում, շատ զղեակներ է կառուցանում. քանի՜ քանի մարդկանց տնքող այդ մեքենան զրկել է աշխատելու ընդունակութիւնից, քանի՜ներին է ալլանդակել, իսկ քանի՜ներին թռցրել օդի թևերով և բարձրացրել շատ վեր: Այդ մեքենայական տնքոցին լաւ արձագանք է տալիս գիշերապահը իւր հաստ կրունկաւոր կօշիկներով, որ նոյնպէս տնքում է հարուստ փողոցի ճօխ քարապինդ սալալատակներին խփուելով. այդ տնքոցն էլ շատ երազներ է խանդարել, շատ իրականութիւններ է խորտակել: Եւ այդ բոլորը մի փոր կուշտ հաց ուտելու համար: Անցնում եմ լամպի սիւների մօտով, անցնում ելեքտրական լամպերի տակից, որոնք բարձրից իրենց շքեղ լուսով ողողում են ինձ ամբողջ հասակով, անցնում գիշերապահների մօտով, որոնցից ոմանք յօրանջում են մի պատի տակ կուշ եկած, մէջքը պատին դէմ արած, ոմանք քայլում են իրենց սառած անդամները տաքացնելու համար, ոմանք էլ կանգնած որևէ փողոցի անկիւնում ականջ են դնում ուշադրութեամբ հեռում կամ

մօտիկ լսուող ոտնաձայներին:

Վերջապէս հասել եմ մի ահագին տան առաջ, որի ճակատը լուսաւորուած է գիշերային կիսալուսնի և ելեքտրական լամպերի հարուստ լուսով: Տունը հոյակապ է, բարձր, լուսամուտները բոլորը պինդ կողպուած, ո՛չ մի ձայն չի լրսւում, միայն փողոցում լսում է գիշերապահ-պահապանի համաչափ քայլերի ձայնը ասֆալտի մայթերի վրայ: Այդ տան դիմացը մի բաւական նեղ ու մութ փողոց կար, իմ ճանապարհն այդտեղից էր. հարուստ տան ճակատը լուսաւորող հպարտ լամպը քիչ լոյս էլ արձակում էր և՛ այդ փողոցի մէջ: Մութ թէ լոյս, իմ ճանապարհն այդ էր, և ես մտայ ու մի քանի քայլ առաջացայ այդ փողոցում:

Յանկարծ ուրուականի նման մի բան ցցուեց առաջիս: Մի բոպէ վախեցայ, անզգայաբար լետ քաշուեցի և բնազդաբար նայեցի առաջս դուրս եկող էակի վրայ:

Դա մի կին էր և ո՛չ ուրուական, մի շատ թշուառ կին: Նա իւր մերկութիւնը ծածկել էր մի մաշուած քրքրուած ձմեռնային կանացի վերարկուով. վերարկուն պինդ կոճկուած էր. նրա տակից դէպի ցած մի շրջագետտ, նոյնպէս հնամաշ հասարակ չթից, ծածկում էր նրա մարմնի մնացած մասը: Ոտերին երևում էին մինչև սրունքները հազիւ ծածկող շրջագետտի տակից տղամարդու բաւական մեծ կօշիկներ, իսկ գլխին ունէր մետաքսեայ զոլզոլ շատ բարակ մի թաշկի-

նակ, որի ծակերի միջից դուրս էին եկել իւր ճերմակախառն սև մագերը. ձեռին կրում էր սև կաշեայ ձեռնոցներ. հովանոց էլ ունէր: Նրա դէմքը արտայայտում էր կատարելապէս լքում և զգուանք: Աչքերը չունէին մի առանձին փալլ. նրանք անկենդանութիւն էին արտայայտում, բայց և՛ այնպէս այդ արտայայտութեան մէջ կար ինչ որ արգահատանք հրաւիրող, միւսնոյն ժամանակ և յետ մղող բան: Գիմագծերը ցցուած էին և դէմքի երակները շատ պարզ երևում էին բարակ սիպտակ մորթի տակից: Ճակատն ու դէմքը ամբողջովին թոռմշտկել էին: Բոլոր այս մանրամասնութիւններըն ես նկատեցի հէնց առաջին ընդհանրական լամպի լուսով, երբ ընդհանրական երկիւղից յետոյ նրա երեսը նայեցայ և հայացքս յառեցի քրննական կերպով նրա ոտից մինչև գլուխը: Նա յետ քաշուեց մի քալլ իմ հայացքի առաջ, յետոյ մօտենալով ինձ շատ մեղմ, գրեթէ անլսելի ձայնով ասաց.

— Այս գիշեր ուտելու ոչինչ չունեմ, կզանս ինձ հետ:

Մի անբնական դող անցաւ ամբողջ մարմնովրս. յուզուեցի և վախեցայ: Նրա ձայնը գերեզմանի խորքից էր լսւում կարծես: Կանացի ոչինչ չկար այդ ձայնի մէջ, նոյն իսկ առնական էլ ոչինչ չկար, ձայնն էլ ալլանդակուել էր, ինչպէս դէմքը: Նա մի քանի անգամ դարձրեց ձեռքի մէջ հովանոցի կոթը, հովանոցը ինքնիր վրայ շուռ եկաւ, յետոյ նայեց երեսիս և ժպտել փորձելով ա-

ւելացրեց.

— Վաղուան էլ ոչինչ չունեմ ուտելու, կզանս ինձ հետ այս գիշեր:

Զգուանքի, զայրութի և երկիւղի մի շարժում արեցի և ուզեցի առաջ անցնել նրանից ու շարունակել ճանապարհս: Նրա ժպիտը սպանիչ էր, օձի ժպիտից աւելի թունաւոր. նրա շրթներն այնպէս ծալուեցին կարծես, գիշերային այդ խաւարի մէջ կատաղած կատուի ակնարկի ձև ստացան, և դէմքը ծամածուռեց գերագոյն ցաւից: Զայնը հնչւում էր նոյնպէս մեղմ և օտարօտի հնչիւնով, իսկ հովանոցը միշտ շուռ էր գալիս ինքնիր վրայ կոթը միշտ իւր տիրուհու ձեռներէ մէջ: Նրբ նա զգաց, որ հեռանում եմ, դարձեալ առաջս կտրեց և երրորդ ու վերջին անգամ ասաց.

— 30 կոպէկ վճարիր, եկ ինձ հետ այս գիշեր:

Մի քալլ առի հեռանալու համար, նա աւելի մօտեցաւ և մի վայրկեան դէմա-դէմ եկանք: Նրա շունչը զգացի ինձ շատ մօտ: Ո՛հ, ինչ զգուելի էր... Իսկ շորերից, ամբողջ մարմնից բուրում էր մի տեսակ գաղջացած քըրտնքահոտ: Նա ժպտում էր շարունակ, դէմքը ծամածուռում և խօսում էր իրար յետևից ու կրկնում.

— Ոչինչ չունեմ այս գիշեր ուտելու, ոչինչ չունեմ վաղուան ուտելու.

Զեռս գրպանս տարայ. 50 կոպէկանոց մի դրամ միայն ունէի, հանեցի և տուի: Վերցրեց, շնորհակալութիւն յայտնեց, յետոյ հարցրեց, թէ չեմ ուզում արդեօք իւր հետ գնալ, և երբ բա-

ցասական պատասխան ստացաւ, յանկարծ խոնարհուեց առաջս, պինդ սեղմեց ձեռքս, լետոյ համբուրեց, որի ժամանակ զգացի, որ ձեռքս լծրջուեց: Նա լաց էր լինում զէմքը նոյնպէս ծամածուռում էր, հայեացքը մեղմացաւ, իսկ ձայնն աւելի անախորժ էր հնչում: Մի ընդհանուր շշուկով նայում էի նրան. նրանից բուրոյ հոտը աւելի խոր էի շնչում. թոքերս անհանգիստ էին: Նա, մէկ էլ տեսայ, վերջին անգամ ձեռս համբուրեց ու արագ փորձեց հեռանալ. մի քանի քայլ դեռ չէր առել, տասը անգամ լետ դառաւ, լետոյ դարձեալ շարունակեց գնալ:

Բաւական տեղ գնացել էր և ծուռում էր մտակայ փողոցը, երբ կայծակի արագութեամբ ինձանում ծագեց նրան հետեւելու, նրա բնակարանը և նրա կարիքների չափը ճանաչելու հետաքրքրութիւնը, մանաւանդ որ այն ժամանակ տեղական բարեգործական ընկերութեան վարչութեան մօտ էի: Մի քանի քայլ առի նրա գնացած ուղղութեամբ և հէնց որ ծուռեցի փողոցի անկիւնը՝ նըշմարեցի նրան, որ գնում էր նոյն քայլերով, ինչ քայլերով որ իմ մօտից հեռացել էր: Նա բարձրանում էր երկու լայն գետինների մէջ տեղ ձգուող սանդղաձև մի փողոցով, որի գլխին երևում էր տների մի բազմութիւն, ուր երբէք լոյս չէր նըշմարում: Նա լետ նայեց ճանապարհի կէսը բարձրանալուց լետոյ: Լուսնի աղօտ լուսով ինձանից բաւական բարձր երևացող ցնցոտիների մէջ փաթաթուած այդ կինը նոյն ընդհանուր իմ մէջ ծնեց-

րեց շատ քնքոյշ զգացումներ: Նա այլևս զգուելի չէր երևում: Ինձ տեսնելուն պէս կանգնեց: Մի քանի վայրկեան լետոյ իւր մօտ էի: Նա հուռ էր անբնական կերպով և իւր շնչի հետ դուրս էր տալիս բերնից մի շատ անախորժ հոտ:

— Գալիս ես ինձ մօտ. հո, ասաց նա իւր թունաւոր և տգեղ ժպիտով ծամածուելով զէմքը:

— Ես գիտէի, որ պիտի գաս. մինչև այժմ չի կտնուել մի մարդ ինձ շրջապատող այսքան մարդանոց մէջ, որ ինձ ձրի փող տուած լինի. բոլորն իրենց տուած փողի փոխարէն ինձանից սէր են պահանջել:

Մի ընդհանուր ոչինչ չպատասխանեցի, մտածեցի նոյն իսկ լուռ լետ դառնալ, բայց երբ մի անգամ իւր մօտ էի, պէտք էր իմանալ նրա պատմութիւնը, ուստի հարցրի.

— Անունդ ինչ է:

— Մաշա:

— Գնանք ձեր տունը, Մաշա: Հեռո՞ւ է:

— Այո՛, բաւական հեռու, սակայն հոգ չէ, այնտեղ քեզ համար այնպիսի ընթրիք կը պատրաստեմ, այնպիսի տեղեր կը շինեմ, որ յոգնածութիւնըդ կը մոռանաս, չէ՞, որ ես արդէն լիտուն կուպէկ ունեմ: Ի հարկէ լետ չես առնիլ, հո:

— Ո՛չ:

Գնում էինք միասին, բարձրանում սանդղաձև այդ փողոցով: Բաղաքը մեր լետուր հետզհետէ աւելի ցածանում էր: Ծովը սկսեց դարձեալ երեւալ: Ելեքարական լամպերի լոյսերը խաղում էին

Տոլի մէջ ցոլացած լուսնի լոյսի հետ: Հեռուն,
գործարանական քաղաքը տնքում էր գիշերային
այն լուսթեան մէջ մեծ երկունքի ցաւերով, որոնց
լուսաւորում էին նոյնպէս ելեքտրական լամպեր:
Լուսինը մերթ թագնւում, մերթ երևում էր եր-
կնքի երեսին, աստղերը ցոլում էին պայծառ: Մա-
շան բարձրանում էր հետզհետէ աւելի ծանր շքն-
չելով և աւելի դանդաղ քայլերովը նա շատ ան-
գամ թիկն էր տալիս իւր հովանոցին, որ փայտի
տեղ էր ծառայում այժմ, և հատ աւ կտոր բաւեր
էր ասում իրար յետեից: Վերջապէս կանգնեց փո-
ղոցի մէջտեղ, ծանր շունչ քաշեց, սկսեց հեալ:
Մենք հասել ենք քաղաքից բաւական հեռու
գտնուող արուարձանի առաջին տներին:

Դեռ շատ ճանապարհ ունենք ձեր տունը
հասնելու, Մաշա:

Սյո, շատ, պատասխանեց նա յուսահատ և
բողոքող ձայնով ու լռեց: Դեռ կանգնած էինք:
Շունչ էի քաշում հանդարտ ու խոր և մտիկ էի
անում ընկերուհու վրայ: Բաղդը կճրող է աւելի
վատ հանաք անել մէկի հետ քան սրա հետ: Ինչ-
պէս յոգնած էր, ինչպէս շնչասպառ էր դառել.
երևում էր, որ թոքերն առողջ չէին. նա նոյն իսկ
հազում էր, և օրուայ այդ ուշ ժամին նա դեռ
իւր բնակարանը չէր հասել:

— Սյա թաղում գրպանահատներ, գողեր շատ
կան, գուցէ լսած կըլինես, ասաց նա մի քանի
րոպէ շնչելուց յետոյ: Սակայն մի վախենար, քեզ
ոչ ոք ոչինչ չի անել, այստեղ բոլորն ինձ ճանա-

չում են և ով որ ինձ հետ է, նա արդէն պաշտ-
պանուած է:

— Որովհետև գիտեն, որ քեզ հետ եղողն էլ
քեզ նման կըլինի, խեղճ կին, մտածեցի ես, թէ և
նա հպարտացաւ իւր բոլոր գիմագծերով նրա հա-
մար, որ ինքն էլ կարող է պաշտպանել ուրիշնե-
րին: Բուպէական լուսթիւնից յետոյ ասացի.

— Գնանք, արդէն ուշ է:

— Գնալ չեմ կարող այլ ևս, շատ յոգնած եմ:

Ուզում ես, քիչ նստենք, հանգստանանք:

Եւ, առանց ինձանից պատասխանի կամ հա-
մաձայնութեան սպասելու, ճիշ գործ դրեց նստե-
լու. ոտերը փռեց, յետոյ ծալեց, մէջքը պատին
տուեց, յետոյ ուղղուեց վերջապէս իւր վրայ դար-
ձեալ ահագին ճիգ գործ դրեց ու վերկացաւ:

— Շատ կուշանանք, պէտք է շտապել, իսկ
ես չեմ կարող գնալ, ասաց նա ճնշուած ձայնով
և աչքերը արտասուակալեցին: Վայրկենական լը-
ուսթիւնից յետոյ նա աւելացրեց:

— Թեղ տո՛ւր ինձ և գնանք:

Եւ թեւր անց կացրեց բազկիս ու սկսեց ինձ
քաշ տալ:

— Որքան վատ են հոտում շորերդ պը՛խկ,
հեռացիր:

Նա բաց թողեց մեքենայաբար թեւս, նայեց
երեսիս ու մի քայլ յետ քաշուեց, նայեց երկրորդ
անգամ երեսիս և սկսեց բարձրանալ փողոցով հո-
վանոցին ոյժ տալով:

Ինչո՞ւ են հոտում շորերս, ասում էր նա

գնալով և վանկ-վանկ արտասանելով բառերը: Ո՞վ է ասում, որ շորերս հոտում են: Մի ժամանակ սակայն չէին հոտում: Վաղուց անցել են այդ ժամանակները:

Լսում էի նրան առանց պատասխանելու և դանդաղ քայլերով հետևում էի նրան մտքովս միշտ կրկնելով՝ գնալ մինչև նրա բնակարանը թէ՛ յետ դառնալ:

Երբեմն կանգնելով, երբեմն հեւալով, երբեմն իմ օգնութեան դիմելով երկար գնում էր. վերջապէս կանգ առաւ մի ցանկապատի առաջ, յայտնեց, որ իւր բնակարանն այդ է և ցանկապատի վրայից անցնելով մտաւ բակը: Ես էլ նոյնն արեցի: Իմ առաջ տարածուեց մի ընդարձակ գետին խորդուբորդ մակերևոյթով: Այս ու այն կողմ երևում էին աղբի թմբեր, այս ու այն կողմ գետինը քանդուած էր, փորուած, և լուսնի լուսով երևում էր բակի ծայրին, գետնից քիչ բարձր մի կիսապատ: Մաշան դիմեց կիսապատի կողմը: Նա երբեմն ցածանում էր, երբեմն բարձրանում նայած գետնի խորդ ու բորդութեան, երբեմն խօսում էր հետհետ, երբեմն էլ կանգնում ու նայում երեսս:

— Մօտեցանք, մօտեցանք, մի քանի քայլ էլ և կըլինինք մեր տանը կրկնում էր նա:

Ես անձայն հետևում էի: Վերջապէս հասանք կիսապատին. ծուռեցինք քիչ դէպի աջ, մի նոր պատի առաջ կանգ առանք. Այս նոր պատը նոյնպէս կիսաշէն էր, բայց ունէր պատուհանների և դռների տեղեր: Ինչպէս երևում էր, այս պատերը

բաւական ժամանակից ի վեր բարձրացած էին և այժմ կիսատ սպասում էին բանոյ ձեռքերի, որ մի քանի վերջով էլ շարի իրենց վրայ և առաստաղը գցի: Այն ժամանակ երկու սենեակից բաղկացած մի տուն կդառնար, ուր բնակուել կարելի կլինէր, մինչդեռ այժմ ներսը բացօդեայ, պատերը կիսաշէն, քարքարոտ ու հողոտ՝ բնակութեան համար բոլորովին անյարմար էր, բայց և այնպէս Մաշայի բնակարանն այդ էր: Մտնելով երկրորդ սենեակը նա վառեց տպակին կոտրուած մի շատ փոքր լապտեր, որ աղոտ լոյս սփռեց իւր չորս կողմը: Մի անկիւնում կար հնամաշ փոշոտ և խոնաւցած թաղիքի մէջ փաթաթուած մի բան: Մաշան խսկոյն դիմեց դէպի այդ և բաց արաւ. թաղիքի միջից դուրս եկաւ մի շատ կեղտոտ երեսով դոշակ և բրդեայ մի վերմակ, որի երեսի գոյնը դժուար էր որոշել, այնքան մաշուած էր. բացի դրանցից, թաղիքի մէջ փաթաթուած էին և մի քանի շորի կրտորներ, բոլորը նոյնպէս կեղտոտ, ինչպէս անկողինը. բարձի նման մի բան էլ կար, կային և՛ հազիւ տասն ատամ ունեցող մի սանր, ափի չափ փոքր մի հայելի, կէսը թափուած գլխի մի խոզանակ և կանացի կօշիկի մի գոյգ, որից մէկը բոլորովին հագնել չէր լինել, իսկ միւսի երկար կրունկը չափազանց ծուռած սպառնում էր հագնողի ոտը չարչարել: Մաշան փռեց տեղերն ու ինձ հրաւիրեց նստելու: Ես ապուշ ու յուզուած նայում էի շուրջըս, նայում էի կիսաշէն պատերին, խորդ ու բորդ յատակի վրայ թափուած հողին, կիտուած քարե-

րին, հեռու անկիւնում երևացող ջրի կժին, որի գլուխը կոտրուել էր, նայում էի կեղտոտ տեղաշորերին և կեղտի մէջ թաթախուած այդ թշուառ կնոջ, որը տենդային շարժումներով իւր հիւրի համար նստելու քիչ թէ շատ յարմար տեղ էր պատրաստում:

— Սմեն գիշեր այստեղ ես քնում, հարցրի ես հազիւ համարձակուելով լսելի անել տալ ձայնս. վախենում էի նրա պատասխանից: Նա կարող էր աւելի մեծ թշուառութեան, մասին խօսել, այն ժամանակ ես պիտի փախչէի ալդտեղից, պիտի փախչէի շատ հեռու:

— Մի ամիս աւելի է, որ այստեղ եմ գիշերում. սրա տէրը մի օղբատ մարդ է, որ պարտքով շինել է այս տունը մի քանի ամսից առաջ և այսպէս կիսատ է թողել, որովհետև այլևս միջոցներ չի ունեցել շարունակելու. մի քանի գիշեր նրանից ծածուկ տեղաշորերս բերում ու այստեղ էի գիշերում...

Նա շնչասպառ լռեց, յետոյ նստեց տեղաշորերի վրայ և խոր շունչ քաշելուց յետոյ շարունակեց.

— Մի օր վերջապէս տան տէրն ինձ նկատեց. առաւօտը չէի կարողացել ըստ սովորականին մըթնուլուսին վեր կենալ ու շալակելով տեղերս հեռանալ. ամբողջ գիշերը քաղցած էի մնացել և տեղիցս շարժուել չէի կարողանում: Նա տեսաւ ինձ պառկած, մի քիչ հայհոյեց, նեղացաւ, թևիցս բռնեց ու տեղիցս դուրս քաշեց, մի քանի հատ էլ

խփեց, բայց երբ իմացաւ, որ ես իրեն ոչ մի վնաս չեմ տալ ինձ հրաւիրեց իւր տանը, թէյ տուեց, հաց տուեց և թոյլատրեց այստեղ ապրել մինչև միջոցներ կունենայ և կը շարունակի այս տունը շինել ու վարձու տալ: Սյժմ գէթ այդ ցաւից ազատուել եմ, մնում է միայն հացի մասին մտածել, այն էլ երբեմն ձեզ նման բարի մարդիկ տալիս են:

Գրեթէ նրան չէի լսում, խոնաւութիւնը սկսել էր ինձ վրայ ազդել. նոյն իսկ սկսեցի մրսել, կարծես յանկարծ մերկացրին վրայիցս վերարկուս. պինդ կոճկուեցի, ձեռներս դրի գրպանս: Նա շարունակում էր.

— Շատ վատ են մարդիկ այստեղ, նոյնիսկ հորի աղի ջուրն էլ ձրի չեն տալիս. տեսնում ես այն կուժը, երկու կոպէկով են լցնում, շաբաթը մի անգամ եմ լցնել տալիս և գիտես ի՞նչ դժուարութեամբ, լուանալու համար ջուր չեմ գործածում, նոյնիսկ չեմ լուացում, ամեն օր առաւօտ երեկոյ թէյ եմ պատրաստում այդ ջրով, բայց և՛ այնպէս չեմ կարողանում փող հասցնել:

Նա շատ բաներ պատմեց դեռ, ընթերցող, որը կը պատմեմ ձեզ իմ «Ուրուանկարներ»-իս յաջորդ գլուխներում: Սուսյժմ այս ասեմ, որ ուշ ժամանակ հեռացայ նրա մօտից:



Գ.

ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օտար էր քաղաքը, օտար էին մարդիկ և ես զրանց մէջ իզուր փնտռում էի մի կարեկից իմ թշուառութեան ձմեռուայ այդ ցուրտ օրերին, իմ թշուառութեան, որը աւելի էր շեշուում օրուայ տօնական բնաւորութեան հանդէպ: Ծննդեան ծրագալոյցի ժամերգութիւնը վերջացել, եկեղեցու դռները փակուել և իւրաքանչիւր երջանիկ մարդ շտապել էր արդէն իւր տունը իւրայինների հետ տօնելու Փրկչի աշխարհ գալու օրուայ լիշատակը, և ես դեռ փողոցումն էի: Ոչ մի տեղ չունէի գիշերելու և գրպանումս միայն 20 կոպէկ ունէի: Օտար էր քաղաքը, օտար էին մարդիկ, և ես ո՛չ ոքի չէի ճանաչում այդտեղ:

Խաւարը պատել էր շուրջս. օդը ցուրտ էր, մի շատ փոքր քամի սուր կտրում էր: Ես անպատակ թափառում էի քաղաքի կեղրոնից հեւի գլուխուող փողոցներում: Հարուստ քաղաքի ճոխ և ջրքեղ տները, հարուստ քաղաքի փայլուն և հարուստ գիշերային ելեկտրական լուսավառութիւնը ինձ ճնշում էին, ինձ ճնշում էին նոյնպէս և՛ մութ ու նեղ փողոցների ծուռումուռ տներից լսուող ուրախութեան ձայները: Ամեն տեղ տների դռներն

ու պատուհանները պինդ կողպուած էին. ամեն տեղ տիրում էր գիշերային ճնշող, սառնեցնող լուռութիւն, որ երբեմն խառնակուում էր խմբական երգերի բուռն թափով լուսամտների փեղկերի արանքներից դուրս թռչող ձայներով: Ես լսում էի, ես շնչում էի ցուրտ օդը և արագ արագ թափառում էի մտորմունքների մէջ ընկղմուած: Մի քանի ժամ շարունակ ո՛չ մի մարդու երես չտեսայ բացի գիշերապահներից և ոստիկաններից, որոնք ման էին գալիս իրենց պահակատեղի մայթերի վրայ քամու գրտութիւնը քիչ մեղմելու համար: Կրանց վիճակն էլ ծանր էր, այն, բայց ո՛չ իմ վիճակի չափ, չէ՛, որ նրանք ունէին բարձր կրնկաւոր և մինչև ծնկները հասնող կօշիկներ, տաք վերարկու, ոչխարի մորթուց և հասարակ բրդից թէև, բայց վերարկու, որ պահում էր իրենց կենդանական ջերմութիւնը իւր նորմալ աստիճանի վրայ. նրանց ձեռներին բրդեայ կամ մորթու ձեռնոցներ կային և գլխներին փաթաթել էին բրդեայ շալեր կամ բաշլիղներ, իսկ ես ոչինչ չունէի. կօշիկիս տակը այնքան բարակ էր, որ շատ որոշ զգում էին ոտերս սառցացուրտ փողոցի գրտութիւնը, վերարկուս ծակծկուած, պատառոտուած էր մի քանի տեղերից, և քամին ազատ մտնում էր մարմնիս մէջ ու սարսուռ առաջացնում այնտեղ. ձեռներս դրած էի գրպաններումս և երբեմն երբեմն մօտեցնելով շրթներիս ջանում էի շնչով տաքացնել. գլուխս ցաւում էր և ես քայլում էի, թափառում:

Յանկարծ ես ինձ գտայ քաղաքի կենդրոնա-

կան տներին մէկի առաջ: Ելեքտրական հսկայ լապ-
տերը լոյսը սփռում էր չորս կողմը և միացնելով
իւր լոյսը ուրիշ լապտերների լոյսի հետ գիւրու-
թիւն էր տալիս ինձ տեսնել մաքուր ծառագարդ
փողոցի երկու կողմը հպարտութեամբ բարձրացող
հոյակապ տների ճակատները: Այդ շքեղ լուսավա-
ռութեան առաջ մի ըուպէ կանգնեցի շշկուած, և
ինձ թուաց, թէ ոչինչ չեմ տեսնում շուրջս և գի-
տակցութիւնս կորցնում եմ քիչ քիչ: մտքերիս թե-
լը կտրուեց և սկսեցի աւելի ուշադրութեամբ նա-
յել շուրջս, ահանջ դնել քամու հանած աղմէին.
նա զարկում էր ծառերի մերկ ճիւղերին իրար, և
դուրս էր բերում մի հակասական, վայրենի ներ-
դաշնակութիւն հոյակապ տներից լսուող ուրախ
քրքիջների և նուագածութեան ձայների հետ: Մի
քանի ըուպէ շարունակ լսում էի և նայում շուրջս
գամուած կանգնած միևնոյն տեղը, երբ աչքովս
ընկաւ մի էակ ինձանից մի քանի քայլ հեռի գլու-
նուող մի հոյակապ տան դրան լայն սանդուղտի ա-
տիճաններից մէկի վրայ: Մի ներքին ուժ ինձ մը-
ղեց դէպի նա: Տեսնելով նրան ես հիասթափու-
եցի առաջուայ շքեղ տեսարանի առաջ, կանգնեցի
իրական կեանքի հողի վրայ և ցանկացայ ունենալ
մի տաք տեղ և մի քիչ հաց: Միայն օրուայ այդ
ժամին և այդ ցրտին դուրս մնացած մի էակից
կարող էի խնդրել այդ բանը. ուրիշի հանգիստը
վրդովելու իրաւունք չունէի: Եւ մօտեցայ:

Բայց... մի՞թէ թշուառութիւնը կարող է այդ-
քան սոսկալի լինել:

Տեսայ ինձ յոյս ներշնչող էակին. դա մի կին
էր, աւելի լաւ էր ասել մի ուրուական, մի կմախք:
Նա կանգնած էր շքեղ տան շքեղ դրան սանդուղտի
շքեղ աստիճանի վրայ և անմտութեամբ աչքերը
յառել էր մի անորոշ կէտի դիմացի տան պատի
վրայ: Հագած էր պատառոտուած մի շրջագետս,
որի ծուէնները հարիւրաւոր կարելի էր հաշուել,
ոտերը գրեթէ մերկ էին, մատերը կօշիկների ա-
րանքից դուրս էին ընկել, իբրև վերնագգետս նա
հագել էր տղամարդու մի բաճկոն, որը պատուու-
ած չէր թէև, բայց բոլորովին դեղնած, գունա-
փոխուած էր, ձևն էլ քիչ այլանդակուել էր. գըլ-
խին ունէր բրդեայ մի քանի տեղերից ծակձկուած
շալ, իսկ ձեռին կրում էր ձեռնոցներ, սրանք նոյն-
պէս մաշուած մղմղուած էին: Նրա գէմքը գունատ
էր, հայեացքը մեռած, մէջքը կորացած: Նա դու-
րում էր ամբողջ մարմնով և նայում էր միշտ մի-
ևնոյն կէտին: Հեռուն կանգնած մի քանի ըուպէ
նայում էի նրան, նա ինձ չնշմարեց սկզբում, իսկ
երբ նշմարեց, դողաց անբնական սարսուռով, նա-
յեց երեսիս և մօտեցաւ ինձ: Մի քանի վայրկեան
նա ոչինչ չասաց, մօտս կանգնած չէր համարձակ-
ւում ինձ վրայ նայել և դողում էր ամօթից ու
ցրտից:

— Ի՞նչ ես ուզում, հարցրի նրան ես էլ իմ
կողմից դողալով և ճիգ գործ դնելով ինձ վրայ, որ
ձայնս չդողայ: Նրա թշուառութեան տեսքը ահա-
բեկող էր:

— Երեխաս քաղցած է, պարո՞ն... ողորմութիւն

արձ, պարոն: Երեխաս քաղցած է, պարոն, այս տօն օրը քեզ օգնական լինի: Երեխաս քաղցած է, պարոն: Ողորմութիւն արձ, պարոն:

Նրա ձայնը խօսելիս դողում էր, և նա միշտ գետնին էր նայում:

Որքան դառն է ծաղրում բաղդը մարդուն: Ես ուրիշի օգնութեան էի կարօտ այդ ցուրտ օդից պաշտպանուելու համար, քնելու տեղ չունէի, քաղցած էի և տպագաս չափազանց անորոշ, նոյնիսկ պատրաստուում էի այդ կնոջից տեղ խնդրել գիշերելու համար, և ահա նա, այդ թշուառ կինն է իմ օգնութիւնը խնդրում, այն էլ հարուստի երկլարկանի շքեղ լուսաւորուած, հոյակապ ճակատով ապարանանման տան առաջ:

— Ողորմութիւն արա, պարոն, երեխաս քաղցած է. պարոն:

Ելեքտրական լապտերն իւր փայլուն, դողդոզացող լոյսը թափում էր յորդութեամբ նրա վրայ և այդ լուսով ողորուած նրա թշուառութիւնը միանգամայն արգահատելի էր թւում ինձ: Սակայն ինչ կարող էի անել այդ թշուառութիւնը ամօքելու համար, ինչ ունէի նրան տալու, միմիայն 20 կոպէկ: և ես 24 ժամից աւելի էր, որ ոչինչ չէի կերել, ո՛չ մի տեղ չունէի քնելու, գուցէ երկրորդ օրը դիակս կը մնար քաղաքի լետ ընկած մի փողոցում առանց այդ 20 կոպէկի:

— Երեխաս քաղցած է, պարոն, այս օրուայ տօնը ձեզ օգնի, պարոն:

Նա միշտ գետնին էր նայում և դողում էր

շարունակ: Երկար չտատանուեցի, աչքերս լցուեցին արտասունքով, սիրտս սկսեց ճնշուել, յետոյ յորդեց մի տեղակ աներևակայելի բաւականութեամբ, և վերջին 20 կոպէկս դրի թշուառ կնոջ ձեռի մէջ ու արագ քայլերով հեռացայ, առանց նոյնիսկ ըստպասելու, որ նա ինձ շնորհակալութիւն յայտնի: Մի քանի քայլ հեռուից դեռ լսում էի խեղճ կնոջ օրհնութիւնները: Երբ պիտի ծռուէի մօտակայ փողոցի անկիւնը, լետ նայեցի և տեսայ նրան, որ նոյն տեղը կանգնած է: Սիրտս յորդեցնող բաւականութեան յաջորդեց կրծքիս տակ մի գերեզմանային ճնշում և կանգնեցի ու մէջքս տուի պատին: Ոտերս ապստամբուում էին ինձ պահել, և ես օրօրում էի հարբածի նման: Ինչո՞ւ, ինչո՞ւ տուի ես իմ վերջին կոպէկը նրան, նա մի մուրացիկ, նա կարող էր թակել մէկի դուռը նոյնիսկ գիշերուայ այդ ժամին և հաց խնդրել, այն, նա այդ կարող էր անել, մինչդեռ ես. — քաղցած մեռնելու վտանգի մէջ գցեցի ինձ: Նա առաւօտեան կը գնայ, կը կանգնի եկեղեցու դրան առաջ և շատ փող կը հաւաքի. — մարդիկ վաղուան օրն առհասարակ առատաձեռն են լինում, — նա այնքան կը հաւաքի, որ ամբողջ մի ամիս իրեն կը բաւականացնի, մինչդեռ ես... երեք օր, տօնի այդ ուրախութեան երեք օրերին քաղցած պիտի մնայի: Գուցէ նա իւր տանն, աւելի շատ բան ունի քան ես: Վերջապէս իմ վիճակն աւելի թշուառ էր նրա վիճակից, ինչո՞ւ տուի նրան իմ վերջին յոյս ու ապուէնս: Յետ դառայ, ուզում իմ վերջին յոյս ու ապուէնս: Յետ դառայ, ուզում էի գնալ և լետ պահանջել նրանից տուածս, իսկ

արձ, պարոն: Երեխաս քաղցած է, պարոն, այս տօն օրը քեզ օգնական լինի: Երեխաս քաղցած է, պարոն: Ողորմութիւն արձ, պարոն:

Նրա ձայնը խօսելիս դողում էր, և նա միշտ գետնին էր նայում:

Որքան դառն է ծաղրում բաղդը մարդուն: Ես ուրիշի օգնութեան էի կարօտ այդ ցուրտ օդից պաշտպանուելու համար, քնելու տեղ չունէի, քաղցած էի և ապագաս չափազանց անորոշ, նոյնիսկ պատրաստուում էի այդ կնոջից տեղ խնդրել զիշերելու համար, և ահա նա, այդ թշուառ կինն է իմ օգնութիւնը խնդրում, այն էլ հարուստի երկլարկանի շքեղ լուսաւորուած, հոյակապ ճակատով ապարանանման տան առաջ:

— Ողորմութիւն արա, պարոն, երեխաս քաղցած է. պարոն:

Ելեքտրական լապտերն իւր փայլուն, դողդոզացող լոյսը թափում էր յորդութեամբ նրա վրայ և այդ լուսով ողորուած նրա թշուառութիւնը միանգամայն արգահատելի էր թւում ինձ: Սակայն ինչ կարող էի անել այդ թշուառութիւնը ամօքելու համար, ինչ ունէի նրան տալու, միմիայն 20 կոպէկ: և ես 24 ժամից աւելի էր, որ ոչինչ չէի կերել, ո՛չ մի տեղ չունէի քնելու, գուցէ երկրորդ օրը դիակս կը մնար քաղաքի լետ ընկած մի փողոցում առանց այդ 20 կոպէկի:

— Երեխաս քաղցած է, պարոն, այս օրուայ տօնը ձեզ օգնի, պարոն:

Նա միշտ գետնին էր նայում և դողում էր

շարունակ: Երկար չտատանուեցի, աչքերս լցուեցին արտասուներով, սիրտս սկսեց ճնշուել, յետոյ յորդեց մի տեղակ աներևակայելի բաւականութեամբ, և վերջին 20 կոպէկս դրի թշուառ կնոջ ձեռի մէջ ու արագ քայլերով հեռացայ, առանց նոյնիսկ ըստպատելու, որ նա ինձ շնորհակալութիւն չայտնի: Մի քանի քայլ հեռուից դեռ լսում էի խեղճ կնոջ օրհնութիւնները: Երբ պիտի ծռուէի մօտակայ փողոցի անկիւնը, լետ նայեցի և տեսայ նրան, որ նոյն տեղը կանգնած է: Սիրտս յորդեցնող բաւականութեան յաջորդեց կրծքիս տակ մի գերեզմանային ճնշում և կանգնեցի ու մէջքս տուի պատին: Ոտերս ապստամբում էին ինձ պահել, և ես օրօրում էի հարբածի նման: Ինչո՞ւ, ինչո՞ւ տուի ես իմ վերջին կոպէկը նրան, նա մի մուրացիկ, նա կարող էր թակել մէկի դուռը նոյնիսկ գիշերուայ այդ ժամին և հաց խնդրել, այն, նա այդ կարող էր անել, մինչդեռ ես. — քաղցած մեռնելու վտանգի մէջ գցեցի ինձ: Նա առաւօտեան կը գնայ, կը կանգնի եկեղեցու դրան առաջ և շատ փող կը հաւաքի. — մարդիկ վաղուան օրն առհասարակ առատաձեռն են լինում, — նա այնքան կը հաւաքի, որ ամբողջ մի ամիս իրեն կը բաւականացնի, մինչդեռ ես... երեք օր, տօնի այդ ուրախութեան երեք օրերին քաղցած պիտի մնայի: Գուցէ նա իւր տանն, աւելի շատ բան ունի քան ես: Վերջապէս իմ վիճակն աւելի թշուառ էր նրա վիճակից, ինչո՞ւ տուի նրան իմ վերջին յոյս ու ապաւէնս: Յետ դառայ, ուզում իմ վերջին յոյս ու ապաւէնս: Յետ դառայ, ուզում էի գնալ և լետ պահանջել նրանից տուածս, իսկ

եթէ չուզենայ վերադարձնել իմ 20 կոպէկս, այն ժամանակ ես զօրով կիսլէի նրա ձեռից իմ հարստութիւնը: Մի քանի քալլ առի, լոյսը նոյնպէս ճօխ էր, տների ճակատները նոյնպէս ցցուած էին հրպարտութեամբ, ծառերի ճիւղերը նոյնպէս իրար էին դիպչում քամու հարուածների տակ: Կանգնեցի: Միթէ նա կարող էր այնքան թշուառ չլինել, որքան ինձ թուաց առաջին րոպէում: Ո՛չ, ո՛չ, նա խաբել չէր կարող, նրա որդին քողցած էր, այլապէս նա գիշերուայ այդ ժամին դուրսը չէր լինիլ: Եւ ինչպէս էր ամաչում, երբ խնդրում էր ողորմութիւն անել իրեն: Նա մուրալ իսկ չէր իմանում: Իսկ որ նա ինձանից աւելի թշուառ էր, դրան ասելիք չկար: Նրա երեխայի թշուառութեան հանդէպ ես պարտաւոր էի իմը մոռանալ, նոյնիսկ ինձ մոռանալ, և ես իմ պարտականութիւնը կատարեցի: Վերջին զգացողութիւնս իմ սիրտը դարձեալ յորդացրեց բաւականութեամբ, և արագ արագ հեռացայ քաղաքի այդ շքեղ փողոցից ու սկսեցի դարձեալ թափառել լետ ընկած, մութ ու ծուռումուռ փողոցներում: Եկաւ սակայն մի ըրպէ, երբ պահանջ զգացի հանգստանալու: Նստեցի մի տան դրան առաջ քաղաքի ամենահեռի մի ծայրում և սկսեցի լաց լինել: Ոչ ոք չկար փողոցում, որ ինձ լսէր, եթէ լսող իսկ լինէր, չէի քաջուիլ, չէ՛, որ շատ պատճառներ ունէի լաց լինելու:

Չգիտեմ որքան տևեց այդ: Նոյն իսկ ցուրտն էլ չէի զգում ես:

Յանկարծ մէկը մօտեցաւ ինձ և կանգնեց ինձ

շատ մօտ: Աչքերս լառեցի նրա վրայ մի ըրպէ շշկուած մնալուց լետոյ: Նա էր, այն թշուառ կինը կամ նրա ուրուականը: Իսկոյն վեր թռայ նստած տեղիցս և մէջքս պատին կրթնցնելով երկրորդ անգամ նայեցայ նրան: Նրա դէմքը շատ պայծառ էր, թէև որոշ անհանգստութիւն էր արտայայտում, այդ նկատեցի ես մեզ շրջապատող խաւարի մէջ աւելի պարզօրոյ: Նա բռնած ունէր իւր ձեռին մի կտոր սև հաց և թղթի մէջ փաթաթուած ինչ որ ուրիշ բան:

— Ինչո՞ւ ես լալիս, հարցրեց նա ինձ կատարեալ հոգածութեամբ և ուղիղ նայեց երեսիս:

Չպատասխանեցի իսկոյն, շփոթուել էի ամօթից, երկիւղից և բարկութիւնից: Նա միայն նայում էր ինձ: Վայրկենական լուութիւնից լետոյ ասացի.

— Ի՞նչ ես անում այստեղ, չէ՞ որ այժմ երեխադ այլ ևս քաղցած չէ:

— Քո շնորհիւ նա հաց կուեննայ այսօր, այն, տես, ահա տանում եմ: Նրա համար պակսիմատ էլ եմ գնել, որքան ուրախ պիտի լինի, եթէ նա տեսնէ այս բոլորը: Նա քնած է, հազիւ կարողացայ քնեցնել, մի ձայն հաց էր բղաւում, ինչպէս սիրտս մղկտում էր նրա տանջաքները տեսնելով: Հիմա կըգնամ, կըզարթեցնեմ նրան. կըտամ նրան պակսիմատները, նա կուտի, լետոյ հաց կըտամ, լետոյ կըզրկեմ, կըտաքացնեմ. օրօր կասեմ, դարձեալ կըքնի: Այս տօն օրը քեզ օրհնի, պարոն, Աստուած քեզ էլ օգնութեան հասնի քո նեղ

օրին:

Նա շարունակում էր դեռ խօսել, թէև նրան չէի լսում: Ես նայում էի նրա դողացող հասակին, նրա մերկ ոտներին, նրա նիհար կմախքանման մատներին, նայում էի և՛ գետնին, և դիմացի տան պատուհաններին և փողոցի մէջ տեղ կուտակուած սառած ցեխի բլրակին: Եւ նա խօսում էր դեռ, խօսում էր երկար: Վերջապէս լռեց ու երեսս նայելով հարցրեց ըոպէական լուսթիւնից լետոյ.

— Բայց դու չասացիր, ինչո՞ւ էիր լալիս:

Նրա դողացող ձայնը աւելի քան հոգածու շեշտ ունէր և շատ լաւ էր ներդաշնակուում իմ կուրծքը ճնշող, իմ սիրտը յուզող, իւր ոսկրային պատերը խորտակելով դուրս յորդեցու ձգտող զգացումներին: Յուզումը ինձ դողացնում էր ամբողջ մարմնովս, իսկ նա շարունակում էր.

— Գուցէ դու օտարական ես և այս մեծ քաղաքում չունես ոչ մի մարդ, որի մօտ կարողանալիր գնալ: Այդ շատ վատ է, եղբայր. շատ վատ:

Նա լռեց, նայեց երեսիս և շարունակեց.

— Շատ դժուար է մենակ լինել, լինել հեռի ծնողներից, բարեկամներից: Մարդիկ վատացել են, գազան են դառել, ապրելու համար մարդ պարտաւորուած է առաւօտից մինչև երեկոյ շան նման աշխատել շատ չնչին վարձատրութեամբ, մի օր չես բանում և արդէն քաղցած ես: Վեց ամսից ի վեր լուացք եմ անում, շատ հարուստ տներում եմ լինում, ինձ վճարում են շատ քիչ, առարկելով որ երախաս խանգարում է ինձ բան անելիս, նրան

ծեծում են իրենց երեխերքը, և ես այդ բոլորը տանում եմ առանց ծպտուն հանելու, յուսալով որ իմ կատարեալ խոնարհութեամբ կարող կըլինեմ մի բան աւելի ստանալ: Մի կտոր քուրջ, մի կտոր պանիր իսկ չեն տալիս: Շատ վատացել են մարդիկ, ապրել դրանց մէջ անկարելի է:

Նա կրկին լռեց, աչքերը սրբեց ու աւելի դողաղջուն ձայնով հարցրեց.

— Օտարական ես, հա:

Զպատասխանեցի դարձեալ: Նա մի ըոպէ լռեց. այդ ժամանակ շատ պարզ լսում էի նրա ատամների իրար խփուելուց հանաց անխորժ ու քստմնեցնող ձայնը, նա դողում էր, ոտի վրայ կանգնել չէր կարողանում և բռնեց ձեռքս իւր ազատ մնացած ձեռքով ու ասաց.

— Շատ ցուրտ է, գնանք մեզ մօտ, այնտեղ մի կերպ տաքանալու միջոց կըճարենք:

Ես ապշած նայեցի նրա դէմքին: Նրա դիմագծերը ձգւում էին, ամբողջ մարմինը պրկւում էր, կուչ գալիս, նա աւելի ու աւելի էր դողում, շնչով իզուր ջանում էր տաքացնել իւր ձեռները, և ատամներն աւելի յաճախ էին բաղխում իրար:

— Դու օտարական ես. այո՞, այդ տեսնում եմ, ոչ մի տեղ չունես գնալու, գուցէ փող էլ չունես ծախսելու և ես վերջին կոպէկդ առայ ձեռքիցդ: Եթէ իմանալի, որ այդպէս է... ափսոս, որ ծախսել եմ... 5 կոպէկ է մնացել, ուզում ես լետ տամ:

Նրա աչքերը լեցուեցին արտասուենքով:

— Ի՞նչ եմ ասում, շարունակեց նա, գնանք մեզ մօտ, մրսած կըլինես, թէլ կըխմենք կըտաքանաս:

— Իսկ դ՞ու... չէ, որ... այլի ես, հարցրի անվտաճ ձայնով:

— Այլի եմ, այ՛ո...

— Ո՛չ մի տղամարդ չկայ ձեր տանը:

— Ո՛չ, ասաց անվտաճ ձայնով ու լռեց:

Եւ կարմրեց ու շփոթուեց:

— Ուրեմն անհարմար է գալ ձեզ մօտ:

— Աստուած գիտէ, որ իմ սիրտը մաքուր է, դու տուեցիր ինձ քո վերջին կոպէկները, ես էլ պարտաւոր եմ տալ քեզ մի տաք օթեւան, ուր կարողանաս անցկացնել այս գիշեր, մանաւանդ որ այդ օթեւանը տաք պիտի լինի քո գնած ածուխով: Գնանք, եղբայր, գնանք. ես շատ եմ մրսում, գընանք, Սահակս էլ գուցէ վեր կացած՝ այժմ ինձ է փնտռում, գնանք և կըտեսնես թէ նա որքան խելօք է, սրամիտ ու սիրուն:

Յուրտը հետզհետէ աւելի զգալի էր լինում, ես դողդողում էի աւելի սաստիկ, այլևս ինձանում ջերմութիւն չէի զգում, որ կարողանամ դիմանալ քամու բզի նման ծակող հարուածներին: Անձայն համաձայնուեցի, սեղմեցի նրա ձեռը և անամուր քայլերով սկսեցինք գնալ դէպի նրանց տան կողմը:

Կէս ժամ յետոյ մոռացել էինք արդէն այդ գիշերուայ ճնշող ազդեցութիւնը. կրակարանում ածուխ բաւականաչափ կար, դէմ դէմի նստած ես ու նա երկար խօսում էինք մեր անցեալի մասին.

շատ բանով էր նման իմ անցեալը նրա անցեալի հետ. իսկ ներկան, որ մեզ հանդիպեցրեց իրար, մի տխուր պատկեր էր, որի մէջ նկարուած էր շատ որոշ իմ դէմքը նրա դէմքի հետ իրար շատ մօտ: Այդ օրից մենք իրար սիրեցինք և որոշեցինք ապրել ու տանջուել իրար հետ մինչև մեր մահը:

Եւ ճիշտ է, որ մարդիկ մեր միութիւնը ապօրինի համարեցին:



Ե.

Բ Ա Ր Չ

Շատ չար ու բարի օրեր էի տեսել, բայց այդ տարուայ նման ձախորդ տարի ինձ չէր հանդիպել: Եօթը ամսից ի վեր պաշտօն չունէի. ինչ թանկագին բան որ ունէիք տանը, ստիպուած եղանք ծախել ու հացի տալ, և եկաւ մի օր, որ այլ ևս ոչինչ չունէիք ուտելու, ոչինչ էլ չունէիք ծախելու: Կնոջս օդն ու մատանին վազուց գրաւ էին գրուած իմ մօտ ազգականներից մէկի մօտ, Վահանիկիս և Շուշանիկիս կնուների խաչերը կէս գնով ծախուել էին մի ոսկերչի, որ մեր հարսանիքի օրը ամենից շատ գինի խմեց ու զուարճացաւ և մինչև այդ խաչերը գնելու օրն էլ մեզ բարեկամ էր: Իմ ժամացոյցը, իմ շորերը, երեխաներիս վերարկուները հետզհետէ հնավաճառի միջոցով տօնավաճառ ուղարկուեցին. նոյն իսկ կնոջս ներքին շորերից մէկը վաճառուեց մեզ հարևան մի գաղթական կնոջ 12 կոպէկի փոխարէն: Եւ ես դեռ պաշտօն չէի ճարել, ֆիզիքական աշխատանքի էլ ընդունակ չէի, որ կարողանայի գէթ ցամաք հաց ուտեցնել կնոջս և երեխաներիս:

Չորս տարի չկար ամուսնանալս և արդէն ես էլ կինս էլ պառաւել էինք ու մոռացել սէրն ու իւր բաւականութիւնը. մեր երկուսի միտքը կենդրոնացած էր միայն մի բանի վրայ, այն է՝ այնպէս անել, որ եռամեայ Վահանը և միամեայ Շուշանիկը քաղցից չմեռնեն: Եւ որովհետև չէի կարողանում մի յարմար պաշտօն ճարել, գնում էի շատ անգամ բեռներ վերցնելու կամ փոքր առևտրական գործերի համար միջնորդութիւն անելու, որ կարողանամ մի քանի կոպէկ ստանալ: Յաճախ էլ դիմում էի տասը-քսան մարդու պարտք առնելու համար, բայց ոչ ոք չէր ցանկանում մի բան տալ, որորհետև բոլոր ծանօթներս գիտէին, որ բաղդիս անիւր շուռ է եկել մի անգամ և ուղղել նրան շատ դժուար էր: Երբեմն յուսահատութիւնըն ինձ հասցնում էր հիւանդութեան, և յաճախ որոշել եմ գնալ ինձ ձգել ծովը մի անգամ ընդ միշտ ազատուելու համար ինձ տանջող հացի խընդրից, բայց ո՞ւմ թողնել, ո՞ւմ վստահանալ իմ սիրելի մանուկներին, որոնք առանց որբ մնալու էլ արդէն շատ զրկանքներ էին կրում, հապա ինչ պիտի պատահէր իմ մահից յետոյ նրանց, ո՞վ տիրութիւն կանէր. արդեօք իմ այլին յուսահատութեան, գերագոյն խելագարութեան մի ըուպէին չէր թողնիլ նրանց երեսի վրայ և չէր գնալ իւր սիրած որևէ տղամարդու հետ ապրելու: Իրաւ է այդ կը լինէր անբարոյական, բայց և բնական բան: Նա ինչո՞վ էր մեղաւոր, որ իմ կինս էր դառել, ինչո՞վ էր պարտական իմ երեխաների, ինձ հետ իւր

անցկացրած տխուր կեանքի լիշատակների համար ինքն իրեն առ միշտ զօհել: Ո՛չ, ես կապրեմ, կրկնում էի յաճախ, մեր սարսափելի թշուառութեան մէջ երկու հոգով աւելի շուտ կարող ենք մեր երեխաներին խնամել ու մեծացնել, քան մէկ հոգով: Այո՛, այո՛, ես կապրեմ:

Եւ իսկապէս ինչքան լաւ է ընկեր ունենալ և միթէ ամենալաւ ընկերը նա չէ, որ թշուառութեան մէջ է ընկերանում մարդուս:

Կինս ինձ սիրում էր. նա սիրում էր և մեր երեխաներին և սկզբում թէև դժուարութեամբ բայց հետզհետէ ընտելացաւ մեր թշուառ դրութեանն ու սկսեց ինքն էլ աշխատել, որպէսզի կարողանայ մեր ծախսերի բեռը թեթեւացնել: Բայց իսկապէս ինչ կարող էր լինել նրա ինձ հասցրած օգնութիւնը, մանաւանդ որ երեխաներով էլ ծանրաբեռնուած էր, և եթէ նոյնիսկ նիւթական մի քիչ թեթեւութիւն տալիս էր ինձ նրա օգնութիւնը, զրա փոխարէն էլ ինձ բարոյական տանջալի յուզումներ էր առթում: Նա կար անել չէր իմանում, գիտէր այնքան, որ կարող էր իւր երեխաների համար մի ձեռք սպիտակեղէն կարել, և իհարկէ չէր կարող նա իւր ուժերը փորձել կարելում, որ անհամեմատ աւելի մաքուր և հանգիստ գործ էր համարում նա իրեն համար, քան լուացք անելը: Եւ նա լուացք էր անում: Ակամայ պարտաւորուած էի ես յաճախ տանը մնալ և երեխաներին պահել, որպէսզի նա կարողանայ գնալ հարուստների տները լուացք անելու: Շատ անգամ էլ

նրան կեղտոտ շորեր էին բերում տանը լուանալու համար, իսկ ես էլ պարտաւորուած էի լինում նրա լուացածը արդուկել: Թէ առաջին և թէ երկրորդ դիպուածներում ես ինձ չափազանց նուաստացած էի զգում, մանաւանդ երբ կինս իւր աշխատութեանց արդիւնքը ինձ էր տալիս տան համար ուտելեղէն գնելու, իսկ յուսահատութիւնը և զգուանքն ինձ խեղդում էին երբ լուանալու շոր տուողներից ոմանք, յանդուգն, անպատկառ երիտասարդներ իհարկէ, գալիս էին իրենց մաքրուած սպիտակեղէնները տանելու ու փողը վճարելիս հէնց իմ ներկայութեամբ կնոջս լիտի ակնարկութիւններ էին անում, ինձ էլ գիմում էին անհաճոյ հանաքներով: Ես յուզւում էի, կատաղում, բայց ոչինչ չէի համարձակում ասել կամ անել նրանց, վախենալով իհարկէ, որ այլևս իրենց կեղտը չեն տալ մեզ մաքրելու և մեր երեխերքը քաղցած կը մնան: Շատ անգամ էի անիծում Վահանիկիս և Շուշանիկիս. եթէ նրանք չլինէին, վաղուց հեռացած կըլինէի մի այլ քաղաքում բաղքս փորձելու:

Բաղբիս անիւր ծուրել էր սակայն և աւելի ու աւելի ինձ դէպի անդուռնքն էր տանում:

Կինս չը կարողացաւ դիմանալ Ֆիզիքական այնքան ծանր աշխատութեանց. նա հիւանդացաւ և այլևս անընդունակ էր մի բան անելու. միայն ինձ էր մընում հոգալ չորս մարդու համար սընունդ, իսկ պաշտօն ինձ համար դարձեալ չէր ճարում:

Ամառնային մի տաք օր էր: Մենք ապրում

էինք կիսակործան մի տան մէջ, քաղաքի կենդրոնից հեռու մի փողոցում, աղբալի մի բազում: Արևը սաստիկ այրում էր: Կիրակի օրուայ ազատութիւնից օգտուելով կէս օրուայ մօտ մեր հարևանները բոլորը քնած էին կամ մտած էին իրենց սենեակները, նրանց խոնաւութեան ուժով արևի կիզիչ ջերմութիւնը մեղմելու համար: Մեր շուրջը տիրում էր մեռելային հանդարտութիւն, միայն մեր հարևան պատշգամբում տախտակեայ մահճակալի վրայ ընկած մի քարտաշ երգում էր տիտական մի շատ տխուր մելօդիս: Մեր տանն էլ լռութիւն էր տիրում, ճնշող, սպանող լռութիւն, որը ոչ ոք մեզանից չէր կամենում խանգարել: Կինս նստած էր խոնաւ, տախտակները փտած յատակի վրայ և կարում էր արագ արագ հին կտաւից քառակուսի մի բան, նա կարում էր, քանդում էր, դարձեալ կարում, դարձեալ քանդում. տենդային յուզումով էին շարժւում նրա ձեռները: Նրա կողքին նստած էին Վահանիկն ու Շուշանիկը որոնք անձայն կրօնաբանութեան էին ու ծծում մէկ մէկ շաքարի կտոր. նրանց երկուսի երեսն էլ չափազանց կեղտոտ էին, քիթները խլնքոտ, կրծքները իւղոտ, ձեռները նոյնպէս իւղոտ, շորները պատառոտուն և մազները խճճուած: Ոչ մի ձայն ծպտուն չէին հանում նրանք, թէև երեկ առաւօտուց սկսած քաղցած էին:

Ես նստել էի երեք ոտնանի մի հին աթոռի վրայ, որի նստատեղը կիսով չափ թափուած էր, մէջքս էի տուել խոնաւ գաջաների պատին և լուռ

ու անշարժ նայում կնոջս ու երեխաներիս: Նրանց պէս ես էլ էի քաղցած, բայց ես էլ ոչինչ չէի համարձակւում ասել:

Լռութիւնը հետզհետէ աւելի անտանելի էր դառնում: Շատ պարզ լուռում էր մեր իւրաքանչիւրի շնչառութիւնը, թէև բոլորս էլ մի տեսակ սպասողական դրութեան մէջ ջանում էինք, ճիգ դործ դնում մեզ վրայ, որ ծանր ու մեղմ շնչէնք: Բազում կիսաբաց դռնից երևում էր աղբակոյտը, ուր թափում էին կենդանի իրենց կերածի մնացորդը. այդտեղ տղտղում ու այլևայլ զուգահեռական, խաչաձև, ուղղահայեաց, շրջանաձև պտոյտներ անելով բարձրանում և իջնում էին ճանճերն ու ճանճիկները: Գետինը և գետնի վրայ գտնուող քարերը ջերմութիւն էին արտաշնչում, կարծես կրակ էր թափւում երկնքից: Գիմացի կտուրի տակ մի ճնճողակ բոյն էր շինել և այդ բոյնի շուքում, իւր ձագուկների մօտ ցանկանում էր քիչ հովանալ, բայց չարածճի ձագուկների մարմինների ջերմութիւնը չէր թոյլ տալիս նրան մի բոպէ հանգիստ մնալ և նա մուտ ու ել էր անում, բունից դուրս էր բերում ձագուկներին, փաղաքում, հանաքներ անում, թուցնել փորձում ու դարձեալ բուն դնում նրանց:

Ես նայում էի նրանց, նայում էի ճանճերի յօրանջող դանդաղաշարժ խմբին, նայում էի աղբակոյտին և նայում էի իմ կնոջ ու երեխաներին առանց ոչինչ ասելու: Իսկ կինս շարունակ կարում էր ու քանդում, կարում էր ու քանդում, երեխա-

ները վերջացրել էին իրենց շաքարի կտորները և հարցական, աղերսական հայեացքով նայում էին իրենց մօրը: Նրանք էլ լուռ էին մեզ նման: Միայն լուռթիւնը խանդարւում էր պատշգամբում, տախտակեայ մահճակալի վրայ պառկած քարտաշի մեղմիկ երգով, որ աւելի քան յուզիչ էր:

— Ի՞նչ ես կարում, վերջապէս չկարողացայ զսպել ինձ, դիմեցի կնոջս. ինչո՞ւ ես քեզ այդքան չարչարում:

Երեխաներն երեսըս նայեցին ու նրանց աչքերը լցուեցին արտասուքով: Ի՞նչ մտածեցին կամ զգացին այն անմեղ փոքրիկները, որ լաց եղան, չգիտեմ, միայն գիտեմ, որ իմ և կնոջս աչքերն էլ արտասուակալեցին:

Կինս նայեց երեսիս և ոչինչ չպատասխանեց:

— Ի՞նչ ես կարում, ինչո՞ւ ես քեզ չարչարում այդպէս. կրկնեցի ես:

— Ուզում եմ բարձի երես կարել, մեր բարձի փետրի կէսը ածել նրա մէջ և ծախել, ոչինչ էլ չտան, 20 կոպէկ հօ կտան: Երեխաները քաղցած են և տանը ոչինչ չկայ, որ նրանց տամ:

Նա ձեռքի կարած կտորով սրբեց աչքերը և շարունակեց.

— Գէթ մի քանի սուխարի լինի, նրանց խաբով կանեմ:

Նա լուեց, խորը հառաչեց, ծալեց կարածը և առանց ինձ նայելու աւելացրեց.

— Ես էլ եմ քաղցած, 24 ժամից աւելի է, ոչինչ չեմ կերել:

Ոչինչ չպատասխանեցի: Կուրծքս ճնշւում էր, գանկս անհանգիստ էր, դողում էի յուզումից, երկիւղից ու ամօթից: Վերկացայ տեղից մի քալ աւելի մօտենալու համար կնոջս, բայց չկարողացայ աւելի առաջ գնալ, ընկայ թախտի վրայ և փռուեցի հասակիս ամբողջ երկարութեամբը: Յանկանում էի լաց լինել, բայց ամօթն ինձ լուեցնում էր:

— Մայրիկ, հաց, ասաց Վահանիկը և նայելով մօրը երեսին բռնեց նրա ձեռից, սկսեց քաշել, նրա թևը գրկել, գլուխը մօտեցնել նրա ձեռներին: — Մայրիկ, հաց եմ ուզում, քաղցած եմ:

Մայրը գրկեց, համբուրեց նորան, կրծքին սեղմեց և դարձեալ ցած դրաւ առանց ոչինչ ասելու: Այդ ժամանակ Շուշանիկն սկսեց լաց լինել ամբողջ ձայնով և իւր վրայ գերբնական ճիգ էր գործ դնում, որ կարողանայ մօր գիրկը բարձրանալ: Մայրն այս անգամ նորան վերցրեց, մօտեցրեց կրծքին, հանեց ստինքը, դէմ արաւ նրա բերնին: Երեխան բռնեց ստինքը մի քանի անգամ բռնոր ուժով ծծեց, թողեց ստինքը, հանեց մի մեծ աղաղակ, դարձեալ բռնեց ստինքը, դարձեալ սկսեց ծծել: Վահանը մօտեցաւ ինձ, բարձրացաւ թախտի վրայ, նստեց կողքիս ու ժիլետիս կոճակների հետ խաղալով սկսեց զբաղուել, երբեմն երբեմն մեքենայաբար «հաց, հաց» կրկնելով: Շուշանիկը շարունակում էր ծծել, բաց թողնել մօր ծիծը, լաց լինել, դարձեալ ծծել, իսկ մայրը գերագոյն յուսահատութեան մէջ էր:

— Ամբողջ բարձը կը ծախեմ, դերեաս կը ծա-

խեմ, նոյն իսկ շապիկս կը ծախեմ, միայն կարողանամ իմ երեխաների ձեռքը մէկ մէկ պաքսիմատ տալ:

Կինս վեր կացաւ, երեխային ձգեց ինձ մօտ թախտի վրայ և առանց նրա արտասուելուն ուշադրութիւն դարձնելու խլեց գլխատակիցս բարձնու գուրս գնաց:

Ես էլ չփորձեցի լռեցնել Շուշանիկին, ականջներս փակեցի նրա ձայնը չլսելու համար: Վահանին հեռացրի կողքիցս, դրի ցած և պատուիրեցի, որ խաղ անի քրոջ հետ: Նա հասկացաւ, որ ինձ հետ խօսել աւելի չէր կարելի, հեռացաւ մահճակալի մօտից և կիսաբաց դռնով դուրս գնաց սենեակից: Շուշանիկը լռեց մի քանի րոպէ բարձր ձայնով գոռալուց յետոյ և սկսեց իւր շուրջը նայել:

Մի քանի րոպէից կինս վերադարձաւ: Նա շատ լուզուած էր, նա դողում էր բոլոր մարմնովը, իսկ երեսին գոյն չէր մնացել: Շուշանիկը նրան տեսնելուն պէս սկսեց դարձեալ լաց լինել և թաթիկները մեկնել նրան: Ես նստեցի իսկոյն, վերցրի նրան և սկսեցի փաղաքշել:

— Մարդիկ վայրենացել են, միտք եթէ տաս, հում հում կուտեն: Աստուած, արգեօք բնութեան մէջ կայ աւելի սոսկալի, արիւնարբու գազան քան մարդն է:

Ես համարձակուեցի ոչինչ ասել, մի րոպէ ես էլ լուսացել էի, որ վերջապէս մի պատառ սև հաց և մի բաժակ թէյ պիտի կարողանամ խմել. այժմ վախենում էի կնոջս հետ խօսել, յանկարծ նա կա-

րող էր ասել մի այնպիսի բան, որ աւելի լաւ էի համարում չլսել:

Բարձը նրա ձեռին էր, շարտեց թախտի վրայ և ձեռները երկինք բարձրացնելով ասաց.

— Աստուած, դու այս քաղաքը Սողոմ Գոմոր դարձրո՛ւ:

Նրա դիմագծերը պրկուում էին ուժից դողով, ձեռների և մատերի ոսկորները կարծես առանձին-առանձին էին շարժւում, բարակ վերնագրեստի տակից շատ պարզ նշմարւում էր նրա կրծքի անհանգիստ ելեւէջը:

— Ինչո՞ւ ես այդքան լուզում քեզ, ասացի վերջապէս դողացող ձայնով. ճակատագիր է, պիտի տանենք: Արի, արի, վերցրո՛ւ Շուշանին, դուրս գամ, տեսնեմ ի՞նչ կարող եմ անել:

— Ոչինչ չես կարող անել, ոչինչ:

— Վերցրու Շուշանին, չես լսում, ես ուզում եմ դուրս գալ, գնալ մի քանի ծանօթների մօտ:

— Տալիս եմ բարձը, նայում է, շուռումուռ է տալիս, հաւանում, ապա 15 կոպէկ առաջարկում: Տասը ըրելու չափ փող է նստել ինձ վրայ այս բարձը, ամուսնանալիս իմ բաժինքումն էր գրտնւում, չորս տարի սրա վրայ մարդուս հետ եմ քնել ու շատ բարի ու չար բաներ տեսել, և այսօր տասնևհինգ կոպէկ են միայն առաջարկում: Անպիտաններ, գազաններ... 15 կոպէկ միայն... Դուք էլ գիտէք, որ երեխաներս քաղցած են և ճարումս ճար որ լինէր, չէի ծախիլ:

Նա լռեց, ծանր շունչ քաշեց և աւելացրեց.

— Դեռ այդ բաւական չէ. ամենալպիրշ կերպով ինձ վիրաւորեցին էլ:

Վերջին բառերը լսելով արիւնս գլխիս տուլեց: Իսկոյն թախտից ցած թռայ և կատաղած գոռացի:

Ո՞վ էր, որ համարձակուեց քեզ վիրաւորել:

Կատաղութիւնից և յուզումից դողում էի:

— Ես նրան կըսպանեմ, անպայման կըսպանեմ:

Վերցրի հացի դանակը, որ յանկարծ յատակի վրայ աչքովս ընկաւ, և օդի մէջ խաղացնելով բռնեցի կնոջս թևից ու սկսեցի շարժել, քարշ տալ կրկնելով յաճախ.

— Ո՞վ քեզ վիրաւորեց: Ասո՛ւ, ասո՛ւ:

Շուշանիկը լաց էր լինում աւելի ու աւելի եռանդով, քանի ես ձայնս բարձրացնում էի: Կինըս ջանում էր ձեռիցս ազատուել ու երեխային գրկել, բայց ես չէի թող տալիս և շարունակ կրկնում էի.

— Ասո՛ւ, ասո՛ւ, ո՞վ էր այն մարդը.

Նա ազատուեց վերջապէս ձեռիցս, մօտեցաւ թախտին, վերցրեց երեխային և սկսեց թևի վրայ օրօրել, համբուրել, կրծքին սեղմել ու օրօրել դարձեալ: Ապա դարձաւ դէպի ինձ և ասաց.

— Մեր հարեան քարտաշ Խաչին էր, մօտն էլ ուրիշը կար:

Քարտաշ Խաչին Շամախու թէ Ղարաբաղի գիւղից էր, մի քանի տարուց իվեր գտնուում էր պանդխտութեան մէջ և լաւ փող էր աշխատում,

բայց ապրում էր մուրացիկի նման: Նա պսակուած էր, ծննդավայրում կին և երեխաներ ունէր, որոնց ուղարկում էր շատ քիչ բան. նրա միակ ձգտումն այն էր որ կարողանայ մի քանի հարիւր լուրջի ունենալ և կապալառու դառնալ: Նրան առաջին ըողկից չէի համակրել և թէև մի տարուց աւելի էր, որ միւսնոյն բազումն էինք ապրում, բայց իմ բարեկամութիւնը նրա հետ «բարի լոյս, Աստու բարին»-ից դէնը չէր անցնում, թէև նա յաճախ բերում էր նամակներ ու մուրհակներ ինձ գրել ու կարգալ տալիս: Նա լաւ գիտէր մեր նեղութիւնը, ինքն էլ այդպիսի զրկանքներ էր քաշել, բայց այս օրը նա ծաղրում էր իմ թշուառութիւնը, սակայն երբ իմ օգնութեան պէտք էր ունենում, միշտ քծնելով, սողալով, փաղաքշելով էր մօտենում ինձ: Լսելով նրա անունը, կատաղութիւնս նստեց. ինչ որ թուլութիւն տիրեց վրաս և հազիւ կարողացայ հասնել մինչև դուռը: Քարտաշ Խաչին նստած էր թախտի վրայ իւր հայրենակից մի բանուորի հետ: Առանց դռնից դուրս գալու գլուխս հանեցի և զիմելով նրան ասացի.

— Վարպետ Խաչի...

Նա նայեց իմ կողմս, հայրենակիցն էլ նրան հետևեց.

— Եթէ հոգիս ծախեմ քեզ ինչ կը տաս...

Ձայնս դողդողում էր. չը կարողացայ շարունակել: Նա ոչինչ չպատասխանեց, քիչ շփոթուեց: Աւելի ասելիք չունէի, նոյնիսկ անպատուութիւն

Համարեցի ինձ Համար խօսել այն մարդու հետ, որ վաղը դարձեալ մի նամակ ձեռին պիտի բերի ինձ կարգալու և պիտի խնդրի պատասխանել, գովելով իհարկէ իմ շատ տգեղ ձեռագիրը: Յետ քաշուեցի. տեսայ կինս նստել է թախտի վրայ. նրա գրկում երեխան քնել էր: Մօտեցայ սեղանին, վերցրի գլխարկս և դիմելով կնոջս ասացի.

— Գնում եմ մի քանի կոպէկ ճարելու, երեխաներին մի կերպով խաբով արս, մինչև կը վերադառնամ:

— Շուտ վերադարձիր, ասաց միայն:

Սենեակից դուրս եկայ: Բագում մի պատի տակ կուզ էր եկել Վահանիկը և կեղտոտ հողը ափով վերցնում ու ածում էր բերանը: Մօտեցայ նրան վերկացրի. նա ահագին աղաղակ բարձրացրեց և ամեն ջանք գործ էր դնում, չարչարում, տանջում, գալարում էր, որ կարողանայ թևերիս միջից ազատուել, բայց ես պինդ պահել էի: Ներս տարայ սենեակ, յանձնեցի մօրը և դուռը պինդ փակելով հեռացայ: Փողոցից դեռ լսում էի նրա ձայնը և որպէսզի երկար ժամանակ չլսեմ, արագ արագ հեռացայ մեր փողոցից: Սակայն երկար չը կարողացայ գնալ, յանկարճ կանգ առի:

— Ո՛ւր գնամ, ո՛ւմից փող ուզեմ:

Քաղաքի կենդրոնական փողոցները հասայ: Արևն արդէն թեքուել էր, փողոցները հետզհետէ լցում էին անց ու դարձ անողներով: Կիզիչ արեւին յաջորդելու էր գով երեկոյ, մեղմ քամին օրօրում էր ծանր մթնոլորդը և հովացնում քրտնած

անցորդին: Անցայ մի քանի մեծ փողոցներով և դիմեցի դէպի քաղաքային այգին: Կիրակնօրեայ տօնի աւթիւ խանութները գրեթէ բոլորը փակ էին, այստեղ, այնտեղ երբեմն երևում էին հացագործների ու մրգավաճառների խանութները: Ես անզգուշաբար գնում էի ծովեղբրով, և աչքերս ագահութեամբ յառած էի շուրջս տեսնելու համար մի ծանօթի, որից կարողանամ պարտք վերցնել: Ծովեղբրը լիքն էր բազմութեամբ, զուգեր անցնում էին շքեղ հագնուած, ուրախ, գուլարթ, երիտասարդների բարձր քրքիջը և կանանց վրայից անուշահոտութիւնը լցրել էր մթնոլորդը: Ծովեղբրները երեկոյեան քամու ճնշումից մղուելով աւելի շուտ շուտ և աւելի ուժեղ էին խփում խղճալի ափերին, գալիս փշրում էին քարափի ժայռ ստորոտին և յետ քաշում, դարձեալ գալիս փշրում, փրփուրներ հանում, ապա հետ դառնում, գրկում իրար: Քանի քաղաքի այգուն էի մօտենում, այնքան գնացող եկողների թիւը շատանում էր, այգու ճաղերով երկաթեայ դռների առաջ հաւաքուած էր ահագին բազմութիւն. երկու ոստիկաններ պահպանում էին մուտքը և մի քանի պարոններ ու տիկիներ մի սեղանի շուրջը բոլորած՝ տոմսակ էին վաճառում: Մինչև այդտեղ ո՛չ մի ծանօթի չէի հանդիպել, յոյսս մնացել էր միմիայն այգին և ահա նրա դռներն առաջս փակուած էին. երկար սպասեցի դռան առաջ գուցէ մըտնող ելլողների մէջ հանդիպեմ մի ծանօթի, բայց իզուր: Ծանօթների շատ էի հանդիպում, ճիշտ է,

բայց դրանցից ո՛չ մէկը չէր ցանկանում ինձ ճանաչել իսկ, բոլորի դէմքի վրայ փայլում էր ուրախութիւն, բաւականութիւն, նոյնիսկ այգու դռան առաջ հաւաքուած և ներս մտնելու միջոցներից զուրկ բանուորական այն բազմութիւնն էլ իմ նախանձս էր գրգռում: Բոլորի գրպանում փող կայ, բոլորը կուշտ փորով եկել են մաքուր օդ շնչելու և զուարճանալու, մինչդեռ ես... Ես սպասում էի այգու դռան շատ մօտ, աչքերս յառած իւրաքանչիւր մտնող-ելլողի դէմքին, լսում էի հեռուից խմբական երաժշտական գործիքների ներդաշնակութիւնը և լիաթոք շնչում էի երեկոյեան մեղմ օդը, բայց և՛ այնպէս խեղդւում էի, դժուարութեամբ էի շնչում, անհամբերութիւնն ինձ ստում էր, և ոչ ոքի չէի հանդիպում, մինչդեռ օրը տարածամում էր, գիշերը յառաջանում:

Ուշ գիշեր էր, լուսինը մեղմիկ սահում էր երկնակամարի վրայ, յաճախ թագնւում ամպերի յետև, նորից դուրս գալիս և իւր կաթնագոյն հաճելի լուսով ողողում ամբողջ քաղաքը: Ելեքտրական հսկայ լապտերներն ահագին լոյս էին արձակում. այգու առաջ գտնուող հրապարակում և հրապարակի շուրջը բարձրացած մի քանի յարկանի տների հոյակապ ճակատները Փանտաստիկ տեսարաններ էին ներկայացնում իրենց գոյնզգոյն ներկերով և տեսակ-տեսակ քանդակներով: Բազմութիւնը ծովեզերքում հետզհետէ նւազում էր, իսկ այգում ընդհակառակն աւելանում: Ռուան առաջ հաւաքուած հասարակութիւնը ցրուել էր, միայն

ես էի մնացել մի քանի ծաղկեվաճառ ստահակների հետ: Աւելի սպասել միտք չունէր: Անպատմելի խորտակումի ենթարկուեց կուրծքս, արիւնս սկսեց աւելի անհանգիստ յորդել դէպի սիրտս, ուղեղս անզգայ դառաւ որևէ լուրջ մտածութեան և ինձ թւում էր, թէ ահա շունչս կըկտրուի, օտներս կըթուլանան և ես վեր կընկնեմ: Մի քանի րոպէ այգու ճաղերին կըթնած մնացի, ապա դանդաղ մտայ քաղաքի մութ փողոցներից մէկը, որ ձգւում էր այգու մի կողմը, և սկսեցի գնալ, ո՛ր կամ ինչպէս, ինձ հաշիւ տալ չէի կարողանում: Մի բան միայն պարզ էր ինձ համար, այն, որ կինս ու երեխաներս քաղցած ինձ են սպասում, իսկ ես ձեռնունայն եմ տուն գնում:

Բաւական տեղ գնալուց յետոյ կանգ առի, մտածեցի երկար, ո՛չ մի ճար կամ հնար չգտայ փող ստանալու, հաց առնելու և դանդաղ ու դողդոջն քայլերով գնում էի քաղաքի մութ, նեղ ծուռ ու մուռ փողոցներով, թափառում էի երկար, ջանալով որքան կարելի է ուշ տուն հասնել:

Վերջիվերջոյ սակայն մեր տան բազի դռան առաջ էի: Ռա մի մեծ երկփեղկանի տախտակեայ դարպաս էր, որը յետևից փակում էին քարերով երեկոյեան շատ շուտ, որովհետև այդ փողոցներում գրպանահատներից գողերից մեծ վախ էին կրում: Ըստ սովորականի մեր դուռն այդ օրը դարձեալ փակ էր: Որովհետև ոչ գանգ ունէր, ոչ էլ օթակ, վերցրի գետնից մի քար և սկսեցի թակել դուռը: Մի քանի րոպէ ներսից ո՛չ մի ձայն չէր լսւում: Զայ-

նեցի կնոջս, դարձեալ լուսթիւն: Սկսեցի աւելի ամուր թակել դուռը: Լսուեցին քրտմնջիւններ, փրփուք և տիրեց լուսթիւն: Երրորդ անգամ աւելի պինդ թակեցի և սկսեցի աւելի բարձր ձայնել կնոջս: Այս անգամ ոտի ձայներ լսուեցին, որ մօտենում էին դռանը: Գիշերային լուսթեան մէջ ներսից լսուող ձայներն ինձ վրայ մահաբեր հրեշտակի ոտերի ձայնի տպաւորութիւն էին թողնում, կուրծքըս աւելի սկսեց ճնշուել և ցանկանում էի, որ շուտ բաց անեն դուռը, ցանկանում էի և՛, որ երբէք բաց չանեն:

Քայլերը մօտեցան դռանը և մէկը կանգնեց դռան յետև:

— Ո՞վ է, հարցրեց նա ներսից:

— Ես եմ, հարևան, բաց արա՛, ձայն տուի դրսից: Ծանաչեցի, քարտաշ Խաչի ձայնն էր:

— Ո՛չ, բաց չեմ անիլ ասաց նա դրական կերպով և սկսեց հեռանալ դռան մօտից:

Ինչպէս առաջ, այս անգամ էլ շատ յստակ էին լսում նրա ոտի ձայները: Ես ոչինչ չասացի, բոլոր ուժով սկսայ դուռը հրել և մի քանի բուպէի աշխատութիւնից յետոյ ինձ յաջողուեց բաց անել: Մտայ ներս, դողդոջուն ձեռներով ցանկանում էի քարերը շարել իրար վրայ և դարպասն ամրացնել, երբ յանկարծ զգացի մէջքիս վրայ փայտի մի ուժեղ հարուած: Կռացաց մի քար էի վերցնում, վեր գցեցի և ձեռքս անզգայաբար մօտեցրի մարմնիս ցաւած տեղին առանց ոչինչ ասելու կամ յետ դառնալու: Այդ ժամանակ երկրորդ հա-

րուածն իջաւ մէջքիս: Յետ դարձայ, տեսայ քարտաշ Խաչին էր: Նա անկողնի շորերով էր, գլուխը և ոտերը բաց, մի հտտ փայտ ձեռին: Բագում բացի նրանից ոչ ոք զարթուն չէր. մի քանի հոգի քնել էին այս ու այն պատի տակ, բացօդեայ տեղ, փոշոտ գետնի վրայ:

Վարպետ քարտաշը օձիքիցս բռնեց:

— Ինչո՞ւ ես ամեն գիշեր մինչև այս ժամանակ ուշա՛նում, մենք քո դռնապաններդ չենք, ո՛չ էլ քո կնոջ ամօթի պահապանները:

Գտնում էինք դարպասի յետև պատի տակ շուաքի մէջ թէև. բայց նրա աչքերի մէջ շատ լաւ նշմարեցի ստոր վրէժխնդրութեան կայծը: Նա լաւ իմանում էր, որ գիշերուայ այդ ուշ ժամին ես երբէք աղմուկ չեմ բարձրացնիլ, դրա համար նա համարձակուեց խփել և խստութեամբ օձիքիցըս քաշ տալ:

— Ո՞ւր էիր այս ժամանակ: Կնիկդ, երեխաներդ, քաղցած լաց էին լինում մի քանի ժամ շարունակ: Կին ես առել, կարգին պահիր, խօ ուրիշները պարտաւոր չեն նրանց հաց տալ, կերակրել: Պատշգամբում նստած հաց էինք ուտում, երեխադ մուրացկանի լսկոտի նման քաղցած աչքերը յառել է մեր բերնին և մեր պատառներն է համբարում...

Այլևս չկարողացայ դիմանալ և տկարի, հարստահարուածի վերջին բողբջ բարձրացրի, բողբջ, Յիսուսի բողբջի նման, որ նա բարձրացրեց, երբ քահանայպետի ծառան իզուր ապտակեց նրան:

— Գու սուտ ես ասում եւ անամօթ կերպով...
իմ երեխան...

Բառը բերնուձմ կիսատ մնաց, պառկած տեղերիցը երկու մարդիկ էլ վերկացան եւ երեք հոգով յարձակուեցին վրաս ու սկսեցին նախատել ու խփել:

Շուշանիկը մեր աղաղակների վրայ զարթնեց եւ լաց եղաւ: Կինս ինքն իրան կիսամերկ դուրս ձգեց սենեակից:

— Օգնեցէք, սպանում են, օգնեցէք:

Նա մօտեցաւ, յարձակուեց կատաղի վագրի նման նրանց վրայ եւ ինձ ազատեց նրանց ձեռքերից: Ես չէի համարձակուում ոչինչ ասել, անբանացել էի ու քարացել:

— Գնանք, գնանք, սրանք ուզում են քեզ սպանել, այն բարձի համար, գնանք, տանք, թող տանեն...

Նա լռեց եւ սկսեց բոլոր ուժով ինձ քարշտալ: Ես տեղիցս չէի շարժուում:

— Տեսայ որ ուշանում ես, այս մարդուց (նա ցոյց տուեց քարտաշ Խաչիին) 30 կոպէկ փող պարտք առի, դորա փոխարէն բարձը ուզեցին չիտուի, այժմ ուզում են քեզ սպանել... գնանք, բարձը տանք, թող լռեն:

Կիսամերկ դրութեան մէջ կինս սարսափից դերեզմանից դուրս փախած մի կմախքի էր նմանում. նա շարունակ ինձ քարշում էր եւ ասում.

— Գնանք, բարձը տանք եւ ազատուենք: Չես իմանում, թէ 30 կոպէկ տալուց յետոյ ինչպէս են

նախատել, վիրաւորել ինձ...

Շուշանիկի ձայնը լսոււմ էր շարունակ. սիրտըս ճմլուեց յանկարծ, աչքերս արտասուքով լըցուեցին եւ հետեւեցի կնոջս մինչև մեր սենեակը: Լամպը աղօտ լոյս էր արձակում: Վահանիկը քրնած էր: Շուշանիկը կտրեց ձայնը մեզ տեսնելուն պէս եւ սկսեց թաթիկներով ձգտիլ դէպի մեզ: Կինըս վերցրեց թախտի վրայից բարձը եւ սենեակի դռնից շարժեց դէպի բագը: Չըտեսայ, թէ քարտաշ Խաչին, ինչ արեց իւր ընկերներով կամ ինչ արտախտութիւն ստացաւ նրա դէմքը: Միայն լաւ լիշում եմ, որ կնոջս մթնագոյն դէմքը յանկարծ պայծառացաւ եւ նա մի կտոր հաց ցոյց տալով սեղանի վրայ դրուած՝

— Կէր, ասաց միայն:

Եւ աչքերը լցուեցին արտասուքով:

Ես մոռացայ ամեն բան, հոգեմաշուկ բոլոր յուզումները, փայտի հարուածները, նոյնիսկ բարձը, մօտեցայ կնոջս, համբուրեցի ձեռքը եւ ասացի.

— Գու անդին ընկերուհի ես: *խոչարտ - շին 26*

Համբուրեցի եւ Շուշանիկիս թաթիկները: Նա ժպտում էր:

Ուշ ժամանակ քնեցինք, բայց մեր գլխատակին բարձ չկար այլևս:

Ա Ր Թ Ն Ա Յ Ա Ծ Խ Ի Դ Ճ Ը

Գարնանային մի երեկոյ ես ու իմ բարեկամ Մանուկը գնացինք քաղաքից դուրս աւելի հեռու ձգուող այգիներում զբօսնելու: Եղանակը հիանալի էր. այնքան պարզ էր երկնքի կապուտակը, այնքան ջինջ, որպէս լինում են միայն ամառնային գիշերները: Շատ թեթեւ մի քամի հազիւ շարժում էր ծառերի տերեւները, որոնք խորհրդաւոր կերպով փսփսում էին և որոնց փսփսուքը շատ պարզ զարնւում էր մեր ականջին: Երկուսս էլ մտամոլոր, մելամաղձոտ էինք: Երկար քայլում էինք կանաչազարդ մարգերի վրայով, երկշարք ծառերի արանքով, երկար նայում էինք կապուտակ երկնի ջինջ պայծառութեան և ոչինչ խօսել չէինք կարողանում: Շատ անգամ բնութեան որևէ շատ չնչին երևոյթ իսկ այնքան է զրաւում մարդու, այնպիսի յիշատակներ է գարթեցնում մարդու մէջ, որ մարդ կարծես մի բոլորով վերանում է իրական աշխարհից, անձնատուր է լինում անիրագործելի ցնորքների և յաճախ անցեալի տխուր յիշատակներին: Այդպիսի բոլորներին հողը մարդուս ոտի տակ ցած է գնում, նրան թւում է, թէ ինքն ընկ-

նում է տագնապի մէջ, բայց որքան յուզումնալից է այդ անկումը, այդ տագնապն: Լաւ է, շատ լաւ է երբեմն մոռանալ բոլորը և անձնատուր լինել այդ յուզող, ճնշող տագնապներին: Աշնանային երեկոները շատ անգամ են ինձ գրաւել. թափուելու մօտ, օգի իւրաքանչիւր հպումից դողացող տերեւները, կիսամերկ ծառերը, դեղնած սիգամարգերը, օճ, դրանք բանաստեղծօրէն համերաշխուում են մարդու հոգեկան հիւանդ արտայայտութիւնների հետ, և գերեզմանը շատ անգամ է ցանկալի երևում մարդկանց: Այդ չորացած, ծրուռած սէզերի մէջ մի չեչոտ քարի տապան, մի ուռեւի սնարի վերև, որ յարատև լաց լինի, տապանի մօտից խոխոջալով անցնող մի վտակ և երբեմն սիրուհու համբոյր . . . այնտեղ, միայն այդ չեչոտ քարի տակ մարդ կարող է առմիշտ մոռանալ աշխարհը և իւր բաբուլթեան համար չի կրիլ փշեայ պսակ իւր գլխին, իւր կրքերի համար չի զոհել շատերին, ինչպէս այս աշխարհում: Այսպէս էի մտածում ես գարնանային այդ երեկոյ քայլելով նոր կանաչող մարգերի վրայով, սաղարթախիտ ծառերի տակով:

Հետզհետէ արևը բոլորովին աներևոյթ էր լինում հօրիզոնի յետև, այստեղ-այնտեղ երևում էին արդէն պըլպըլող աստղերը, և լուսինը հեռու, շատ հեռու, անորոշ կերպով երևում էր ու սահելով բարձրանում դէպի մեր գլխի վերև տարածուող երկնակամարը: Քիչ յետոյ արդէն մութ կլինի, բացի այգեպաններից ոչ ոք չի լինիլ այլևս

քաղաքից հեռու գտնուող այդ այգիներում, սակայն այդ մեզ երբէք չէր հետաքրքրում. մենք աւելի ու աւելի հեռանում էինք քաղաքից և որքան լույսն աղօտանում էր, որքան վերջալուսի վերջին գոյներն աւելի նսեմանում, այնքան երեկոն աւելի խորհուրդաւոր, աւելի յուզիչ ու ճնշող էր դառնում և այնքան աւելի մեր լեզուները կապւում էին: Բարեկամիս գէմքը հետզհետէ աւելի մուլլում էր, նա նայում էր շարունակ ծառերի ստուերների մէջ, մութ տեղեր և առաջանում էր շատ դանդաղ: Ի՞նչ էր մտածում նա: Գուցէ նա էլ երազում էր մի չեչոտ տապանաքար, չորացած սիգամարգեր, լացող ուռենի, խոխոջող վտակ և կուսական մի համբոյր... գուցէ նա մտածում էր աւելի ասեղ բան կամ գուցէ տեսնում էր իւր գլխի վերև հարիւրաւոր թշնամիների ձեռներ բարձրացած, որոնց հարուածների գէմ ընկնելու երկիւղով նայում էր ծառերի հետզհետէ աւելի թանձրացող ստուերներին: Քանի անգամներ ուղեցի յայտնել նրան իմ յուզումները, որ կրում էի այդ գեղեցիկ բնութեան հանդէպ. ուզում էի բացատրել, թէ ինչպէս կապուտակ երկնքում սահող լուսնեակն այդպէս գեղեցիկ կերպով լուսաւորել է և իմ մանկութիւնը, թէ ինչպէս ծովից շատ հեռու երևացող ձիւնապատ գագաթաւոր լեռներն իմ հայրենիքն են ինձ յիշեցնում, թշուառ, արիւնլուայ այն երկիրը, որտեղից տարագիր հեռացանք յաւիտենական տենչանքը մեր ալրուած սրբտերում, նրա յիշատակի արցունքը մեր մշտաթայ

աչքերում... Ա՛խ, շատ բաներ կասէի ես նրան, բայց խօսել չէի կարողանում, երևի նա էլ չէր ցանկանալ լսել: Եւ գնալով աւելի հեռանում էինք քաղաքից:

Լուսինը բաւական բարձրացել էր, աստղերը փայլում էին իրենց կատարեալ հրաչին փայլով, երկնքի կապուտակը դարձեալ ջինջ ու մաքուր էր, ինչպէս ամբողջ այդ երեկոյեան. քամին աւելի զով էր դառնում: Մենք դուրս էինք եկել այգիներից և գնում էինք աւագոտ մի ընդարձակ տարածութեան միջով դէպի ծովեզերք: Այստեղ երկնակամարն իւր լուսատուներով աւելի շքեղ էր երևում, իսկ հեռում, շատ հեռում, կպած էր ծովի նույնպէս կապուտակ ջրերին, կարծես ցած էր իջել և փռուել էր գետնի վրայ, մի ընդարձակ լոյժ սաւանի վրայ. որի վրայ փոթոթներ էին ձևացնում շատ փոքրիկ այլիքները: Մի քառորդ ժամ յետոյ ծովի ափին էինք. խոնաւ խճաքարերի և աւազի վրայով ծովի ափի ուղղութեամբ գնում էինք դէպի քաղաք: Այլրի բազերը հեռում ծովի ջրերի վրայ խաղ էին անում. նրանք երբեմն իրենց մոխրագոյն թևերը թափ էին տալիս օդի մէջ ծովի մակերևութից քիչ բարձր, երբեմն նստում ու խորասուզում էին ջրերի մէջ: Մեր ձախ կողմը ծովն էր, իսկ աջ կողմը, մեզանից բաւական հեռու — այգիները, որոնք հետզհետէ սև անտառների ձև էին ստանում և աւելի ու աւելի ճնշող տապաւորութիւն թողնում: Բարեկամս չէր նայում ծովին, նա նայում էր ծառերի սև ստուերներին, և

ըստ երևոյթիւն չէր համարձակուում աչքերը հեռացնել այդ մթուածիւնից, մինչդեռ ծովն ակելի գեղեցիկ էր քան այդ մթուածիւնը:

Յանկարծ նա կանգնեց ուղիղ իմ դէմ. նայեց երեսիս և ուժգին սեղմեց ձեռներս. ապա շատ ցածր, հազիւ լսելի ձայնով հարցրեց՝

— Մարդասպանին երբէք չի՞ ներում իւր յանցանքը:

Նա նայեց շուրջը երկչոտ հայեացքով, առանց համարձակուելու աչք բարձրացնել ինձ վրայ. նա սարսուռում և դողում էր, և լուսնի լուսով նրա դէմքը շատ որոշ տեսայ. դիմագծերը կծկւում էին և աչքերը ինչ որ անորոշ և միանգամայն արգահատանք ազդող արտայայտութիւն էին ստացել: Ես շփոթուեցի գիշերային այդ լուութեան, մարդկանցից հեռու այդ մենութեան մէջ ինձ տրուած այդ սոսկալի հարցը լսելով և մի րոպէ չը կարողացայ պատասխանել ոչինչ: Նա ուղղուեց, աչքերը գցեց գետնին և առանց ինձանից պատասխանի սպասելու սկսեց շարունակել իւր ճանապարհը: Ես հետևեցի նրան մի քիչ հեռուից: Գիշերը իւր բոլոր գեղեցկութեամբ այժմ ակելի ճընշող ազգեցութիւն էր անում ինձ վրայ. անհանգիստ էի և շարունակ ակնարկս յառած բարեկամիս վրայ, դիտում էի նրա շարժումները, նրա մարմնի ստացած բոլոր ձևերը իւր հանդարտ քայլուածքի ժամանակ: Խճաքարերն ու աւազը ձայներ էին հանում մեր ոտերի տակ, քամին ակելի ցուրտ ու ազդու էր դառնում և ծովի ալիքներն

ակելի մեծանում էին. երկինքը իւր ջինջ կապուտակութեամբ նայում էր մեզ շատ լուրջ հայացքով, մթնացնող այգիներն ինձ մի տեսակ սառսուռ էին ազդում: Բարեկամս առանց յետևը նայելու շարունակում էր իւր ճանապարհը: Յանկարծ դարձեալ կանգ առաւ: Հասել էինք երկու մեծ տապանաքարերի, որոնց քշել բերել էր այդտեղ կատաղի ծովը իւր խև ալեկոծութիւններից մէկի ժամանակ:

— Նստենք այս քարերի վրայ, ընկեր, — ասաց Մանուկը. — ես յոգնել եմ:

— Նստենք, — կրկնեցի մեքենայաբար և առաջ ես նստեցի քարերից մէկի վրայ, երեսս դէպի ծովըն ուղղած, աչքերս բարեկամիս վրայ յառած: Նա մնաց կանգնած և նայելով շարունակ գետնին, հազիւ երբեմն ինձ վրայ, ասաց.

— Ի՞նչ կարգացած մարդ ես... մեր կանտոր-չէիկը շատ անգամ էր քեզ գրքեր տալիս կարդալու... աստ, խնդրեմ, ինչ բան է խիղճը:

Եւ առանց իմ պատասխանին սպասելու նշտեց դիմացս, միւս գերեզմանաքարի վրայ, բայց իսկոյն կանգնեց և ասաց.

— Ոչ, այստեղ հանգիստ նստել չեմ կարող... ես շատ յոգնած եմ: Վերկաց, գնանք, քիչ այն կողմ, գետնի վրայ թէք կընկնենք և կիսուենք: Այնտեղ խոնաւ չէ, աւազը չոր է: Գնանք:

Բարձրացայ նստած տեղիցս և հետևեցի նրան: Մի քանի քայլ միայն հեռացանք ծովեզերից, համեմատաբար չոր էր այդտեղ:

Բարեկամս մեկնուեց աւազի վրայ և ինձ էլ Տրաւիրեց, որ պառկեմ:

— Աւազը մի քիչ տաք է, բայց այդ աւելի լաւ, — ասաց նա, — չենք հիւանդանալ: Պառկիր ինձ պէս: Գիշերը գեղեցիկ է, կնայենք այստեղից, երկնքին և ծովին, կնայենք աստղերին ու արիքներին: Փառք Աստուծոյ, կին ու երեխաներ չունենք, որ մեզ սպասեն տանը, ծնողներ էլ չունենք, որ մտատանջուեն, իսկ փող խօ Աստուած տայ, թէ չէ՝ կ'գնանք կընթրէինք: Այստեղ լաւ է, պառկիր:

Չիշտ էր ասում Մանուկը ո՛չ ոք չըկար մեզ սպասող, նոյնիսկ մի տեղ էլ չունէինք, որ հանգիստ նստել կամ ննջել կարողանայինք: Գործարանում, բանուորական ներքնայարկում երկուսս քրնում էինք միմիանց մօտ. մեզ մօտ, միևնոյն ներքնայարկի միևնոյն սենեակում քնում էին և ուրիշ մեզ վիճակակից շատ բանուորներ: Ես ու Մանուկը երկաթագործներ էինք, իրար ճանաչում էինք վեց ամսից ի վեր, երբ որ նա առաջին անգամ մտաւ մեր գործարանի երկաթագործական բաժինը: Ես քիչումիչ կարգացել էի, իսկ նա շատ էր եղել թատրոններում և ցիրկերում: Իրար հետ շուտ մտերմացանք և միշտ միասին էինք ման գալիս: Երկուսս էլ չէինք հարբում, և այդ բանը մեր միւս արհեստակիցներին զրգռել էր մեզ դէմ, բայց դրա փոխարէն մենք շատ ժամանակ էինք գտնում ուրախ անցկացնելու, երբ նրանք մեզ մօտ չէին լինում: Գործարանում ունէինք մի բարի գործակատար, որ ինձ զրքեր էր տալիս կար-

գալու. ես կարդում էի, Մանուկը լսում էր (նա կարդալ չէր իմանում), յետոյ երկար վիճում էինք կարգացած նիւթի մասին՝ մինչև գալիս էին մեր արհեստակիցները հարբած, ցեխոտուած, թակուած, փշրուած: Այդպիսի դէպքերում մենք միասին հեռանում էինք գործարանից և երկար լուռ անձնատուր լինում մեր մտքերին: Ես շատ բանաստեղծական ցնորքներ ունէի և շատ անգամ երեւակայում էի, որ մի օր պիտի կարողանամ այնքան զրել իմանալ, որպիսի զրեմ իմ այդ բոլոր ցնորքները, պիտի զրեմ, թէ ինչպէս են հարբում մեր ընկերները, թէ ինչպէս են ծախում մեր ընկերուհիներն իրենց պատիւը կամ ինչպէս գործարանատէրը ծծում է մեր ջղերի հիւթը կամ վաշխառում մեր հարազատների արիւնը: Ես սիրում էի մի աղջկայ: Այդ աղջիկն ինչէր չէր զարթեցնում ինձանում, ինչպիսի վսեմ զգացումներ, բայց, ափսոս, բոլոր երազներս յօղս էին ցնդել և ես դարձեալ նոյն մենակ, օտար երկաթագործն էի, ցնորոզ բանաստեղծը և գործարանի ներքնայարկում բանուորական հասարակաց սենեակի մի անկիւնում քնոզ թշուառը:

Նստեցի բարեկամիս մօտ, մեկնեցի ոտերս առաջ, ընկալ աջ թևիս վրայ և սկսեցի նայել մերթ ծովին, մերթ երկնքին և մերթ ընկերոջս:

— Գեղեցիկ գիշեր է, Մանուկ, բայց այս գիշերը, ինչպէս երևում է, քեզ շատ է տխրեցնում, ասացի ես:

Նա ցնցուեց, երեսը դարձրեց դէպի ինձ և

ասաց շատ տխուր շեշտով:

— Մենք թշուառ ենք, ընկեր:

— Ո՞վ կարող է հակառակը պնդել, — համաձայնուեցի ես:

Տիրեց ըոպէական լռութիւն: Հիւսիսից սկսեց փչել աւելի ցուրտ քամի. մի քանի սպիտակ, բարակ շղարշեայ ամպեր երևացին երկնքի երեսին. լուսինը շարունակ բարձրանում էր, նրա կաթնագոյն լոյսն աւելի ուղիղ ընկնում էր մեզ վրայ. իսկ ծովում վայրի բազերը հազրւ երբեմն երևում էին ինչպէս մուրթ կէտեր, որոնք բարձրանում էին ալիքների սպիտակ փրփուրների մէջ և դարձեալ աներևոյթ լինում, երբ անհետանում էին փրփուրները: Մենք նայում էինք ծովին, նայում էինք ալիքների խաղերին, և չկար մի կենդանի շունչ, որ մեզ անհանգստացնէր:

— Մենք թշուառ ենք, — կրկնեց Մանուկը, — և թշուառ ենք նրա համար, որ տգէտ ենք:

Նա վերցրեց մի խճաքար և շարտեց դէպի ծովը:

— Բայց մենք մենակ չենք, ընկեր, — աւելացրեց նա. — շատերը կան, որ մեր ճակատագրին են ենթարկուած. բայց նրանք մեզանից փախչում են, մենք էլ նրանցից ենք փախչում, և մեր թշուառութիւնը կայանում է հէնց դրանում:

Նա լռեց, դարձեալ մի խճաքար վերցրեց, շարտեց դէպի ծովը և շարունակեց.

— Եթէ բոլոր թշուառներս իրար բարեկամ լինէինք, մեզանից ո՞չ մէկը վատ չէր լինիլ...

Այս անգամ նա լռեց բաւական երկար ժամանակ: Ես, որ մինչ այդ ժամանակ նայում էի ծովին, անզգայաբար երեսս դարձրի նրա կողմը և տեսայ, որ նա գունաթափուել էր:

— Մենք թշուառ ենք, որովհետև տգէտ ենք, — կրկնեց նա մի քանի անգամ, մեքենայաբար, մերթ ընդհատ-ընդհատ, մերթ արագ-արագ: Յանկարծ նա ուղղուեց, նստեց ծալապատիկ և ուղիղ իմ աչքերին նայելով ասաց՝

— Ես կարդացած չեմ, բայց ինձ թւում է, որ եթէ մենք, թշուառներս իրար սիրենք, իրար հասկանանք, մեզանից ոչ ոք թշուառ չի կարող լինել, ո՞չ ոք գողութիւն, հարբեցողութիւն կամ մարդասպանութիւն չի անիլ: Այդ ես կարող եմ հազարաւոր փաստերով հաստատել: Բայց մենք ընկեր, բարեկամ չենք կարող լինել միմեանց, որովհետև, — էլի եմ, ասում, — տգէտ ենք, տգէտ ենք, ու տգէտ...

Նա դարձեալ լռեց և գետնից ափի մէջ հաւաքելով խճաքարերն ու աւազը շող էր տալիս անզգայաբար: Նրա աչքերը ստացել էին ինչ որ տարօրինակ փայլ:

— Դու մեղաբրում ես մեր արհեստակիցներին, թէ նրանք հարբում են կռիւներ են սարքում միմեանց հետ, գիշերներ են լուսացնում փողոցների մէջ որևէ պատի տակ վեր ընկած. բայց ինչո՞ւ չես մտածում որ նրանք մեղաւոր չեն: Դու էլ խօս հարուստ չես. որ դատապարտում ես... էհ, — հառաչեց նա հիասթափուածի նման, կանգ-

նեց, վեշերը թափ տուեց և քանի քայլ հեռացաւ ինձնից:

Ես լսում էի նրան և նայում ծովին ու երկնքին, և որքան ինձ զրաւում էր գեղեցիկ գիշերը, այնքան հետաքրքրում էին ինձ Մանուկի գանգառները: Ձգում էի, որ մի բան կայ թագնուած նրա խօսքերի տակ, բայց ինչ, այդ վախճանում էի հարցնել:

— Վերկաց, զնանք, քամին ցրտեց, — կանչեց նա:

Հէնց ուզում էի վեր կենալ, որ նա յանկարծ մօտեցաւ ինձ, ձեռքով մեղմ հրեց, վեր ձգեց և ինքն էլ իսկոյն նստեց կողքիս ծալապատիկ:

— Բայց դու ինձ չասացիր, թէ ինչ բան է խիղճը — ասաց նա. — չէ՞ որ դու ինձանից աւելի բան գիտես: Ասա, ինչ է խիղճը: Այդ ինչ դառնցաւ է, որ Աստուած դրել է մեր կրծքի տակ, իսկ մեր տէրերին մի մազի չափ անգամ չի տուել իրենց աչքը կոխելու:

— Հաւատայ որ չգիտեմ, — ասացի. — այդպիսի բան պէտք է հարցնել տէրտէրին կամ վարժապետին:

— Չգիտես: Իսկ ես գիտեմ. խիղճը մի այնպիսի բան է, որ հանգիստ չի տալիս մարդու, երբ նա ոճիր է գործել...

Նրա դէմքը մթազնեց, աչքերը փայլեցին և նա ցնցուեց ուժեղ կերպով: Խօսելիս ձեռքը մեկնել էր ինձ, և ես զգացի այդ ձեռքի հարուածը կրծքիս վրայ: Ի հարկէ անգիտակցաբար արեց այդ,

ապա ոտի կանգնեց, ձեռիցս բռնած ինձ էլ բարձրացրեց և դանդաղ քայլերով առաջացանք դէպի ծովը:

— Դ՛ու մարդ սպանել ես, — հարցրեց նա ընդդէմս կան լուսնից լեռուց:

Նրա հարցը շատ սոսկալի էր, բայց նա այնքան հասարակ կերպով արտասանեց այդ նախադասութիւնը, կարծես հարցնում էր, թէ երբեւէ հաւ մորթել եմ:

— Ես հաւ մորթել իսկ չեմ կարող, պատասխանեցի ես:

— Հաւ մորթելն աւելի դժուար է, քան մի մարդ սպանելը...

Նա լռեց, ծռուեց գետին, մի քար վերցրեց և մեծ ուժով խփեց ջրի մի ալիքի, որ վազում էր դէպի ափը:

— Հաւատա՛, ճիշտ եմ ասում, հաւը մի խեղճ կենդանի է, իսկ մարդը...

Մի ընդմէջ նրա աչքերում երևեց ինչ որ անբնական կրակ, ձայնը դողաց և դիմագծերը բարձրացան:

— Քեզ խոստովանանք լինի ուրիշին չասես, ես մի մարդ եմ սպանել...

Վերջին բառերը նա այնքան մեղմ, այնքան ցածր ասաց, որ ես աւելի զգացի քան լսեցի: Մի քայլ լեռ լեռ քաշուեցի: Նա ինչ որ դառը ժպիտով նայեց երեսիս ու մօտենալով ինձ աւելացրեց:

— Կպատմեմ քեզ այդ ինչպէս եղաւ և կտես-

նես, որ ես վատ տղայ չեմ:

Անշարժ կանգնած նրան էի նայում: Լուսնի լուսով շատ լաւ նշմարում էի, թէ ինչպիսի փոփոխութիւններ էր կրում նրա դէմքը, թէ ինչպէս նրա այտերը շառագնում և սպիտակում կամ աչքերը փայլում ու հանգչում էին: Միջահասակ էր նա. հազիւ 24—25 տարեկան նիհար, կմախքոտ, բաւականաչափ զեղաատեսիլ և փոքր ձեռներով. նրա մազերի մէջ սպիտակներ շատ կային, իսկ միւրուքն միշտ խնամքով ածելում էր:

—Մազերս սկսեցին սպիտակել այն չարաբաստիկ գիշերից յետոյ, երբ Յովհաննէսի դիակը բերինք քաղաքից հեռու և գցեցինք ահա այստեղ, ծովը...

Նա խօսում էր փսփսալով և առանց աչքերը ծովից հեռացնելու: Սարսափած նայում էի նրա դէմքին և մարդասպանական ոչինչ չէի գտնում նրա դիմագծերի վրայ, ուստի կամենում էի հաւատալ, թէ նա հանաք է անում:

—Ուղիղ երկու տարի է անցել, ինչ որ ծխախոտի գործարանում բանուոր էի. ստանում էի բաւականաչափ ոռճիկ և ապրում էի մի ընտանիքում իբրև գիշերօթիկ: Նրանց հետ ծանօթացայ իմ արհեստակից Մնացականի միջոցով: Մնացականը լօթի տղայ էր, նա միշտ լաւ կանանց յետևից էր թրև դալիս. քանի քանի ուուս և գերմանացի աղջիկներ է խաբել: Նա գեղեցիկ էր, լաւ էր հագնւում և պարտքի տակ խեղդւում էր:

Նա բռնեց թևիցս և սկսեցինք քայլել: Ան-

գգայաբար զնում էի այն ուղղութեամբ, որով նա ինձ առաջնորդում էր: Այդ ըպէին մարմնացած երկիւղ, հետաքրքրութիւն և լսողութիւն էի դառել:

—Կատեան, տանտիրուհիս, շատ էլ ջահիլ չէր, երեսունը վաղուց էր անցրել, — շարունակեց նա փսփսալով: — Յովհաննէսը, նրա ամուսինը նոյնպէս ջահիլ չէր: Բայց Կատեան շատ գեղեցիկ էր. շատ...

Նա նայեց մթութեան մէջ և աւելացրեց աւելի ցածացրած ձայնով՝

—Նա շատ էլ չար էր...

Մի քանի քայլ լուռ առաջ գնացինք:

Նրանք որդի չունէին: Կատեան այլի էր, երբ Յովհաննէսը նրան առաջարկութիւն էր արել: Յովհաննէսը հաւատացրել էր Կատեային, թէ նա իրենց հայրենիքում տուն տեղ ունի, թէ նա լաւ կօշկակար է, հարբեցող չէ և ազգականներ չունի: Կատեան պսակուել էր նրա հետ, բայց չանցած մի քանի օր իմացել էր, որ իւր ամուսինը ոչինչ չունի, որ նա լաւ արհեստաւոր է, ճիշտ է, բայց շատ ծոյլ և անհոգ է: Երկպառակութիւն նրանց տանը շուտ է ընկնում. Յովհաննէսը բռունցքի ուժով ստիպում է Կատեային կար անել, լուացք անել, նոյն իսկ ողորմութիւն հաւաքել: Կատեան այդ ծանր աշխատութիւններից ազատուելու համար միայն լանձն էր առել պսակուել, մի փոր հաց ուտելու կամ ձեռք բերելու դժուարութիւններին չենթարկուելու համար միայն նա անձնա-

տուր էր եղել Յովհաննէսին և ահա հիմայ ստիպուած էր ոչ միայն իւր մասին հոգալ, այլ և՛ մտածել ամուսնու մասին: Շատ անգամ են կրուուել նրանք միմիանց հետ, շատ անգամ կոտրատել, ջարդ ու փշուր են արել, ինչ որ իրենց տանը եղել է, և շատ անգամ երկուսից մէկը վերաւոր պառկած է եղել օրեր շարունակ: Յետոյ Կատեան տեսնելով, որ ձեռքի աշխատանքով և մուրալով չի կարողանում այնքան ստանալ, որքան ծախսում էր իւր ամուսինը, ցանկանում է դիմել աւելի ստոր միջոցի, նա սկսում է ծախել ինքը իրեն և այդ՝ իւր ամուսնու գիտութեամբ:

Խորը շունչ քաշեց Մանուկը, բլուզի թևով սրբեց ճակատը, գլխարկը վերցրեց գլխից և ձեռքի մէջ խաղացնելով շարունակեց.

— Երբ ես դրանց մօտ սենեակ վարձեցի, ի հարկէ բոլորովին չէի իմանում, թէ ինչպիսի մարդկանց հետ գործ ունէի: Լօթի տղայ էի, սիրում էի կուուել, հայհոյել, խմել, գիշերներ լուսացնել այս ու այն կասկածելի բարոյականութիւն ունեցող աղջկայ հետ, բայց մտքովս անգամ անցնել չէի կարող, թէ այդպիսի մի փչացած ընտանիքում գիշերօթիկ պիտի լինեմ: Նրանք ապրում էին քաղաքից հեռու, իրենց տրամադրութեան տակ ունէին երկու սենեակ, որոնցից մէկը մի առժամանակ ինձ յատկացրին, իսկ յետոյ տուին ինչ որ աշակերտի և ինձ փոխադրեցին իրենց սենեակը: Շատ շուտ զգացի, որ մարդ ու կնկայ յարաբերութիւնները միմիանց հետ լաւ չեն, զգացի,

և այն, որ մարդը այդ տան մէջ մի կատուի չափ էլ պատիւ չունի: Մի քանի շաբաթ յետոյ իմ և Կատեայի մէջ սիրային խոստովանութիւն տեղի ունեցաւ և Կատեան մեր այդ սէրը չէր թագցնում մարդուց: Յովհաննէսին ալքօլը ճնշել, փոքրացրել էր, իսկ մի կտոր հաց ուտելու համար կնոջ կողմից կրած յանգիմանութիւնները նրան անբանացրել էին. քանի խմած չէր, շատ անտարբեր կերպով էր նայում մեր սիրոյ վրայ, իսկ երբ խմած էր լինում, սպառնալից ձայնով լիշեցնում էր Կատեային իւր ամուսնական իրաւունքները, որոնց առաջ խոնարհում էինք երկուսս էլ:

Կանգ առանք, Մանուկը բոլորովին քրտնած էր, այս անգամ բլուզի փեշով սրբեց ճակատը, աւելի խոր հառաչեց և ձեռքում բռնած գլխարկը օդի մէջ թափ տալով շարունակեց.

— Երկար տեւեց մեր սէրը և այդ սէրը ո՛չ միայն յանցաւոր էր, այլ անբարոյականացնող թըռուռացնող:

Գիշերային մթութեան մէջ ոչ ոք չկար մեզ լսող, քամին աւելի ու աւելի ցրտում էր հետզհետէ, իսկ ալիքներն աւելի էին մեծանում, երկնքի երեսին լուսինը շարունակ սահում էր և նայում մեզ, ցոլանում ջրի ալիքների մէջ, նա երբեմն ծածկում էր հետզհետէ աւելի խտացող ամպի շերտերի յետև և դարձեալ դուրս գալիս, խաղում ջրի ալիքների հետ մինչև մի նոր ամպ նրան դարձեալ ծածկում էր: Սյդպիսի մի բոպէում ձեռքս բռնեց Մանուկը և հուպ տալով փսփսաց.

—Նա ինձ շատ, շատ շատ էր սիրում:

Եւ աչքերը լցուեցին արտասուքով:

—Մի օր նա ասաց ինձ, — «Գիտես, ինչ կայ, Մանուկ, ծխախոտի գործարանում քո երիտասարդ հոգին կսեւանայ, մեղք էս: Ես քեզ շատ եմ սիրում, առանց քեզ աշխարհն ինձ համար խաւար է: Փառք Աստուծոյ կար անելով այնքան եմ աշխատում, որ ինձ էլ քեզ էլ կբաւականացնի: Քանց թէ այն շունն է ուտում, հազիր դու ուտես: Լաւ մարդ է, թող աշխատի, ինձ պահի, լաւը չէ, ես կաշխատեմ, սրտիս սիրածին կուտեցնեմ: Փող որքան ուզենաս, կտամ, գնա՛, խմիր քէֆ արա ընկերներդ հետ, միայն մինչև կէս գիշեր անպայման տանը լինես»: Ես սկզբում դիմադրեցի: Նա փաթաթուեց ինձ մի օր և թոյլ չտուեց գործարան գնալ: Երկրորդ օրը նոյնը կրկնեց, երրորդ օրը, չորրորդ օրը նոյնպէս: Ոտս կտրուեց գործարանից և պարապ ժամերս սկսեցի անցկացնել գինետներում: Այդ ժամանակ իմ արհեստակից Մնացականն էլ գործարանից դուրս էր եկել և ամեն տեղ ընկերանում էր ինձ. նա էլ օգտուում էր Կատեայի ինձ տուած փողերից: Ես դառել էի մի սրիկայ, իմ ամենամեծ զուարճութիւնն էր քաղաքից դուրս կուռել թուրք տղաների հետ, ապա վերադառնալ գինետուն և խմել մինչև կէս գիշեր, երբ պարտաւորուած էի տանը լինել: Ինչպէս Յովհաննէսը, այնպէս էլ ես Կատեայի ստրուկն էի դառել: Մի անգամ նրանից փող ուզեցի, չտուեց առարկելով թէ Յովհաննէսին է տուել և թէ

ինքը չի կարող երկու մարդու պահել: Ես վերաւորեցի նրան ամենաժանր խօսքերով և հեռացայ տնից: Երկրորդ օրը գնացի պաշտօն փնտուելու, բայց կէս ճանապարհից յետ դարձայ տուն, Կատեայից հազար աղաչանքով փող ստացայ և գնացի զուարճանալու: Մի օր էլ Կատեան ասաց ինձ, որ ցանկանում է Յովհաննէսից, այդ քուրջի կտորից ազատուել: Երեկոյեան կիսահարբած դրութեան մէջ երբ նա վերդարձաւ տուն, նրան առաջարկեցի, որ կամ ինքը հեռանայ այդ տնից, կամ ես կհեռանամ: Նա հայհոյեց ինձ, ես թակեցի նրան ու դուրս արի: Երկրորդ օրը ոստիկանութեան միջոցով նա ինձ իւր տնից դուրս անել տուեց:

Մենք քայլում էինք զանդաղ քայլերով, ծովը ծփում էր, քարերն ու աւազը խշխշում էին մեր ոտերի տակ, հեռուից երևում էին նիրհելու պատրաստուող գործարանական մեծ քաղաքի լապտերների աղօտ լոյսերը: Մանուկի պատմածն ինձ աւելի քան զզուելի էր թւում, իսկ նրա ընդհատումները տանջում էին ինձ: Ինձ թւում էր, թէ կայ մի գերբնական ձեռք, որ մեխում էր նրա կոկորդի մէջ խօսելու ժամանակ և չէր թոյլ տալիս, որ նա հանգիստ շունչ քաշի. նա պարզապէս տանջւում էր:

—Մի քանի օր յետոյ Կատեան իմ պատճառով մեծ ընդհարում էր ունեցել ամուսնու հետ: Յովհաննէսը կաթսայով խփել, պատուել էր նրա գլուխը և երբ նա նուազած վեր էր ընկել, օգտուելով հանգամանքից, նրա սնդուկը կտրել, մէջը

գտնուող դրամն ու թանկագին իրերը վերցրել ու անյայտացել էր: Չորս օր նա տուն չեկաւ: Ես անձամբ խնամում էի Կատեային: Այնուհետեւ երբ Կատեան վերկացաւ, ինձ առաջարկեց կամ առ միշտ հեռանալ իրենց տնից կամ իրեն ազատել այն քուրջի կտորի ձեռից: Մի ամիս էլ անցաւ, դարձեալ մարդ ու կնկայ մէջ կռիւ տեղի ունեցաւ: Մարդը տանը չէր, որ այդ օրը ուշ երեկոյեան ես տուն եկայ: Կատեան ինձ տեսնելուն պէս սկսեց լաց լինել և գանգատուել, որ ես իրեն բաւականաչափ չեմ սիրում և թէ իւր նամուսն իմը չեմ համարում: «Եթէ խկապէս ինձ սիրես, ասում էր նա, եթէ իմ նամուսը պաշտպանել ուզես, մի թէ թոյլ կտաս, որ ուրիշն ինձ տիրանայ, ինձ թակի, ինձանից գողանայ, ինձ անառակ անբարոյական կոչի: Դու ինձ չես սիրում, այլապէս ինձ չէիր թոյլ տալ, որ ծախէի իմ մարմինը իւրաքանչիւր հանդիպողին. որպէսզի հաց աշխատէի և տայի իմ մարդուն ուտելու»: Երկար լաց էր լինում նա: Ամեն ջանք գործ դրեցի նրան մխիթարել, վերջապէս երգուեցի իւր ամուսնուն սպանել:

Մանուկը դողաց բոլոր մարմնով, ջղաձգաբար ատամները կսլան միմեանց, և նա լռեց: Յետոյ աւելացրեց կամայ՝

—Այդ գիշեր խեղդեցինք ես ու Մնացականը Յովհաննէսին և բերինք դիակը ծովը գցեցինք...

Նա նստեց խոնաւ աւազի վրայ, իսկ ես անզգայաբար կանգնեցի նրա մօտ: Գտնուում էի անելանելի դրութեան մէջ. վախենում էի և մօտը

կանգնած մնալ. և նայում էի ծովին, որի ալիքները հետզհետէ մօտենում էին մեզ և գալիս մեզ շատ մօտ քսուում աւազեայ օփերին ու հեռանում: Կենդանի շունչ չկար և ջրերի մէջ, միայն հեռուից լսում էր գործարանական քաղաքի երկաթեայ մեքենաների յարատե խուլ մռնչոցը: Իւրաքանչիւր ալիքի փրփրի մէջ ինձ թւում էր, թէ տեսնում էի խեղճ Յովհաննէսի մարմինը, որ գցել են ծովը: Ինչէր չի թագցրել իւր ծոցում այդ անկշտում ծովը, ի՜նչ գաղտնիքներ, ի՜նչ յօյսեր ու յուզումներ...

—Նա ոչինչ չկարողացաւ ասել մեռնելու ըօպէին, — մրմնջաց ինքն իրեն լսելու ձայնով Մանուկը, — և շատ տմարդի կերպով մենք նրան խեղդեցինք: Այդպէս ուզեց Կատեան և նրան հակառակել չէի կարող:

Բոպէական լուրթիւնից յետոյ նա շարունակեց.

—Ձեռս չդողաց այդ մարդասպանութիւնը գործելիս: Ո՛հ, հրեշայի՛ն էր...

Մի ժամից աւելի մնացինք այդտեղ, իսկ երբ բարեկամիս սթափեցրի և օգնեցի վեր կենալ և տուն դառնալ, նա երկար ժամանակ կանգնած մնաց աչքերը ծովին յառած, ապա դարձաւ դէպի ինձ և ասաց.

—Խիղճը մի շատ անաստուած դատաւոր է. նա ինձ տանջում է անողորմաբար, գիշեր ցերեկ հանգիստ չի տալիս ինձ, սակայն հանգիստ է տալիս նրանց, որոնք աւելի մեծ ոճիրներ են գործում...

Մի քանի քայլ առաջ գնաց և առանց ինձ ուղղելու իւր խօսքերը, այլ կարծես ինքն իրեն, շարունակեց.

— Կատեան լաւ կին է եղել, նրա առաջին ամուսինը այրուել է մեր տիրոջ գործարանում մի մեծ հրդեհի ժամանակ և իբրև կենսաթոշակ Կատեային մեր տէրը տուէլ էր 500 ըուբլի միայն, այն էլ նրանից հաճուք գնելով:

Մի քանի քայլ էլ առաջ գնացինք:

— Կատեային ոչ ոք չուզեց օգնել, ինքն էլ չկարողացաւ իրեն օգնել և այսօր նա մի նշանաւոր ոճրագործ է: Նա այլևս ինձ չի տեսել այն օրից, երբ Յովհաննէսի խեղդած դիակը տնից դուրս տարայ:

Երկար գնում էինք, մինչև հասանք մեր գործարանի դուռը:

— Խիղճը աղքատին է տրուած, հարուստը խիղճ չունի:

Նրանք նրա վերջին բառերն եղան այդ երեկոյ: Երկրորդ օրն այլևս նրան չհանդիպեցի:

Ասում են, որ նա այժմ հեռու մի քաղաքում սեփհական դարբնոց ունի:



է.

ԲԱՐԵՊԱՂՏ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ

Պարսկական մի քաղաքում Մուհարէմ (սգի) ամսի վերջին օրերն էին անցկացնում մուկեռանդ շիաները: Գիշերից բաւական անցել էր, վերադառնում էի մի ճաշկերոյթից և որովհետև բնակարանըս բաւական հեռու էր քաղաքի կենդրոնից, ուզում էի գնալ հիւրանոց, որը գտնուում էր կենդրոնական մեծ փողոցի վրայ:

Շատ հետաքրքրական է տեսնել այդ ամսին բարեպաշտ մուսուլմանների բարեպաշտութիւնն արտայայտող այն ցոյցերը, որոնցով նրանք յիշատակում և ողբում են իրենց մեծ սուրբերի նահատակութիւնը:

Գարնան վերջին ամիսն էր. բայց այդ տարի որքան խիստ էր ձմեռը, այնքան շուտ էին սկսուել ամառնային շոգերը: Նոյն իսկ գիշերուայ այդ ուշ ժամին դժուար էր անցնել քաղաքի ամենալաւ, ամենահարուստ փողոցով, որի մի ծայրում, մի մեծ հրապարակի վրայ, բարձրանում էր նահանգապետի բնակարանն ու պաշտօնատունը, իսկ ամբողջ փողոցի երկայնքում գտնուում էին երկ-

տակ ապրանքով լցուած գեղեցիկ խանութները: Օգը չափազանց ծանր էր, փողոցի այս ու այն մասում վառուած էին մաշալլաներ, որոնք օգը լըցնում էին խեղդող նաւթահոտով ու վառուած ճարպի ճենճերով: Զրավաճառների և մրգավաճառների խանութների առաջ տիրում էր կատարեալ գարշահոտութիւն և խոնաւութիւն, իսկ անցնող ահագին բազմութեան բարձրացրած փոշին մութ ամպի պէս երբեմն ծածկում էր անցորդի տեսողութիւնից իրենից քիչ հեռուն գտնուող ամեն ինչ, և այդ ժամանակ բաւական ճնշող տպաւորութիւն էին գործում հեռուում վառուող մաշալլաների հետզհետէ աղօտացող լուսերը: Դրա վրայ պէտք է աւելացնել և՛ այն, որ մարգարէների համար իրենց անձը տանջանքի ենթարկող բարեպաշտ մուսուլմաններն ահագին աղաղակ էին բարձրացնում իրենց հեկեկանքով, աղերսանքով և կուրծք թակելով, և այդ աղաղակի մէջ շատ պարզ լսում էին ջրավաճառների ձայները, որոնք գովում էին իրենց գոյնզգոյն շարբաթները:

Ուղեղս թմրած էր և շտապում էի շուտ հիւրանոց հասնել, բայց լանկարծ կանգ առայ. մի աղաղակ, մեծ ու երկար, լսողութիւնս գրաւեց և ականջներս սրեցի:

— Կառք, կառք, — գոչում էր մէկը հայերէն լեզուով, և տեսայ փոշու մէջ մի պատանու, որ վազելով գալիս էր դէպի իմ կողմը:

Մի րոպէ յետոյ նա ինձ մօտ էր, բոլորովին քրտնած, փոշոտուած և դողդոջուն:

— Ո՛ւր ես գնում, ինչո՞ւ ես վազում, հարցրի.

— Կառք եմ ուզում, — պատասխանեց նա և առաջ վազեց:

Չհասկացայ, թէ ինչ էր անում կառքը: Մի րոպէ մտածեցի լետ դառնալ, բայց օտարական լինելս ինձ վստահութիւն տուեց առաջ գնալու և տեղեկանալու, թէ ինչ է պատահել:

Բարեպաշտ լաց ու կոծի աղաղակները կըտրուել էին, փոշին մի քիչ հանդարտուել, բազմութիւնը քչացել էր: Մաշալլաների լուսով տեսայ շատ պարզորոշ կերպով, որ փողոցի հակառակ ծայրից գալիս է դէպի իմ կողմը մարդկանց մի մեծ խումբ: Լսում էր կանացի բարձրագոյ ճիչ: Սրագքայներով դիմեցի առաջ և ահա ինչ ներկայացաւ իմ աչքերին: Խմբի առաջից գալիս էր մի պատանի մուսուլման ոտաբօբիկ, ամբողջ իրանը բաց, գլուխը ամելած, — մի վայրենացած վրէժխնդրութիւն: Նա շալակել էր մի շատ ջահել աղջիկ, նրա երկու բազուկներն իւր ուսերի վրայ պահած: Նրա լետեից եկող մի քանի նոյնպէս պատանի բարեպաշտ մուսուլմաններ, որոնք նոյնպէս բօբիկ ոտներով, բաց իրանով և ամելած գլուխներով էին, իրենց ձեռքում ունեցած բաւական հաստ շղթաներով անխնայ խփում էին շալակած աղջկան՝ առանց ուշադրութիւն դարձնելու, թէ նրա որ տեղերին են հանդիպում շղթայի ծանր հարուածները: Աղջիկը ձայն ծպտուն չէր բարձրացնում. նա երեսը թագցրել էր և ոչնչով չէր կարողանում դիմադրել իւր գլխին, ուսերին տեղացող հարուած.

ների տարափին. նա գալարուում էր, ոտները շար-
ժուում, ուսերը բարձրացնում կամ ձգում և շարու-
նակ դէմքն աւելի ու աւելի պինդ սեղմում իրեն
շալակողի կռնակին: Նրա մազերը բոլորովին ցրիւ-
էին եկած գլխի վրայ, իսկ սաւանը ցած էր ընկել:
Նրանցից քիչ հեռու մի քանի արիւնարբու Փար-
րաշներ, շրջապատուած նոյնպէս ոտաբոբիկ և ի-
րանը բաց մի քանի տասնեակ մարդկանցով, ան-
խնայ դանահարում ու ոտնահարում էին մի երկ-
րորդ կնոջ, որի սաւանը նոյնպէս փաթաթուած
էր ոտներին: Մի հսւժկու տղամարդ նրա աջ
թևից բռնած քաշ էր տալիս նրան գետնի վրայ:
Կինը աղաղակում, գոռում էր բարձր ձայնով.

— Խնայեցէք, խնայեցէք աղջկանս, նրան ըս-
պանում են.

— Լռի՛ր, շու՛ն, — լինում էր նրա պատասխա-
նը և ոտի ու փայտի հարուածները շարունակ ան-
խնայ իջնում էին նրա ուսերին, գլխին ու ոտնե-
րին:

Նրա դէմքը արտայայտում էր զօրաւոր տան-
ջանք և յափշտակուած զաւակի համար տանջուող
մօր յուսահատութիւն. գոյն չէր մնացել բոլորո-
վին նրա չորացած, դուրս ցցուած այտերի վրայ.
Դիմագծերը պրկուում էին գանահարութեան առ-
թած գերագոյն ցաւից, իսկ աչքերը արտայայտում
էին կատարեալ լքում ու վրէժխնդրութիւն: Նա
կռուում էր մի բազկով, ոտները շարունակ խփում
էր գետնին և հետզհետէ աւելի բարձր ձայնով էր
աղաղակում: Նրան պատասխանում էին միշտ փայ-

տի շղթայի և քացիների հարուածներով:

— Խնայեցէք աղջկանս, նա մեղք է, շատ ջա-
հիլ է դեռ:

Թէև անդուշութիւն էր իմ կողմից, բայց
հետաքրքրութիւնից դրդուած համարձակուեցի
քարտաշներից մէկին հարցնել, թէ ինչու՞մն է կա-
յանում այդ երկու կանանց յանցանքը:

Նրա տեղ պատասխանեց մի ծերունի խա-
նութպան, որ թողնելով իւր խանութը, շտապել
էր դրանց լետեւից, որպէսզի կարողանայ մի քանի
հարուածներ էլ ինքը տալ այդ դժբաղդներին.

— Մահարէմմի այս սուրբ օրերին, երբ իւրա-
քանչիւր մուսուլման պիտի չարչարի իւր անձը,
այդ չարչարանքով մեծ իմամների գրած տանջան-
քների ցաւը մեղմացնելու համար, երբ ամեն մի
մարդ իւր հոգու փրկութեան մասին պիտի խորհի,
այդ շնացող կինը նոյն այս ամսին, ոչ միայն ին-
քն է շնանում, այլ և՛ իւր աղջկան էլ դուրս է
բերել շնութիւն սովորեցնելու:

Եւ բարեպաշտ ծերունին հայհոյանքի մի մեծ
տարափ թափեց շնացող մօր ու աղջկայ հասցէին
բոլոր լսողները նոյնը կրկնեցին և դարձեալ փայ-
տերի, շղթաների ու քացիների հարուածներ տե-
ղացին տանջուող, քաշ տրուող կնոջ մարմնի բո-
լոր մասերին:

— Գթացէք աղջկանս, խնայեցէք նրան:

Ես այլևս չմնացի այդտեղ: Փայտ շարժեցի
ուժեղ կերպով և սկսեցի արագ քայլերով հեռա-
նալ, բայց երկար լսում էի տանջուող կնոջ աղա-

ղակը, որ միշտ միևնույնն էր կրկնում.

— Խնայեցէք աղջկանս, գթացէք նրան:

2.

ԲԱՐԵՊԱՂՏ ԲՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ

Յուրտ ձմեռային օր էր. սառնաշունչ քամին ամբողջ գիշերն անխնայ հարուածել էր քաղաքի պատերը և իւր շնչով սառցրել, քարացրել քաղաքի փողոցներն ու կտուրները: Թանձր եղեամ էր նստել քաղաքի վրայ և սպիտակացրել ամեն ինչ: Վաղ առաւօտեան դուրս եկայ տնից և արագ քայլերով գիմեցի գէպի գործատեղս: Հազիւ երբեմն երևում էին մի քանի անցորդներ, որոնք իրենց բանուորական բարակ շորերի մէջ գողալով, ձեռները գրպաններում դարսած առաջանում էին ըշտապ քայլերով գէպի քաղաքի հիւսիսակողմը, որտեղ գտնուում էին գործարանները: Նրանք հազիւ իրար նայում, բարի լոյս մըմնջում, ապա առանց ոչինչ ասելու միմիանց, շարունակում էին իրենց ճանապարհը: Կտրող ցուրտ էր. վերարկուիս օձիքը վեր բարձրացրած, ձեռներս գրպանումս, գնում էի արագ, առանց շուրջս նայելու: Վերջապէս հասայ մի եկեղեցու առաջ, ուր հաւաքուած էին մի քանի տասնեակ հոգի, որոնք առանց ուշադրութիւն դարձնելու քամու հարուածներին և սարնասարսուռ ցրտին բարձր ձայնով վիճում էին միմիանց հետ: Հետաքրքրուած մօտեցայ: Եկեղեցու բազի դռան առաջ կանգնած էր սևազգեստ հաստ

մուշտակի մէջ ծածկուած քահանան, որը ձեռները դրած Փարաջայի թւքերի մէջ և ցրտից բոլորովին կարմրած, բղաւում էր ժամկոչների վրայ:

— Սնպիտաններ, ծոյլեր, ինչո՞ւ ուշադրութիւն չէք դարձնում ձեր շուրջը. եկեղեցու բազի դռնից ահագին զամբիւղ են ներս գցում և դուք չէք տեսնում:

Ժամկոչներից աւելի հասակաւորը անհամարձակ և դողդոջոյն ձայնով պատասխանեց տէր հօրը՝

— Կէս գիշերից անց ինչպէս կարող էինք երևակայել, թէ այսպիսի բան կպատահի:

— Ա՛յ պատահել է, հիմայ ինչ պիտի անէք այդ լակոտին:

Նս մօտեցայ և տեսայ գետնի վրայ, եկեղեցու պատի տակ դրուած մի զամբիւղ, որի մէջ տաք շորերում փաթաթուած մի երեխայ կար: Նրա միայն դէմքն էր երևում, որը ցրտից կարմրել էր, իսկ աչքերը սև սաթի նման փայլուն արտևանունքով շատ գեղեցիկ ներդաշնակութիւն էին կազմում կարմրած այտերի և իրեն շրջապատող սպիտակ շորերի հետ: Հազիւ մի ամսական լինէր այն դժբաղդ մանուկը, որին իւր ծնողները՝ իրենց լանցանքը ծածկելու համար, բերել զցել էին եկեղեցու դռնից ներս, լուսալով, որ մի բարի մարդ կվերցնի, կորզեզրի և կդաստիարակի նրան: Նա չէր լալիս, ակնապիշ նայում էր իւր շուրջը: Մարդիկ նայում էին նրան և ոչ ոք չէր մօտենում:

Քահանան առանց նրա վրայ ուշադրութիւն դարձնելու դժգոհ հայեացքը զցել էր ներկայ եղող-

ների վրայ և շարունակում էր բարկանալ.

— Որքան անխիղճ պիտի լինեն մի երեխայի ծնողները, որ նրան այս ցուրտ ձմեռը ձգել են բացօդեայ մի տեղ. նրանք մի ըուպէ իսկ չեն ցանկացել մտածել, որ ցուրտը նրան կսպանի: Բայց միթէ յանցաւոր սէրը մտածել կարող է:

Մարդիկ նայում էին շարունակ երեխային, իրար հետ խօսում էին նրանք, ծնողների անբարոյականութեան մասին և հեռանում:

— Բարի ժողովուրդ, բարեպաշտ հաւատացեալներ, — ասաց ծերունի ժամկոչը հանդիսատեսներին դիմելով. — միթէ չի գտնուել ձեր մէջ մէկը, որ բարի լինի այս խեղճ մանկիկին խնամել: Ինչպէս երևում է քրիստոսեայ ծնողների որդի է, գթացէք սրան, տարէք ձեր տունը:

Մարդիկ, բարեպաշտ քրիստոնեաները հեռացան, ոչ ոք չմնաց այնտեղ, իսկ քահանան շարունակում էր բարկանալ ժամկոչների վրայ:

Տիրեց վայրկենական լուռութիւն: Երեխան ըսկսեց լաց լինել:

Շատ աղիողորմ տեսարան էր ներկայացնում այդ փոքրիկ անմեղի դուռթիւնը, որ իւր ծնողների մեղաւոր սիրոյ համար դատապարտուած էր բոլորի արհամարհանքին և անտարբերութեան:

Քահանան հեռացաւ, մտաւ եկեղեցի, ծերունի ժամկոչը սկսեց աւելել բազը, իսկ աւելի ջահելը դնաց գործակալ-վարդապետի մօտ նրա պատուէրները կատարելու: Երեխան մնաց մենակ. բացի ինձանից ոչ ոք չկար այնտեղ, և ես վախե-

նում էի մօտենալ, ձեռ տալ նրան:

Ինչպիսի անբաստանութիւններով չէին զըրպարտիլ ու դատիլ ինձ:

Մի քանի ըուպէ յետոյ եկեղեցու դռան մօտեցաւ մի պառաւ կին, բոլորովին ցնցոտիներէ մէջ գրկուած: Նա գլխին կրում էր ծակոտուած, պատառոտուած մի շալ, հագին ունէր մի շատ հին վերարկու, շրջագետն ամենահասարակ չթից կարուած հագիւ ծածկում էր սրունքները, իսկ կարերը քանդուած կօշիկ ծայրից գուրս էին եկել ոտի մատները: Նրա գէմքը արտայայտում էր կատարեալ զրկանք, աչքերի մէջ քաղց էր երևում, իսկ շարժմունքը վեհերոտ էին: Նա եկել էր ձմեռուայ այդ ցուրտ օդին կանգնել ժամի դռան առաջ և ձեռք մեկնել իւրաքանչիւր անցնողին: Նա ունէր տանը թոռներ, որոնք ամբողջ գիշերը հաց էին ուզում, հիւանդ պառկած հարս, որի վրայ ձգելու վերմակ էլ չունէին: Նա եկել էր հարազատների համար անցորդների գթութիւնը հայցելու և ահա նա լսում է իւր թոռներից աւելի թշուառ մի մանուկի ձայն, մօտենում է նրան, վերցնում գամբիւղի միջից, գրկում ու ըսկսում օրօրել թեւերի վրայ, խօսել նրա հետ վըշտացած տատիկի փաղաքշական ձայնով, համբուրել, կրծքին սեղմել և ջանալ նրա ձայնը կտրել:

— Իմ թոռները շոր չունեն, այն, բայց չէ սր նրանք տատիկ ունեն, որ իրենց համար մուրում է, մայրիկ ունեն, որ իրենց համար լուանում է. նրանք ունեն մի աղքատիկ յարկ, որի տակ պատս-

պարուում են ձմեռուայ ցրտից, իսկ դու, դժբաղդ մանուկ, ունեոր ծնողների թշուառ որդի: Բաղդը ձգել է քեզ դուրսը, փողոց, և ոչ ոք չի ցանկանում քեզ տերութիւն անել: Մի լաց լինիր, մանկիկս, ես քեզ էլ կտանեմ մեր տուն, քեզ համար էլ կըմուրամ և թող Աստուած իմ արտասուքը քար դարձնի ու քո ծնողների աչքը քցի:

Երկար նա խօսում էր և երգում, օրօրում մանկանը և համբուրում: Ես մօտեցայ և ունեցածըս կիսեցի նրա հետ: Նա սրտագին մաղթանքներով հեռացաւ ժամի դռնից:

Եւ երբ մարդիկ լսեցին, որ ամենքին ծանօթ մուրացկան պառաւն է տարել մեծ եկեղեցու դռնից ներս ձգուած «անառակ» ծնողների որդուն, ասացին միմիանց.

— Նա այժմ աւելի աներեսաբար կմտնի սրանրա տունը և բոլորին կանհանգստացնի իւր անվերջ պահանջներով:



Ը.

Թ Ո Յ Ն

Նատալիա Ա.Ֆանասիենա Սախարնիկովային ճանանչեցի Բագուի առաջին կարգի վաճառական և քաղաքային խորհրդի ընտրեալ իրաւասու Գուգուշանով լիսնամեայ Արտէմ Ֆէօօրովիչի տանը, ուր նա վարում էր դաստիարակչուհու պաշտօն և ուր ինձ նոր էին հրաւիրել իբրև այցելու ուսուցիչ հայերէն և ֆրանսերէն լեզուների:

Նա ուես այն ինքնավստահ օրիորդներից էր, որոնք գալիս են հեռաւոր հիւսիսից «վայրենի» կովկասցիներին կրթելու և նրանց հարստութիւնից օգտուելով իրենց ապագան ապահովացնելու համար: Նրանցից ոմանք, շնորհիւ իրենց գեղեցկութեան կատարեալ յաջողութիւն են ունենում իրական կեանքի մէջ և դառնում են հերոսուհիներ այնպիսի խալտառակ սիրավէպերի, որոնց մասին լսելիս իրենց ծնողներն իսկ խաչակնքում են երեսները: Իսկ ոմանք՝ աւելի լուրջ դաստիարակուած և աւելի գօրաւոր բնաւորութեամբ՝ կարողանում են ազատուել անխուսափելի կորուստից և իրենց տոկուն աշխատութեամբ պատկառելի դիրք են զբաւում ինտելիգենտ հասարակութեան մէջ:

Նատալիա Ա.Ֆանասիևնան այս վերջիններէց էր, և մեր առաջին տեսակցութեան ժամանակ նա շատ նպաստաւոր տպաւորութիւն թողեց ինձ վրայ իւր լուրջ դատողութիւններով և ծաւրահեղ արմատական գաղափարներով: Նա գեղեցիկ էր ուռուական վայելուց գեղեցկութեամբ: Ունէր երկար հասակ, մուգ շագանակագոյն մազեր, նուրբ մորթ և կարմիր դժգոյն այտեր: Հագնուում էր շատ պարզ և ճաշակաւոր, ինչպէս առհասարակ հագնուում են ինտելիգենտ և պարզասէր կանայք: Ունէր կապուտ, խոր թափանցող աչքեր և մեղամաղձոտ, կասկածոտ ու թափառող հայեացք:

Եւ այդ կապուտ, խոր, թափանցող աչքերն ու մեղամաղձոտ, կասկածոտ ու թափառող հայեացքը նրան տարբերում էին շրջապատող բոլոր մահկանացուներից և առաջին անգամից ուշադրութիւն էին գրաւում: Մասնաւորապէս շատ գրաւեցին այդ աչքերն ու հայեացքն իմ ուշադրութիւնը և փորձեցի կարգալ նրանց մէջ դառն խոստովանութիւնների մի լիշատակարան:

Նրա անցեալից հարեանցի կերպով իմացայ, որ նա եղել է Սարատովի ինչ որ աղքատ արհեստաւորի աղջիկ, ծնած օրից շատ դառնութիւններ կրել, սովորել է մի բարերարի հաշուով տեղական զիմնազիտում և միջնակարգ ուսում ստանալուց յետոյ եկել է Բագու, առասպելական հարստութեան այս աշխարհը, մի պաշտօն ճարելու իւր աղքատ ու այրի մօրը և երկու անչափահաս եղբայրներին օգնելու համար: Վերջապէս այլ և այլ

տեղեր պաշտօններ վարելուց յետոյ բազմ է ունեցել քառասնեհինգ բուրլի ամսականով դաստիարակչուհի դառնալու: Գուգուջանովների մօտ:

Աւելի ոչինչ չկարողացալ իմանալ, որովհետև ոչ միայն իւր անցեալի մասին, այլ և առհասարակ շատ քիչ էր խօսում նա և իմ հարցերին տալիս էր կարճ և հակիրճ պատասխաններ աւելի քաղաքավարութիւնից զրդուած, քան խօսելու բաղձանքից: Նա աւելի լսում էր քան խօսում, մինչև իսկ վերոյիշեալ տեղեկութիւնների մեծ մասը ինձ հաղորդեց Մարիա Արտեմիևնա Գուգուջանովնան, որին ես կոչում էի Մարօ և որ ինձ գրած նամակներում ստորագրում էր Մարիամ Գուգուջանեան:

Այս վերջինն էր նաև, որ ինձ ծանօթացրեց Նատալիա Ա.Ֆանասիևնայի հետ և որ ներկայ էր մեր խօսակցութեան ժամանակ:

Գոհունակութեամբ բաժանուեցի նրանցից, բայց կարծում եմ, որ օրիորդ Սախարնիկովան ինձանից շատ էլ զոհ չմնաց, որովհետև նա առհասարակ նախապաշարուած էր quasi—քաղաքակրթուած հայերով, թէև այդ բանը նրան չարքելեց բաժանուելիս Մարիամ Գուգուջանեանի հետ ինձ մինչև դուռը ճանապարհ զնելու:

—Վաղը էլի կըտեսնուենք չէ, հարցրեց նա:

— Ի հարկէ, ի հարկէ, պատասխանեց իմ տեղ օրիորդ Գուգուջանեանը և դառնալով ինձ ասաց հայերէն լեզուով.

—Որքան կարող ես չուտ եկ էգուց, էլ դժժուարութիւն չունենք իրար տեսնելու:

Եւ, վերջին անգամ սեղմելով նրանց ձեռ-
ները, հեռացայ:

Բ.

Քանի խօսում էի Նատալիա Ա.Ֆանասիենայի
հետ, այնքան զգալի չէր նրա ինձ վրայ արած
ազդեցութիւնը, բայց երբ հեռացայ նրանից, կա-
տարելապէս զգացի, որ ուշադրութիւնս նրա վրայ
է: Ես ինձ սիրահարուած կը կարծէի, եթէ ար-
դէն սիրում չ'լինէի օրիորդ Գուգուջանեանին, ո-
րից փոխադարձաբար սիրում էի: Առանց սիրա-
հարուած լինելու էլ սակայն այդ ոռւս աղջիկն
ինձ կաշկանդել էր բոլոր զգացումներովս: Երբ
գործերս վերջացրած և առօրեայ պարապմունք-
ներս կատարած հանգստանալու համար ընկել էի
մահճակալիս վրայ և մտածում էի, յանկարծ իմ
առաջ պատկերացաւ նա իւր կապոյտ, խոր, թա-
փանցող աչքերով, իւր մելամաղձոտ, կասկածոտ ու
թափառող հայեացքով: Եւ ես զգացի, որ նա զրժ-
բաղդ էր և հիւանդ, և ոչ ոք չունէր, որ իրեն,
օգնի, մխիթարի: Ես միշտ խանդաղատալի համակ-
րութիւն եմ տածել հիւանդների, թշուառների և
զժբաղդների նկատմամբ, ես սիրել եմ միշտ նը-
րանց ամենաանկեղծ զգացումներով: Բացի այդ
խանդաղատանքից Նատալիա Ա.Ֆանասիենայի ինձ
հալածող պատկերը ներշնչում էր ինձ նաև տխուր
նախազգացումներ, և հաւատում էի, որ այդ մը-
տածկոտ և կասկածոտ աղջիկը իւր մելամաղձոտ
հայեացքով ահագին յուզումներ պիտի ազդէ ինձ,

անսպասելի փոփոխութեան պիտի ենթարկի իմ
խաղաղ ու միօրինակ կեանքը:

Երկար մտածում էի նրա մասին, նրա լռու-
թիւնն ինձ չէր զարմացնում, բայց ինձ հիացնում
էին նրա դատողութիւնները. մտածում էի, որ նա
որքան սակաւախօս է, այնքան աւելի շատ լամառ
աշխատող, ուստի աւելի ու աւելի գրաւում էր իմ
համակրութիւնը:

Երկրորդ օրը հանդիպեցի նրան միւսնոյն տան
մէջ դասի ժամանակ: Համակրութիւնս կրկնապատ-
կուած և աւելի շատ ազդուած հեռացայ նրանից:

Եւ այսպէս շարունակաբար միշտ և ամեն օր
տեսնում էի Սախարնիկովային: Օրից օր նրա մե-
լամաղձոտութիւնը փոխում էր աւելի մռայլ ար-
տայայտութեան և օրից օր նա աւելի քիչ էր խօ-
սում և աւելի շատ մտախոհ դառնում: Նա գրե-
թէ ճնշում էր մարդկանց ներկայութեամբ և
մենութիւն էր փնտռում միշտ: Մի քանի անգամ
sous entendu իմ ցաւակցութիւնը և իրեն օգնելու
պատրաստականութիւնս լայտնեցի, մի քանի ան-
գամ էլ հեռուից հեռի ակնարկեցի իմ տխուր-
թեան մասին: Բայց նա միշտ խուսափում էր ինձ
պատասխանելուց և նկատելի դժգոհութեամբ գը-
լուխը դարձնում էր ու երկար ժամանակ լռում:

Նա սկսել էր առհասարակ աւելի շատ առան-
ձնանալ իւր սենեակում և երբեմն երկար մտորում
էր պատշգամբում ընթերցանութեան պատրուա-
կով, թէև երբէք չէր կարդում ձեռքին բռնած
գիրքը կամ թղթերը դարձնում էր իրար ետևից

առանց ոչինչ հասկանալու, ինչպէս այդ յայտնուում էր նրանից, որ նա մի կարդացած երեսը երկրորդ, երրորդ անգամ էր կարդում և շատ անգամ զրքի թղթերը դառնում էին քամու քմահաճույքի համեմատ: Նա այնքան էր անձնատուր եղած իւր մտքերին, որ նկատելի կերպով սխալուում էր դաս տալիս, ինչպէս նաև զրեթէ չէր հասկանում իւր արտասանած կամ լսած բառերի ճիշտ իմաստը: Բացի ինձանից, նրա այդ վիճակը նկատել էին և բոլոր իրեն շրջապատողները, մինչև իսկ Մարիա Արտեմիևնան քանիցս նրան իւր հօր մօտ անբաստանեց, բայց այս վերջինս շատ ներողամիտ վերաբերուեց օրիորդ Սախարնիկովայի «թուլութեան» և «անհոգութեան», նա որ միշտ խիստ էր վարուել իւր բոլոր ստորագրեալների և ծառայողների հետ:

Մի օր էլ, երբ սովորականի նման գնացել էի փոքրիկ Գուգուջանեանների հետ զբաղուելու, Մարիա Արտեմիևնան ինձ յայտնեց, որ Նատալիա Աֆանասիևնան այդ օրը երբէք դուրս չի եկել իւր սենեակից

Մի քանի ըոպէ լետոյ բժիշկ եկաւ:

Հարցրի այս վերջինից նրա հիւանդութեան մասին:

Նա ոչինչ չպատասխանեց, միայն խորհրդաւոր կերպով գլուխը շարժեց ու հեռացաւ:

Մարիամ Գուգուջանեանը, որ առհասարակ չէր ազդուած այն գարշելի միջավայրի սպանիչ մթնոլորտից, ուր ծնուել, սնուել ու շնչել էր, որ

շնորհիւ Թիֆլիսում ստացած ազատ դաստիարակութեան, ուր ապրել էր իւր աշակերտական տարիների ընթացքում, ինտելիգենտ, ազատամտ և ինքնաճանաչ էր դառել, համակրում էր բոլոր լուրջ և զարգացած մարդկանց, և որ սիրահարուել էր ինձ վրայ «միմիայն ինձանում իւր սիրած առաւելութիւնները տեսած լինելուն համար», ինչպէս կրկնում էր միշտ, Մարիա Գուգուջանեանն, ասում եմ, մի անբացատրելի հակակրութիւն էր տածում դէպի Նատալիա Աֆանասիևնան և զրեթէ ատում էր այդ անծանօթ և օտար աղջկան, որ մուտք էր գործել իրենց տուն միմիայն բարի դիտաւորութիւններով և որ արժանի էր յարգանքի և համակրանքի իւր լուրջ դաստիարակութեան, տոկուն աշխատութեան և անկախ դրութեան համար, որոնք ձեռք էր բերել երկար տանջուելուց և անթիւ գրկանքներ կրելուց լետոյ:

Չեմ կարող ասել, թէ ինչ դժգոհութեան տեղիք էր տուել այդ ուսու աղջիկը օրիորդ Գուգուջանեանին և միայն մտածում էի, որ նրանք գուցէ իրար հետ ընդհարումներ են ունեցել և դադափարով իրար հակասում են, թէև ինձ հետ այդ մասին ոչինչ չէին խօսել նրանք, և ես էլ հաստատ ոչինչ չէի իմանում, բայց երբ արդէն մեր պատմութիւնը իւր կատարելութեան հասաւ, ես սկսեցի կասկածել, թէ մի գուցէ Մարիամ Գուգուջանեանը զգացել էր արդէն այն անօրատուութիւնն ու մեղքը, որ այդ օտարականի աղջիկըն իւր վայրկենական թուլութեան համար քսել էր

իւր հօր երեսին և բոլոր Գուգուջանեանների ան-
լան վրայ, և այդ Գուգուջանեաններից մինն էլ
ինքն էր. կամ գուցէ նախազգում էր արդէն, որ
մի օր նախանձորդներ պիտի դառնան: Բոլորովին
ոչինչ հաստատ բան չգիտեմ այդ բոլորի մասին
էլ, միայն գիտեմ, որ Մարիա Արտեմիկեան իւր
զգացած հակակրութեան համար հիւանդ դաս-
տիարակչուհուն շատ քիչ անգամ էր այցելում,
այնպէս որ խեղճ Սախարնիկովայի հիւանդութեան
ժամերն իրենց կատարեալ մենութեամբ ձանձրա-
նալի և դառն էին անց կենում: Երբեմն նրա
մօտ մտնում էին փոքրիկները, բայց նրանք աւելի
աղմուկ էին բարձրացնում ու անհանգստացնում
նրան, քան թէ իրենց ներկայութեամբ թեթևու-
թիւն տալիս նրա ցաւերին: Արտեմ Փէօզօրովիչը
կանոնաւոր կերպով օրը երկու անգամ մտնում էր
հիւանդի սենեակը և ամեն օր աւելի ու աւելի
անհանգիստ ու մռայլուած դուրս գալիս այնտե-
ղից:

— Բոլորովին ոչինչ չեմ հասկանում, ասաց
մի օր ինձ Արտեմ Փէօզօրովիչը. նրան յորդորում
եմ Միքայէլեան հիւանդանոց գնալ և խօստանում
եմ բոլոր ծախսերը վճարել, բայց նա չի համա-
ձայնում, ամենևին մերժում է գնալ:

— Ի՞նչ է առարկում, հարցրի ես, ինչո՞ւ չի
ուզում գնալ:

— Չգիտեմ, ասածներիցը բան չեմ հասկա-
նում բոլորովին:

Եւ առանց բացատրելու թէ ինչ պատճառ-

ներով խեղճ աղջիկը մերժում է այդ առաջարկու-
թիւնը, ներս մտաւ նա իւր առանձնասենեակը
տանող դռնից:

Մօտաւորապէս տասը ընդամենը դուրս
եկաւ նա դէմքի աւելի մռայլուած և խոշոտած
արտայայտութեամբ և, զիմելով ինձ, կատարեալ
անքաղաքավարութեամբ և առանց յառաջաբանի
ասաց.

— Վարժապետ, այս երեկոյ կըզաք զբասեն-
եակ և կըստանաք ձեր վարձը, իսկ հիմայ հեռա-
ցէք այստեղից և այլ ևս ոտք չկոխէք այստեղ:

Եւ գլխարկը ծածկեց ու դուրս ելաւ:

Մարիա Արտեմիկեան լսեց բոլորը, ինչ որ
ասաց իւր հայրը, և մի վախկոտ հայեացք գցեց
ինձ վրայ, իսկ երբ առանձին մնացինք, դողալով
բռնեց ձեռներս և, առանց ոչինչ արտասանել կա-
րենալու, աւելի ու աւելի սեղմում էր նրանց:

Նրա վախկոտ հայեացքից և դողացող շըն-
չառութիւնից հասկացայ. որ նա էլ սկսել էր
կասկածել մի դժոխային դժբախտութեան և ան-
պատկառ մեխքի մասին, որոնց զօհն էր խեղճ
Նատալիա Ա.Ֆանասիկեան:

— Մի վախենար, սիրելիս, ասացի ես. մենք
առաջուայ նման էլը միշտ կը տեսնուենք իրար
հետ:

Եւ համբուրեցի ճակատից:

— Քեզանից բաժանուելուս համար չէ, որ ցա-
ւում եմ, որովհետեւ գիտեմ, որ դու իմն ես, մի-
միայն իմը...

Նա աչքերը բարձրացրեց, նայեց երեսիս լափող և լացող հայեացքով, յետոյ խոնարհեցրեց գլուխը ու մի քանի վայրկեան ընկաւ լուռութեան մէջ. նրա դէմքի արտայայտութիւնից տեսնում էի, որ նա ուզում է մի բան ասել ինձ, բայց ինքըն իրեն ստիպում է լռել:

— Դու վախենում ես, Մարօ, ասացի ես, և վատ ես անում, որ ինձ չես յայտնում, թէ ինչո՞ւ ես վախենում. չէ՞ որ ինձանից զատ ուրիշ խորհրդական չունես:

Գլուխը ծածկեց ձեռներով ու ղենելով կըրծփիս ասաց.

— Ես սարսափում եմ, սիրելիս, սարսափում եմ... Մի թունաւոր քամու ազդեցութիւնը վաղուց է, որ զգալի էր ինձ համար, իսկ այժմ, այժմ հասկացայ, որ այդ քամին կալ, նա փչում է մեր տան մէջ, նա սպառնում է բարոյապէս սպանել Սօնային և Թամարին, այդ երկու անմեղներին, որոնք անպաշտպան են...

Գլուխը բարձրացրեց, աչքերը յառեց երեսիս և աւելացրեց.

— Այո՛, անպաշտպան են նրանք. թոյնը աւելի շուտ կը ներգործի մատաղ հոգիները վրայ, և ես մենակ եմ, անկարող եմ այդ թոյնի ազդեցութիւնը չքացնելու. նրա գորութեան դէմ կռուելու համար իմ ուժերս տկար են, աննշան, չնչին: Եւ ոչ ոք, այո՛, ոչ ոք ինձ չպիտի օգնի այդ կռուի ժամանակ բացի քեզանից, որովհետեւ հայրս վախկոտ է, նա միայն իրեն ազատելու մասին է

մտածում և իւր ծրագիրներով ահամայ սպառնում է մեզ էլ, իրեն էլ խեղդել. մահացնել այդ թոյնով, այդ անբարոյականացած մթնոլորդի մէջ: Խօստացիր, շարունակեց նա աղբսալի ձայնով և ձեռներս բռնելով, խօստացիր, որ մեզ մենակ չես թողնիլ և կազատես մեզ այդ մահացնող թոյնից...

Եւ մօտեցնելով ձեռներս ջրթներին, սկսեց համբուրել, անյազաբար համբուրել և արտասուքներով լուանալ նրանց:

— Խօստացիր, քո հաւատարիմ սիրոյ անունով երգում կեր:

— Թէկուզ կեանքիս գնովն էլ լինի, ձեզ անտէր չեմ թողնիլ, ասացի ես:

Արցունքները սկսեցին աւելի յորդ վազել նրա աչքերից, այնքան դառն էր իւր խօստովանութիւնը:

Խեղճ աղջիկ, չէր կասկածում մինչև իսկ, թէ որքան աւելի դառը պիտի լինի այն իրականութիւնը, որի շնորհիւ իւր քույրերը, Սօնան և Թամարն, առ միշտ ազատուեցին սպառնացող թոյնից: Եթէ իմանար, երբէք այդ խօստովանութիւնը չէր անիլ:

— Այժմ, որ ձեզ պատմում եմ այս բաները, էլի չեմ կարողանում զսպել արտասուքս, ինչպէս նաև միշտ, երբ լիշում եմ նրանց մասին մենութեանս մէջ, անտանելի յուզումների եմ հնթարկում: Երանի՛ երբէք տեսած չլինէի այդ բաները:

Գ.

Հազիւ երկու ամիս կը լինէր, որ ես իբրև Ֆրանսերէն և հայերէն լեզուների ուսուցիչ մուտք էի գործել Գուգուջանովների տունը, և այդքան կարճ ժամանակամիջոցում ականատես եղայ այնպիսի ստոր և զարհուրելի դրամայի, որ այլևս իւր ազդեցութիւնը կորցրել է Բագուում և անցել է ծիծաղաշարժ կոմեդիաների կարգ, և որի գլխաւոր հերոսներից մինը ես էի լինելու, աւանդ:

Արտեմ Յէօգօրովիչ Գուգուջանովը գուցէ այնքան չէր ազդուել իւր տան մէջ տեղի ունեցած մեզ անծանօթ և իրեն լաւ յայտնի դժբաղդ գործից, որքան ես զգացուել էի, և երբ ինձ բռնորովին հեռացրին իրենց տանը ունեցածս պաշտօնից, շատ ցաւեցի, որ չեմ կարողանալու այդ գործի ընթացքին ցանկալի ուղղութիւն տալ և նրա վերջաւորութիւնը տեսնել, մանաւանդ որ այդ սպառնացող ընթացքն ու անողորմ վերջաւորութիւնը ձգելու էր ինձ սիրող ու պաշտող աղջկայ անունը, թունաւորելու էր նրա երկու փոքրիկ քույրերի մատաղ հոգիները և անուղղակի կերպով խորտակելու էր իմ երջանկութիւնը:

Մի քանի օր կարողացայ ոտս չդնել Մերկուրեւայ փողոցը, ուր գտնուում էր Գուգուջանովի սեփհական տունը, բայց ամեն օր տեսնուում էի Մարիա Արտեմիւսայի հետ, որը ինձ յայտնում էր իրենց տան մէջ տեղի ունեցածները կատարեալ մանրամասնութեամբ: Մի օր վերջապէս այլևս չը կարողացայ դիմադրել հետաքրքրութեանս, որը

ինձ դրդում էր անպատճառ զնալ այնտեղ և տեսնել Նատալիա Աֆանասիւսային, եթէ ոչ նրան օգնելու, գէթ նրան մխիթարելու և քաջալերելու համար:

Պատշգամբի դռնից հազիւ ներս էի դրել ոտս, երբ հանդիպեցայ Մարիա Արտեմիւսային, որը պատուհանի առաջ կանգնած, թւերը խաչաձև կրճքի վրայ դրած մտածում էր: Մի քանի վայրկեան ոչինչ չասացի և կանգնած դիտում էի նրան: Նա զգաց, որ մէկը կայ իւր մօտ, լետուր, գուցէ և զգաց, որ այդ մէկը ես եմ: Գլուխը լետ դարձրեց, տեսաւ ինձ: Առաջին անգամ մի վախկոտ շարժումով ուզեցաւ մօտենալ ինձ և երբ, երկու օր իրար չտեսնելուց լետոյ, թւերս բաց արի նրան գրկելու համար, յանկարծ նա լետ քաշուեց ինձանից այնպիսի մի շարժում անելով, որ կարծես թէ ես բռնի պիտի տիրապետէի իրեն:

—Մարձ, ինձանից փախչում ես:

Նա մի ըօպէ մտածեց, լետոյ երկար հայեացք գցեց ինձ վրայ և ասաց.

—Ո՛չ, դու երբէք չես կարող ինձ խաբել և ես միշտ կարող եմ աւելի ու աւելի պինդ սղմուել կրճքիդ:

Վերջին բառերն արտասանելուց լետոյ ընկաւ գրկիս մէջ և լերաւ աւելի պինդ սղմուեցաւ կրճքիս և չէր ուզում բաժանուել ինձանից: Մի քանի ըօպէ գրկախառնուելուց լետոյ նա գլուխը դրեց թւերիս վրայ և աչքերով սկսեց դիմագծերս քննել: Մի քանի վայրկեան կացաւ այդ դրութեան

մէջ և հազիւ լսելի ձայնով ասաց.

—Ներքը, սիրելիս, որ մի ըրպէսզափ կասկածեցի քո զգացումների անկեղծութեան վրայ, քո զգացումների, որոնք երբէք ինձ չեն խաբել և միշտ կատարեալ խանդաղատանքով նուիրուած են եղել ինձ, բայց ես մեղաւոր չեմ՝ մեղաւորը նա է, նա...

Եւ մատով ցոյց տուեց Նատալիա Աֆանասի-
Լենայի սենեակի կողմը:

—Նա ինչ է արել քեզ:

—Նա խաբուել է, խաբուել, կատարելապէս խաբուել, և կարծեցի, որ ես էլ միշտ խաբուած եմ եղել քեզանից:

Մի քանի ըրպէ լռելուց լետոյ շարունակեց.

—Ես քեզ կըպատմեմ բոլորը առանց քաշու-
ելու, դու կարող ես միայն հասկանալ ինձ ու մը-
խիթարել, և ես կուզենամ միշտ քեզ երախտա-
պարտ մնալ, որովհետեւ քեզ, միմիայն քեզ եմ սիրում:

Դարձեալ լռեց ու ընկաւ մտածմունքների
մէջ:

—Գնանք, գնանք ներս, ասաց ջղալին շար-
ժուծով ճաշասենեակի դուռը ցոյց տալով. այնտեղ
քեզ պատմելու շատ բաներ ունեմ. քեզ կասեմ
այնպիսի մի խօսք, որից կըսարսափեն բոլոր լսող-
ները և որը միայն դու պիտի իմանաս, որովհետեւ
միայն դու չես սարսափիլ, որովհետեւ այդ անի-
ծուած խօսքը արտասանողը քո սիրելի Մարօն է:
Դու ինձ սիրում ես, չէ:

—Այո՛, այժմ և միշտ:

Եւ գրկած նրան ներս տարայ:

Այնտեղ ցոյց տուեց մի աթոռ և ինքը մօտս
նստաւ:

—Ա՛խ, սիրելիս, ասաց նա, գիտե՞ս ինչեր տե-
սայ այս երկու օրերս, —մի ոճիր, մի հրէշային ո-
ճիր, որի հեղինակը... հայրս է...

Վերջին բառը արտասանեց ականջիս, շատ
ցած, հազիւ լսելի ձայնով և բոլոր մարմնովը
սարսուելով:

Եւ առանց ոչինչ աւելացնելու փախաւ ին-
ձանից:

Գ.

Այլևս իմ մնալը աւելորդ էր, ուստի դուրս
եկայ Գուգուջանովների տնից և մոլոր քայլերով
սկսեցի թափառել ծովեզերքում: Լսածներս շատ
հասարակ բառեր էին և Մարիա Արտեմիլենայի
աչքի առաջ ունեցած ոճիրը ամենօրեայ սովորա-
կան մի դէպք, բայց և այնպէս այդ ոճիրն իւր
ամբողջութեամբ ստացել էր մի առանձին նշանա-
կութիւն և ցնցող տպաւորութիւն թողեց ինձ վը-
րայ, այնպէս որ ժամերով չափչփում էի մայիթերը
և չէի զգում թէ ինչ էր կատարուում շուրջս:

Նատալիա Աֆանասիլենային իւր հիւանդանա-
լու, կամ աւելի ճիշտ է ասել, իւր առանձնանա-
լու օրից չէի տեսել, բայց երևակայում էի նրան
նիհարած, դժգոյն, աչքերը խոր ընկած, մազերը
ցիրուցան գրեթէ մի դիակ, որի վրայ հազիւ նըշ-
մարուում են կեանքի ամենաաննշան հետքեր. գոնէ
այդ էի եզրակացնում Մարիա Արտեմիլենայի պատ-

մածներէց: Այդ դիակն ինձ շատ էր տանջում, նա զբաւեւ էր բոլոր բարի զգացումներս և ես ձրգտում էի բոլոր հոգովս նրան փրկել և վրէժխնդիր լինել նրա հարստահարիչից, որ հարստահարիչներն մէջ ամենադժոխայինն էր:

Յետոյ յիշում էի Մարիամին, իմ պաշտելի Մարօյին, որ նոյնպէս հարստահարում էր այն մարդու ձեռքով, որին հայր էր անուանում: Խեղճ աղջիկ, որքան տանջւում էր իւր հօր դործած մեղքի համար: Ինչէր չէր մտածում, ինչ սարսափելի դժբաղդութիւններ չէր նախագգում: Եւ իւր փոքրիկ քօյրերը. տասը տարեկան Սօնան և ութ տարեկան Թամարը: Նրանք ինչ մեղք էին գործել, որ այնպէս բռնութեամբ հեռացուած էին հայրենի տնից, իրենց սիրասուն քօջից, որոնք աքսորի մէջ իրենց մի որևէ ազգականի տանը խաղում էին, պարում էին, առանց զգալու, թէ ինչ է սպասում իրենց:

Եւ դարձեալ մտածում էի առանց մի եւք գտնել կարենալու, որ ազատեմ նրանց այդ վիճակից:

Այդ օրը չնայած որ դեռ յունուար ամսումն էինք, Բագուի արևը փայլում էր արևմտեան հօրեղօնի մօտ և շատերին հրաւիրում էր դուրս գալ իրենց բնակարաններից և վայելել իւր տուած ջերմութիւնը, որ փոխարինում էր ամբողջ մի շաբաթուայ ընթացքում փողոցների մէջ վզվզացող քամուն: Եւ նրա հրաւերն ընդունողներ շատ էին եղել: Ահագին բաղմութիւնը լցրել էր քաղաքա-

յին այգին և ծովափը: Այդ բաղմութեան մէջ ամէն կարգի, ամէն աստիճանի մարդիկ կային՝ և վաճառականներ, և՛ ծառայողներ, և՛ բանուորներ և կանայք:

Ես մտորում էի և այնքան զբաղուած էի մտքերովս, որ գրեթէ կապ չունէի արտաքին աշխարհի հետ:

Յանկարծ մօտովս անցկացաւ մի գոյգ այդ օրուայ պէս ժպտուն, այդ օրուայ պէս սլայծառ: Խօսում էին ուրախ-ուրախ, քրքջալով և բարձրբարձր: Նրանցից մէկը շիք հագնուած մի թիւրք երիտասարդ էր, միլիոնների ժառանգորդ, քաղաքակրթուած, նա զարդարել էր իրեն քաղաքակրթութեան և հարստութեան պահանջների համաձայն, և կոտրատում էր իւր ընկերուհու ականջին ռուսերէն բառեր, որոնք կորցրած իրենց դիւրեկան արտասանութիւնը, դուրս էին գալիս նրա բերնից կատարեալ այլանդակ և ականջ ծակող առոգանութեամբ: Բայց ինչպէս երևում էր, նրան բաւականութեամբ լսում էր իւր ընկերուհին, մի քսանամեայ ռուս գեղուհի, որ նոյնպէս հագնուած էր կատարեալ շքեղութեամբ, որքան ներել էր իւր զրպանը, որտեղից դեռ չմտած դուրս էին գալիս իւր սիրահարների տուած հարիւրանոցները: Այդ երիտասարդ աղջիկն ունէր շատ կարճ մի պատմութիւն, այնքան կարճ, ինչպէս իւր թիւրք կաւալերինը: Վերջինը նաւթային մի կրեսոսի որդի էր, ծնած օրից նեղութիւն չը տեսած. նա ծախսում էր, որքան քէֆը տալիս

էր, և մի անգամ իսկ չէր հարցրել իւր սիրուն ընկերուհուց, թէ ինչ պայմաններ նրան այդ շըրջանի մէջ էին գցել, թէև շատ անգամներ նրա բռի մէջ կոխել էր թղթեր, որոնք հասարակ մահկանացուների համար անմատչելի են և նրա կենացը շատ բաժակներ էր դատարկել: Իսկ գեղեցկուհու կարճ պատմութիւնը բոլոր բազուկները գիտեն: Մի սիրուն աղջիկ մտնում է ծառայութեան մի հարուստի մօտ, խաբուում է նրա խոստումներէրէր, բաց է անում իւր ամօթը նրա առաջ, երկար լաց է լինում, ստանում է 600 ըուբլի և կատարելապէս հաշտուում է իւր աննախանձելի դրութեան հետ...

Եւ... վերջացաւ:

Անցաւ զոյգը, և բաւական ժամանակ չէի կարողանում աչքերս հեռացնել նրանցից: Յանկարծ անզգայաբար ձեռքս դրի ճակատիս վրայ մի միտք վանելու համար, որ նոյնպէս յանկարծակի պաշարեց բոլոր ուղեղս և գրաւեց ողջ ուշադրութիւնս:

Ինչո՞ւ ցաւել Նատալիա Աֆանասիւհնայի վրայ, չէ որ նրա պատմութիւնն էլ այնքան կարճ պիտի վերջանայ, ինչպէս իւր թիւրք կաւալէրի հետ գրեցող «ժպտուն աղջկայ պատմութիւնը»:

Սակայն ես ինքս ինձանից ամաչեցի այդ յանցաւոր միտքն ունենալուս համար: Մտայ աւելի խիտ բազմութեան մէջ այդ միտքը գլխիցս առ միշտ վանելու համար, բայց ոչ միայն այդ բազմութեան աղմուկն ու իրարանցումը, այլև այդ գիշերուայ երկար տևողութիւնը ինձանից չկարո-

ղացան վանել նրան և նա մի քանի շաբաթ շարունակ մնաց նոյն տեղը, ուղեղիս կենդանուամ, հետևելով ու հալածելով ինձ, մինչև որ տեղիք տուեց մի դրական վճիռ գործադրելու մտքին, որը լետագայում չարաչար քաւել տուեց ինձ այդ յանցաւոր միտքն ունենալուս մեղքը:

Այդ մտքի հետ ինձ հալածում էր մի սոսկալի պատկեր որը այդ օրը տեսել էի արևի պէս պայծառ, սիրահարի պէս ժպտուն և երեխի պէս ուրախ: Անմեղութեան պատկերն էր ինձ հալածում, որովհետև իսկապէս անմեղ էր իւր թիւրք կաւալէրի հետ խօսող աղջիկը, թէև իւր կաւալէրի հետ անբարոյականացած էր:

Ե.

Ուղիղ մի շաբաթից ի վեր չէի տեսել Մարիա Արտեմիւհնային, թէև եղել էի բոլոր այն տեղերը, ուր հաւանական էի համարում գտնել նրան, երբ մի նամակ ստացայ նրանից:

Ահա նամակի բառացի պարունակութիւնը:

«Սիրելի բարեկամս,

«Կարծում եմ, որ դու ինձ շատ փնտռած կը լինես, ոչ միայն կարծում եմ, այլև հաւատում դրան, ինչպէս որ լաւ գիտեմ, ինձ չես կարողացել գտնել: Ահա վեց օր է, մօրաքրօջս տանն եմ: Ինչպէս տեսնում ես, իմ ներկայութիւնն էլ հօրս անհանգստութիւն է պատճառում: Դու բոլորը գիտես, այնպէս որ այն բաների մասին ոչինչ աւելի չեմ կարող գրել քեզ, միայն իբրև

նորութիւն կը յայտնեմ այնպիսի դառը բան, որ միտս դալիս մինչև այժմ էլ չեմ կարողանում ինքըս ինձ իմ ամենօրեայ մտատանջութիւններից ազատել:

«Ահա վեց օր է, որ հայրս ինձ առաջարկել է պսակուել, և զիտես ում վրայ, մի Ֆրանս ըստահակի, որին դու քչից շատից ճանաչում ես: Դա յայտնի Դոն-ժուան Իսակ Մանվէլովիչ Կարագեօզովն է, որ սրանից երկու շաբաթ առաջ օպերային ներկայացման ժամանակ երգչուհի^{***}-ին շուացրեց մի քանի ընկերների հետ, միմիայն նրա համար, որ այս չէր ուզեցել նրանց կրքերին ծառայել:

«Իհարկէ կըզարմանաս հօրս արած ընտրութեան վրայ, բայց ո՛չ, մի զարմանար, Կարագեօզովի թեկնածութեան պատմութիւնը երկար է և հայրս զիտէ այդ կատարեալ մանրամասնութեամբ, բացի մի բանից, որ Կարագեօզովին փխցրեց մեր տնից և երեք ամսից ի վեր նա չհամարձակուեց մի անգամ իսկ մեր տունը գալ, և հէնց դրա համար դու նրան մեզ մօտ չտեսար:

«Մօտաւորապէս երկու տարի է, որ նա ինձ հաւատացնում էր թէ ինձ սիրում է և ինձ համար ամեն բան զոհելու պատրաստ է և, առաջ բերելով իւր հարստութիւնն ու շուայութիւնը, ինձ վստահացնում էր, որ իւր կինը լինելով միայն երջանիկ կը լինեմ ես և կը կարողանամ կատարուած տեսնել իմ բոլոր բաղձանքներս: Ես համբերութեամբ լսում էի նրան, թէ և զգում էի նրա ամենօրեայ կեղծաւորու-

թիւնից: Մի օր էլ նա միւսնոյն բաների մասին միւսնոյն հաւատքը ուզեցել է ներշնչել Նատալիա Ս.Ֆանասիւկեանային, որին քանիցս պատմել էի նրա ծիծաղելի խոստովանութիւնները և որի հետ կուշտ-կուշտ ծիծաղել էինք նրա վրայ:

«Ինչպէս քանիցս նրա հետ ունեցած խօսակցութիւններիդ ժամանակ հասկացար, Նատալիա Ս.Ֆանասիւկեան ատում է առհասարակ բոլոր հայերին, մասնաւորապէս այնպիսիներին, որոնք իրենց կիսակատար և թերի դաստիարակութեամբ իրենք իրենց ծախում են քաղաքակրթուածի տեղ, որոնց ամենալաւ տիպարն է Իսակ Մանվէլովիչ Կարագեօզովը. ուստի լսելով նրանից սիրոյ խոստովանութիւն, դուրս արեց նրան իւր սենեակից և սպառնաց բոլորը յայտնել հօրս, եթէ մի անգամ էլ կը համարձակուի որևէ ակնարկութիւն անել ինձ կամ իրեն:

«Այն օրից այլևս մեր տունը ոտք չկոխեց և մինչև իսկ ինձ տեսնելիս շատ սառնութեամբ էր բարևում, այնպէս որ ես կարծում էի, թէ բոլորովին նա վերջ է տուել իւր թեկնածութեան, բայց բոլորովին զարմացայ, երբ հայրս սրանից վեց օր առաջ լուրջ դէմքով խօսք բաց արեց իմ և Իսակ Մանվէլովիչի պսակի մասին:

«Ես արդէն շատ ժամանակից ի վեր պատրաստուել էի հօրիցս այդպիսի առաջարկութիւն լսելու և ըստայնմ պատասխանել կարենալու համար շատ բանաձևներ էի հնարել և պատճառներ էի գտել, ուստի առանց տատանուելու դրականա-

պէս մերժեցի նրա արած առաջարկութիւնը:

«Նա յորդորեց, խրատեց, խորհուրդ տուեց և սպառնաց ինձ, բայց ոչինչ չազդեց ինձ վրայ և ես շարունակեցի հաստատ մնալ իմ վճռին: «Ես միտք չունեմ առ այժմ պսակուելու, ասացի վրձնականսպէս, և եթէ պսակուիմ իսկ, իմ ընտրելիները երբէք չեն լինիլ Կարագեօզովի նման մարդիկ, որոնց միակ առաւելութիւնն է իրենց հարստութիւնը, և ես այդ առաւելութիւնը ընդունում եմ աւելի շուտ արատի և չարամասնութեան տեղ: Այո՛, երբէք, երբէք, չեմ պսակուիլ նրա նմանների վրայ, ես զգում եմ նրանցից»:

«Հայ աղջկանց մէջ շատ քիչերն են այսպէս համարձակ խօսում իրենց հօր հետ և դրականապէս վճռում իրենց ապագան: Գու իհարկէ կըզարմանաս ինձ վրայ, ինչպէս ես արդէն զարմացած եմ, բայց մի կարծիր, որ ես մի առաւելութիւն ունեմ բոլոր իմ ազգակցուհիներից, ո՛չ, դա զըզուանքի մի արտայայտութիւն էր դիպի այն մարդու մեղքը, որին ճանաչել եմ իբրև ինձ ծնող—դէպի հայրս:

«Նա զգաց իւր մեղքը, զգաց այն բառերի ազդեցութիւնը, որ չարտասանեցի ես, բայց պատրաստ էի արտասանելու, եթէ խօսողը հայրս չլինէր: Պատրաստ էի զգուանքի բոլոր մաղձս թափել նրա առաջ: Նա ճնշուեց և կատարեալ խընդրողի ձայնով ասաց. — «Աղջիկս, խնայիր ինձ և պսակուիր, ընտրիր քեզ փեսացու, ու՛մ որ ուզում ես, և ես շատ սիրով կտամ իմ հաւանութիւնը

քո ընտրելիին: Կուգենանս պսակուել Մարութովի, Արսազ Մարտիրոսովի կամ Նուրիջանով Պետր Մինէիջի վրայ, ասա՛, ասա՛, ու՛մ ուզում ես՝ ընտրիր, միայն շուտ, անյապաղ գնա՛ մարդու, հեռացիր իմ տնից... այս անիծուած տնից...»:

«Նա սկսեց լաց լինել:

«Ճշմարիտ է, որ զգում էի նրանից, բայց հայրս էր, տասնևինը տարի շարունակ գուրգուրել էր, զգուել էր ինձ, իւր ձեռները վրայ էր կրել: Նա սիրել էր. համբուրել էր ինձ և, որ գլխաւորն է, նա ոչինչ չէր խնայել իմ դաստիարակութեանս համար: Տեսնելով նրան գլուխը խոնարհեցրած և արտասուքը աչքերին, անբացատրելի ներողամտութիւն և խանդաղատանք զգացի դէպի նա, և երախտագիտական զգացումը զըզուանքի տեղը գրաւեց սրտիս մէջ: «Ի՞նչ մեղք ունի սա, այս յանցաւորը, մտածեցի ես. ինչո՞վ տարբեր կըլինէի ես սրանից, եթէ սա, այս յանցաւորը, փոխանակ ինձ այսպէս կըթելու, կըթեր այնպէս, ինչպէս կըթել են իրեն: Չէ՛ որ ես էլ կըլինէի սրա նման մի յանցաւոր, մի ոճրագործ»:

Եւ մի քանի րոպէ լուելուց յետոյ գրկեցի նրա ալեխառն գլուխը և համբուրեցի ճակատիցը: Նա ցնցուեց, և այդ ցնցումով կարծես իրենից իբաց թօթափեց իմ ասած խօսքերի բոլոր ծանրութիւնը և իւր մեղքի ճնշող ազդեցութիւնը: «Գու ինձ խղճում ես, աղջիկս, Աստուած քեզ սրտովդ տայ», ասաց նա:

— «Հայր իմ, ասացի ես, առայժմ չեմ ուզում

պսակուել, իսկ եթէ պէտք է ձեզ, որ անյապաղ և անպատճառ հեռանամ այստեղից, թոյլ տուէք զնամ մօրաքրօջ տուելը Սօնայի և Թամարի մօտ, և երբէք չեմ համաձայնուիլ այստեղ գալ, մինչև որ դուք չկանչէք»:

«--Սրա՛, ինչ որ ուզում ես, զնա այնտեղ և աղօթիր ինձ համար, որ Աստուած էլ ների ինձ, ինչպէս դու ներեցիր, պատասխանեց նա երկար ու խոր մտածելուց լետոյ:

«Եւ դուրս եկաւ ինձ հետ տնից ու կառքով զնացինք մի քանի շրջան անելու ծովեզերքը: Երեկոյեան ինձ բերաւ այստեղ, որտեղից վեց օր լետոյ գրում եմ քեզ բոլորը իրենց մանրամասնութիւններովը:

«Ինչպէս տեսնում ես, թէ ես ու հայրս ոչ մի ակնարկութիւն չտրեցինք Նատալիա Ա.Փանասիւնայի և նրա հետ հօրս ունեցած յարաբերութիւնների մասին, բայց լաւ հասկացանք իրար, ուստի ես երկար չէի կարողանում հանգստանալ, մտածելով որ հօրս անուան մի արատ պիտի գայ, որովհետեւ յայտնուում էր բոլոր դէպքերից, որ օրիորդ Սախարնիկովան երբէք միտք չունի մեր տնից հեռանալու: Մի քանի անգամ մտածեցի դիմել հօրս և շուտ իրաւունք ստանալով պսակուել քեզ վրայ, բայց լետաձգեցի սպասելով, թէ ինչ ելք պիտի ունենայ հօրս և Նատալիայի յարաբերութիւնները:

«Սօնայն և Թամարը ոչինչ չեն հասկանում, բայց սկսել են արդէն անհանգստանալ հայրիկի

արած այն որոշումից, որի գործադրուած լինելուն համար է, որ իրենք հեռացել են նրանից և եկել են այստեղ: Նրանք գուշակում են մի վատ բան և շատ անգամ լաց են լինում, երբ բաժանում են իրենց ընկերուհիներից մնում են առանձին իրենց սենեակում:

«Նրանց տեսնելով, սիրելիս, ցաւերս կրկնապատկուում են և իզուր մտածում եմ նրանց հանգստացնելու միջոցներ գտնելու: Նրանք անողորմաբար հարցնում են, թէ ինչո՞ւ հայրիկը իրենցից հեռացել է, թէ ինչո՞ւ նա չի գալիս, թէ ինչո՞ւ մենք տուն չենք գնում, թէ ինչո՞ւ շատ եմ մտածում, թէ ինչ եղաւ Նատալիա Ա.Փանասիւնային: Արդէն մօրաքոյրս էլ ամեն բան հասկացել է և երկու օր առաջ մինչև իսկ լսեցի, որ Գուգուջանով Արտեմ Փեօգորովիչի մեղքն արդէն բամբասանքի առարկայ է դառել:

«Դու լաւ գիտես, որ հայրս առաջինը չի, ոչ էլ վերջինը, բայց Նատալիա Ա.Փանասիւնային մի զոհ չէ, այլ զօրաւոր ոսոխ: Ներքի հօրս և խղճանրան բարեկամս, որովհետեւ նա շատ դժբաղդ է, թէ եւ ոճրագործ է և ոճրագործներից դժբաղդ ինչ էականեր կան:

«Իսկապէս չէի ուզում այս բաները գրել քեզ, բայց նախ՝ որ ուզում էի տեղս յայտնել միշտ իրար տեսնելու համար, երկրորդ՝ որ չէի կարող այլևս առանձին կրել այս ցաւերը: Եւ ներքի ինձ, որ այսքան ժամանակ լուռ մնացի:

«Երկու օր է, որ, հակառակ հօրս տուած խոստումիս, զնում եմ մեր տունը և ներկայ եմ լինում շատ ցաւալի և սիրտ կտրատող անսարան-

ների: Չեմ իմանում ո՞ւմ խղճում, զոհին, թէ նըրան, որ այդ զոհին բռնել է իւր ձեռքում և նըրա հետ միասին տանջուում է: Երբեմն ատելու-թիւնն դէպի Նատալիա Ա.Ֆանասիենան սաստկանում է, երբեմն էլ տեղի է տալի մի անբացատրելի համակրութեան, որ քեզանից սովորեցի տածել դէպի մարդկային վայրենութեան զոհերը: Երբեմն էլ ոճրագործ համարում եմ Նատալիա Ա.Ֆանասիենային, որ առանց խղճալու հօրս զաւակներին, նրան գցել է իւր ճանկերի մէջ, և այդ ընկերներին մի սարսափելի խալթ ծակծկում է շղերս, որ մինչև այդ ժամանակ հօրս եմ մեղաւոր համարել և նրան ատել եմ մօտ երկու ամսից ի վեր:

«Սրանից երկու օր առաջ փողոցով անց կենալիս տեսայ մեր աղախին Եուլիային, որին հարցրի մեր տան մասին: Նա պատասխանեց, որ արդէն երեք օր է, ինչ որ հայրս պաշտօնից հեռացրել է, ինչպէս նաև սպասաւոր Սէրգէյին, խոհարար Միքայէլին, տնտեսուհի Բէլտրանին և բոլոր միւս ծառայողներին: Այդ լուրն շատ վատ ազդեց, և իսկոյն քայլերս ուղղեցի դէպի տուն առանց մի ըրպէ իսկ մտքովս անցկացնելու, որ խոստացել եմ հօրս առանց իր հրամանին ոտք չդնել մեր սեմից ներս:

«Աստուած իմ, բոլոր դռները փակ գտայ, և իզուր էի գանգահարում: Ոչ ոք չբացաւ: Մտայ խոհանոցի դռնից, որը երևի մոռացել էին փակել: Տեսայ, այնպիսի բաներ, լսեցի այնպիսի խօսքեր

որ վախեցած փախայ այդ անիծուած յարկի տակից, և մինչև այժմ էլ, դեռ նրանց ներգործութեան տակ տանջուում եմ: Ե՛կ, սիրելիս, շուտ եկ, առանց քեզ այլևս չեմ կարող տանել այն բոլոր յուզումներն ու ցուերը, որ կրում եմ մինչև այսօր: Ե՛կ Նաբերեժնայա երեկոյեան ժամը 6-ին և քեզ հետ կրմտածենք, թէ ինչ միջոցներով պիտի կարողանանք ազատել Նատալիա Ա.Ֆանասիենային, հօրս, քեզ, ինձ և բոլորիս:

«Քո Մարիամ Գուգուշանեանց»:

«Յ. Գ. — Հաստատ իմացի՛ր, որ միւս ծանօթներս ու բարեկամներս արդէն սկսել են մեզանից երես դարձնել, մինչև իսկ մօրաքոյրս էլ բամբասում է մեզ, բոլորիս»:

2.

Ի հարկէ նամակը կարգացի լավելով և առանց մի ըրպէ իսկ տատանուելու վազեցի Նաբերեժնայա, ուր նա արդէն սպասում էր ինձ:

Ինձ տեսնելով աչքով նշան արեց, և ես ծըռուեցի մօտակայ նեղ փողոցներից մէկի կողմը: Նա հետևեց ինձ: Մի քանի ըրպէ յետոյ արդէն իրար ձեռք էինք սեղմում յուզուած: Նա չկարողացաւ ոչինչ ասել. իսկ ես չհամարձակուեցի մի բան հարցնել: Նա մի անգամ էլ սեղմեց ձեռներս, կարծես ուզում էր հաստատ համոզուել, որ իրենից չի փախչում իւր յօյսը, իրենց պատուի ազատիչը:

Իսկապէս չէի կարողանում հասկանալ, թէ

ինչ է ուզում ինձանից, ինչ բան պիտի անէի ես, որ նրանց բոլորին փրկէի, ինչպէս յոյս էր տա-
ծում նա: Գուցէ կարծում էր, որ հրաշք եմ գոր-
ծելու: Այո՛, նա հաւատում էր ինձ, որովհետեւ
ինձ սիրում էր անկեղծ: Նրա ձեռները դողում է-
ին իմ ինների մէջ:

— Գնանք, ասաց վերջապէս:

Առանց խօսելու անցանք Ալէքսանդրեան Նա-
բերեթնայա փողոցի աջ մայթերի վրայով և մտանք
Մերկուրեվսկայա փողոցը: Մի քանի ընդհատու-
նրանց տան առաջն էինք:

Գուգուջանովների բնակարանի դռնից դուրս
եկաւ տան բժիշկը, որ իմ հարցին պատասխանեց
լակոնական ոճով.

— Նա կը մեռնի, եթէ այստեղ մնայ:

Եւ չուզենալով աւելի բացատրութիւն տալ
իւր ասածներին հեռացաւ մեզանից:

Օր. Գուգուջանեանը տերևի նման դողում էր:
Բոլորովին յուզուած նա մնացել էր կանգնած փո-
ղոցի մէջտեղում. մոռացել էր կարծես, թէ ինչ
նպատակով էր եկել այդտեղ և յետոյ արագ քայ-
լերով սկսեց հեռանալ իրենց տան առաջից ծովե-
զերքի կողմը: Մի քանի քայլ հետևեցի նրան:

— Մարո՛, ասացի վերջապէս, ո՛ւր ես գնում:

Կարծես քնից նոր զարթնածի նման նայեց
երեսիս ապշած, յետոյ կանգ առաւ և գլուխը խո-
նարհեցրած մի ընդհատ մտածեց:

Յիրաւի տուն էինք գնալու, ասաց նա և
կարճ լուրթիւնից յետոյ աւելացրեց. — Լսեցի՞ր ինչ

ասաց բժիշկը...

— Մենք կազատենք բոլորիս այդ սպառնա-
ցող թոյնի անբարոյականացուցիչ ազդեցութիւնից,
մենք կը հեռացնենք նրան այնտեղից, — ասացի ես,
կամենալով խրախուսել նրան:

— Մենք... հարցրեց նա տարակուսուած: —

— Ոչ, այլ ևս յոյս չկայ:

— Կայ, ասացի վճռապէս, առանց հասկանա-
լու իսկապէս, թէ ինչ միջոց կայ, միայն իմ վրճ-
ռականութիւնս նրան սիրտ տուեց և նա ձեռքը
երկարացրեց իմ ձեռը բռնելու համար, յետոյ ա-
զատ շունչ քաշեց ու ասաց.

— Ետ դռնանք, գնանք տուն և դու էլ լը-
սիր ու տես, ինչ որ ես լսել ու տեսել եմ երկու
անգամ:

Ներս մտանք քազի դռնով:

Առաջին յարկում բնակուող վարձակալներէից
մի կին մեզ նկատելով մատով ցոյց տուեց մեզ
վրայ իւր ընկերուհուն և նրա ականջին ինչ որ
փրսփրոսաց:

Այդ փսփսուքը հասաւ մինչև ամենախորին
սենեակները, և դեռ առաջին յարկի սանդղակների
կիսումն էինք, երբ տեսայ ութ-տասը կանայք,
որոնք իրենց աչքերը մեզ վրայ էին յառել հետա-
քրքրութեամբ:

Իսկ երբ անց էինք կենում մի քանի կանանց
առաջով երկրորդ յարկի սանդղակներով բարձրա-
նալու համար, պարզ լսեցի հետևեալ բառերը.

— Հայրը գուլերնանտկի հետ է սիրահարու-

Թիւն անու՛մ՝ աղջիկը գու՛վերնէօրի հետ, բաղա՛ւոր խալիս են:

Օր. Գուգուջանեանը չլսեց այդ չար հեգնու-
թիւնը, կամ գուցէ լսեց, բայց չուզեց ուշադրու-
թիւն դարձնել:

Վերջապէս հասանք իրենց պատշգամբի դը-
ռան մօտ, որը փակ գտանք: Խոհանոցի դուռը
նոյնպէս փակ էր: Սկսեցի մի բան փնտռել դուռը
բաց անելու համար և չէի իմանում ինչ անել,
երբ Մարիամը ուրախացած կանչեց ինձ իւր մօտ:

— Գուռը յետևից փակուած է, բայց բանա-
լին փականքի մէջ են թողել, մի ապակի կտորե-
լով սակայն կարող կըլինենք բաց անել:

Ես տատանուեցի: Բայց նա առնելով ձեռնա-
փայտս ձեռիցս՝ նրանով փշրեց դռան ապակին և
դուռը բաց անելով ներս մտաւ:

Հետևեցի նրան:

Ոչ ոք մեզ չդիմաւորեց:

Երբ պատշգամբից յառաջացանք և մտանք
այն գաւիթը որ տանում էր դէպի դահլիճ, լսե-
ցինք բղաւոցի և հեկեկանքի ձայներ:

Օր. Գուգուջանեանը բռնեց թևս, սղմուեցաւ
ինձ և առաջնորդեց ինձ դահլիճ: Սկսեցին աւելի
որոշ լսուել ձայները: Վերջապէս մտանք այն մի-
ջանցքը, որ դահլիճը միացնում էր նատալիա Ա-
ֆանասիկենայի սենեակի հետ: Ձայները հէնց այդ
սենեակից էին լսուում:

Կանգ առի այդ միջանցքում անհամբեր շըն-
չելով: Մարիամն աւելի ու աւելի պինդ սղմուում

էր ինձ:

— Լսիր, լսիր, լաւ լսիր, կրկնում էր ականջիս:

Առանց նրա յորդորները ել լսում էի արդէն
և տեսնում թէ ինչ էր կատարում այնտեղ, այդ
սենեակի մէջ, որի դռները բաց էին մութ մի-
ջանցքի վրայ:

— Երբէք, երբէք իմ պատիւը փողով չեմ ծա-
խիլ, ասում էր նատալիա Աֆանասիկենան կատա-
ղի ակնարկը պատկառելի Սրտեմ Փեօդորովիչի վը-
րայ յառած և սպառնական դիրք բռնած նրա
դէմ:— Ուզում էք մի քանի հազար իբրև ողոր-
մութիւն իմ զաւակի երեսին շարտել, ո՛չ, նա կա-
րօտ չէ, սրովհետև նա էլ հաւասար իրաւունքներ
ունի այն տան մէջ, ինչպէս Մարիամ, Սօնիան
ու Թամարը: Նա էլ ունի մայր, որը պատուաւոր
մի կին է, ունի հայր, որը հէնց նրանց էլ հայր
է: Ես ձեզանից փող չեմ ուզում, ո՛չ, այդ անարգ
մետաղին կարօտ չեմ, ես իմ աշխատանքով կարող
եմ պահել նրան: Ձեզանից միայն պահանջում եմ
ձեր անունը տալ իմ որդուն...

— Տիկին, դուք չափազանց մեծ պահանջներ
էք անում, առանց մի բոլոր իսկ մտածելու, որ
միայն ծիծաղով կըհատուցանեն ձեզ այդ,— ասում
էր Սրտեմ Փեօդորովիչը: Գուք ուզում էք, որ իմ
անունը տամ ձեզ և ձեր որդուն, բայց չէք կա-
րողանում գէթ մի օրինակ ցոյց տալ, այո՛, ցոյց
տուէք ինձ մէկին, որ այդպէս է վարուել իւր
անպատուած կնոջ հետ, ինչպէս դուք առաջար-
կում էք ինձ, և ես կը հետևեմ այդ մէկի օրինա-

կին, իսկ այժմ միայն կարող եմ ձեզ վրայ ցաւել, բայց չըկարծէք, որ իմ ցաւակցութիւնը լոկ բառ է, այլ հնչուն մետաղ:

Մարիամն աւելի ու աւելի սղմուում էր ինձ և սարսափից դողում էր, երբեմն-երբեմն էլ ասում էր ատամները իրար խփելով.

— Լսում ես... լսում ես...

— Դուք իզուր էք այդքան չափազանցնում ձեր շնչին անպատուութիւնը, շարունակեց Արտեմ Փետրորովիչը: — Դուք իզուր էք լաց լինում այդպիսի մի հասարակ պատահարի համար: Դուք առաջինը չէք և վերջինն էլ չէք լինելու: Զեղ նրման շատերը կան, որոնք շուտ հասկացել են, որ ունայնամտութիւն է ինձ նման մարդկանց անուան տակ թագնուել ուղենալը և համակերպել են իրենց ճակատագրին: Զեր տրամադրութեան տակ դնում եմ 5000 ռուբլի, ուզում էք ձեզ համար օժիտ շինեցէք այդ գումարը և ապահով եղէք, որ շատ փեսացուներ կունենաք, որոնք ոչ միայն կատարեալ պատրաստականութեամբ ձեզ կտան իրենց անունը, այլև բաղաւորութիւն կը համարեն ու կը պարծենան ամեն տեղ ձեզ նման կը թուած և օժիտաւոր կին ունենալուն համար: Կամ թէ ուզում էք այդ գումարը ձգեցէք բանկը և ձեր պաշտօնը շարունակեցէք. այդպէս կրկնակի շահուած կը լինէք: Իսկ եթէ ուզում էք ձեր ազատութիւնից օգտուեցէք, ինչպէս օգտուել են ձեզանից շատերը...

— Լռեցէք, ուժգին բղաւեց Նատալիա Ա. ֆա-

նասիւննան նրա երեսին:

Մի րոպէ տիրեց լուռութիւն: Յետոյ Նատալիա Ա. ֆանասիւննան ուժգին թափով ընկաւ գետին ու ժահատուած և սկսեց բարձր ձայնով հեծկլտալ: Մարիամը փախաւ և մտաւ դահլիճ, ուր մի թիկնաթուռի մէջ ընկղմուելով սկսեց լուռ հեկեկալ: Ես հետևեցի նրան:

— Լսեցիր, լսեցիր, կրկնում էր Մարիամը, առանց ոչինչ աւելացնել կարենալու, և վշտահար դէմքով նայում էր ինձ ու սեղմում ձեռներս:

Դարձեալ լսուեց Նատալիաի բողոքող ձայնը.

— Դուք ինձ խաբեցիք, դուք ինձ անպատուեցիք և առանց ամաչելու ինձ ցոյց էք տալիս այն ճանապարհը, որ ինձ գահավիժելու է դէպի բարբոսական անկումը. փոխանակ ձեր անպատուութեան և խաբէութեան արդիւնքը ամօթից ու խայտառակութիւնից ազատել փորձելու, դուք ուզում էք նրան ծնած օրից անբարոյականութեան թոյնին լանձնել, ուզում էք դեռ չծնած նրա անմեղ հոգին մահացնել: Ի՞նչ ստորն էք դուք: Մըտածեցէք մի անգամ, թէ ինչ ահուելի պատասխանատուութեան էք ուզում են թարկել դուք ձեզ. չէ որ ձեր անառակ որդին մի օր ձեզանից հաշիւ պահանջելու իրաւունք պիտի ունենայ, այն ժամանակ վայ ձեզ.

Դահլիճի դռնից տեսայ թէ ինչպէս նա լուսահատ մի ճիգ անելուց լետոյ՝ վեր կացաւ գետնից, որ լառաջանայ դէպի Արտեմ Փետրորովիչը, բայց մնաց կանգնած տեղը ու սկսեց դարձեալ

հեկեկալ:

— Գուր խիղճ չունէք, եւ ինձ համար ձեզանից շնորհք չեմ խնդրում, այլ մեր որդու համար անուն, այնպիսի անուն, որ սպագայում նրան չամաչեցնի, խղճացէք նրան: Իրեւ նրա միակ հոգածուն, խնդրում եմ ձեզանից զթացէք նրան և մի թողէք, որ զեռ չծնուած անբարոյականութեան և մեղքի անուան տակ չարչարուի և հալածուի:

Նա ծածկեց երեսը ձեռներով, որ պարզել էր վերջին խօսքերը արտասանելիս Արտեմ Փեռորովիչին, և շարունակում էր լաց լինել, մինչդեռ Արտեմ Փեռորովիչը լուզուած անցուդարձ էր անում սենեակում մերթընդմերթ քթի տակ մըրթ մըրթալով:

— Տիկին, ես շատ եմ մտածել ձեր որդու մասին բայց ոչ մի միջոց չգտայ բացի նրանից, որի մասին քանիցս ձեզ հետ խօսել եմ և որի համար մի քանի անգամ բժիշկը եկել է այստեղ և մի քանի հարիւրներ առած հեռացել է ձեր սենեակից: Ես մեղաւոր չեմ, երբ դուք չէք ուզում ինձ հետ համաձայնուել և ձեզ ազատել այդ աւելորդ բեռից, որը միայն կարող է ձեզ խոչընդոտ լինել ամեն պարագայի մէջ:

Նատալիա Աֆանասիւնան լանկարձ դադարեց լաց լինելուց, նայեց նրան կատաղի աչքերով և մինչդեռ Արտեմ Փեռորովիչը գնում էր դէպի մահճակալը— երևի նրա վրայ հանգստանալու համար իւր ճառից լետոյ, վազեց կանգնեց նրա դէմ ու գոռաց:

— Վատ... Այո, վատ էք, վատթար որդեպան... Ձեզանից ձեր զաւակի համար կեանք եմ խնդրում, դուք ինձ նրան մահ էք առաջարկում: Բայց ապահով եղէք, որ սրանից լետոյ այլևս ոչ նրա երեսը, ոչ էլ իմ երեսը չէք տեսնիլ: Ես կհեռացնեմ, կթագցնեմ նրան ձեզանից, ձեր աչքերից և կջանամ ազատել նրան առ միշտ ձեր որդեպան ճիրաններից:

Եւ Նատալիա Աֆանասիւնան վճռական քայլերով դիմեց դէպի դուռը:

— Ո՛ւր էք գնում, լսուեց, Արտեմ Փեռորովիչի վախեցած ձայնը: Չլինի՞ մի անխելք բան անէք և դիմէք ոստիկանութեան:

Սախարնիկովան հեզնութեամբ ծիծաղեց:

— Սյդ բանը ձեզ եմ թույնում: Ես ձեզ արհամարում եմ, ձեզ արժանի չեմ համարում արդարադատութեան ողորմութեան իսկ: Ես կմնամ այստեղ, կ'տանջուեմ այստեղ մինչև որ իմ և ձեր զաւակը լոյս աշխարհ տեսնի, նրանից լետոյ կանեմ, ինչ որ կ'կարողանամ...

— Տիկին, այլևս չեմ կարող տանել ոչ ձեր արհամարանքն, ոչ էլ ձեր գոռոզութիւնը: Գուր այս տան մէջ օտար էք, այս տունը իմն է և ես իրաւունք ունիմ ձեզ այստեղից դուրս անելու:

— Հո՛, հո՛, հո՛, ծիծաղեց Նատալիա Աֆանասիւնան:

Արտեմ Փեռորովիչը բռունցքը բարձրացրեց և դիմեց դէպի նրան... Նատալիա Աֆանասիւնան ճչաց:

—Անդճութ որդեսպան. . .

Յանկարծ զգացի, որ մէկը վայր ընկաւ ոտքերիս առաջ: Դա Մարիամն էր ուժասպառ և զժգոյն: Թողեցի որ Արտեմ Փեօզորովիչը առանց վկայի իւր պատասխանը տայ Նատալիա Աֆանասիւկնային, և ծուռնկ չոքեցի նրա աղջկայ առաջ, գլուխը բարձրացրի, դրի բազկիս վրայ և վախեցած հարցրի.

—Ի՞նչ պատահեց քեզ:

—Ոչինչ, պատասխանեց նա նուազ ձայնով և իմ օգնութեամբ վեր կացաւ, նստեց բազկաթոռի վրայ ու աւելցրեց, — Նա անոք է, անտէր և թըշուառ: Օգնիր նրան և ազատիր մեզ նրանից:

—Ազատեմ նրան, և ի՞նչպէս:

Հրաշագործ պէտք էր լինել այդպիսի բան կատարելու համար: Միթէ կարող էի ես գործել այդ հրաշքը:

Յանկարծ պատկերացաւ աչքերիս առաջ ինձ հալածող այն անմեղ պատկերը, որ այնօրուայ պէս պայծառ էր, այն օրուայ պէս գուարթ, այն օրուայ պէս ժպտուն, երբ առաջին անգամ տեսայ նրան: Կծկուում էի, կծկուում էր սիրտս:

Եւ մօռացայ բոլորին և Արտեմ Փեօզորովիչին, որ ինձ զայրացնում ու գուլթս էր շարժում միանգամայն, և Նատալիա Աֆանասիւկնային, որին համակրում և հակակրում միանգամայն, և նրանց դեռ աշխարհ չտեսած օրգուն, որին տուել էի արդէն բոլոր մաքուր մարդասիրական զգացումներս, և Մարիամին, որին սիրում էի և որ միայն

ինձանից էր փրկութիւն սպասում իւր քույրերի համար. մօռացայ և այս վերջիններին, որոնք առանց զգալու իրենց անուան վրայ ծանրացող անպատուութիւնը արդէն մտածում ու սքում էին: Մօռացայ վերջապէս բոլոր այն սրտակտոր դէպքերը, որոնց ականատես էի եղել: Այդքան ժամանակ միայն ինձ վրայ ներգործում էր թուրք կաւալերի հետ սիրաբանող ժպտուն, զուարթ և պայծառ աղջկայ տխուր ու կեղտոտ բաղդը:

Եւ ընկղմեցայ մտքերի մէջ: Ազատել նրանց: Այդքան ոյժ ունիմ ես, հարցնում էի ինքս ինձ:

Անցեալիս բոլոր անցքերը համայնանկարի պէս պարզուեցան իմ առաջ, և ես փնտռում էի այնտեղ մի գործ, որի լիշողութիւնը գէթ կարողանար ինձ քաջալերել, թէ ընդունակ եմ, կարող եմ մի ամբողջ ընտանիք սպառնացող անպատուութիւնից ազատել: Եւ ոչ մի դէպք չէի կարողանում գտնել. իզուր էի գլուխս տանջում: Յանկարծ լիշեցի ուսանողութեանս տարիները: Տէր-Աստուած, ի՞նչ անհոգ կերպով եմ անցկացրել ամբողջ տարիներ. ոչ մի արտասովոր դէպք չէ պըղտորել նրանց հանդարտ միօրինակութիւնը և երազներիս չարտուութիւնը, բացի չարչարող չքաւորութիւնից, որի դէմ կուում էի ես և իմ ընկերներից շատերը լարած ջիղերով: Չքաւորութիւն: Այժմ էլ որ միտս է գալիս նրա մասին ամենաթեթեւ մի լիշողութիւն, սարսափում եմ և մտածում թէ արդեօք էլի կարող եմ կուուել նրա դէմ եթէ յանկարծ նա ինձ պաշարէ: Ոչ, այժմ

չեմ կարող, չեն կարող և իմ ընկերները. այլևս մեղանում չկայ այն զօրութիւնը, որ ունեցել ենք այն ժամանակ և որ քանիցս քիչ է մնացել, որ մեզ լքի և մահացնի: Ոչ, այժմ մենք ակնածում ենք ու զարմանում մինչև իսկ, թէ ինչպէս կարողանում են չքաւորները քաշ տալ իրենց գոյութիւնը: Եւ վայրկենաբար մտածեցի որ այս վերջինները հերոսներ են եղել. ես էլ հերոս եմ եղել, հարցրի ինքս ինձ: Միթէ այժմ էլ, այս կրիտիկական վայրկենիս էլ հերոս չէի կարող լինել: Միթէ մի քանի տարուայ անցկացրած հանգիստ կեանքն ինձ վրայ ազդել ու ուժերս ջլատել է: Ինչ սոսկալի տարբերութիւն կայ չքաւոր ուսանողի և ապահովուած ուսուցչի մէջ: Այն ժամանակ կուռում էի մի զօրաւոր թշնամու դէմ — քաղցի դէմ, որը սակայն ինձ չէր ստիպում ունեցածս մի քանի կոպէկները թագցնել ընկերներիցս: Այո՛, կայ ինձանում հերոսութեան նշույլ:

Ուրեմն կարող եմ հրաշք գործել:

Միթէ...

— Շատերն էլ քեզ նման լաց եղան, ասում էր Արտեմ Ֆեօդորովիչը, շատերն էլ ասացին այդ խօսքերը մի քանի հարիւր աւելի շորթելու համար: Եօթը հազար վերջնականապէս տալիս եմ, եթէ ուզում էք զնանք կանտոր և ստացէք ու հեռացէք մեր տնից, այլապէս ձեզ դուրս կանեմ խայտառակելով:

Բղաւեց և լռեց:

Նատալիա Ա.Ֆանասիւկնան ամուր քայլերով

դուրս եկաւ սենեակից, նրա վրայ մի արհամարական և ահեղ հայեացք ձգելուց լետոյ, բայց սրտի ամբուլթիւնը շուտ թուլացաւ, և հեկեկալով ընկաւ միջանցքի մէջ, ուր արդէն դուրս էի գնացել ես դահլիճից և Մարիամն էլ հետեւել էր ինձ:

Կարձեալ պատկերացաւ իմ առաջ թուրք կաւալերի հետ գնացող աղջկայ զուարթութիւնը, պայծառութիւնն ու ժպիտը, որոնք ծածկում էին կատարեալ խաւար ու տանջանք:

Արտեմ Ֆեօդորովիչը դուրս եկաւ և ուզում էր Նատալիա Ա.Ֆանասիւկնային բարձրացնել, երբ նրա դէմ կանգնեցի յանկարծ և բոլորովին ինձանից դուրս եկած գոռացի...

— Նրան կը տանեմ ես, պարոն, նա իմ կինն է, ես նրա բարոյականութեան և պատուի պաշտպանն եմ, և դուք պատասխանատու էք իմ առաջ:

Բոլորը զարմացած լռեցին:

Նատալիա Ա.Ֆանասիւկնան յանկարծ դադարեց հեծկտալուց, վեր կացաւ և ապշած նայում էր ինձ:

— Օրիորդ, դուք ուզում էիք մէկին, որ ձեզ բարոյական անկումից ազտտէր՝ տալով ձեզ և ձեր որդուն իւր անունը: Եթէ ուզում էք, ընդունեցէք իմը, ես սիրով տալիս եմ այն:

— Ա՛հ, թոյլ կերպով ճչաց Մարիամը և աչքերը ծածկեց ձեռքերով:

Նատալիա Ա.Ֆանասիւկնան դեռ ևս նայում էր երեսիս ապշած, կարծես ստուգելու համար թէ իսկապէս ես կ'ամ: Յետոյ գլուխը խոնարհեց

րեց, մի քանի րոպէ մտածեց և արտասուքը աչքերին— շնչաց:

— Ահա ձեզ իմ ձեռք. արէք ինձ, ինչ որ ուզում էք:

Ես նրա հետ դուրս եկայ:

Հրաշքը գործուած էր, կարծեցի, որ թոյնը իւր ազդեցութիւնը կորցրեց և չքացաւ բոլորովին . . .

* * *

Եթէր տարի է, որ ամուսնացած եմ, բայց երեք ամիս միայն ապրեցայ իմ կնոջ, Նատալիա Աֆանասիենայի հետ: Նա ապրում է Թիֆլիսում, իսկ ես Բագուում: Նա ինձ հետ բաժանուելիս խօստովանուեց, որ ինձ ատում է և կվերադառնայ ինձ մօտ, երբ այլևս ատելութիւն չի տածել զեպի ինձ:

— Ինչ ձեզ համակրում էի, ամաց նա, գուցէ և կսիրէի, եթէ հաստատ իմանայի, որ դուք ինձ սիրում էք, բայց դուք ինձանից զզուում էք, և միայն արգահատելով ինձ տուէք ձեր անունը: Գուք սիրում էք ուրիշին, իսկ ես ատում եմ ձեզ:

Օր. Գուգուջանեանը պսակուեց իւր ատելի Իսակ Մանվելովիչ Կարապետովի հետ և մինչև այժմ էլ ինձ արհամարում է, որովհետև իւր ատելի ամուսնու չափ արժանապատուութիւն չեմ ունեցել և իւր մօտ խաղացել եմ ամենաստոր խաբեբայի դերը: Ես նրան խաբել եմ Գուգուջանեանի արտասուքով:

նասիւնային:

Արտեմ Ֆեոդորովիչը ինձ հետ թշնամացաւ առմիշտ և այժմ էլ զեռ ապրում է անհոգ և ուրախ առաջուայ նման և վայելում է առաջուայ յարգանքն ու պատիւը:

Փոքրիկները մեծացել և հարսնացու ազջիկներ են դառել: Նրանք մօռացել են մինչև իսկ որ իրենց հայրը երկու ամսի չափ իրենց հեռացրել էր իրենից և իրենք չարչարուել էին մտատանջութեամբ իրենց մօրաքրոջ տանը: Նրանք նոյն պէս չեն լիշոււմ ինձ որ իրենց ազատեցի մահացնող թոյնից:


Այդ թոյնը չխնայեց միայն ինձ . . .



Գ Ե Ր Զ:

33

Մ. Կ.



0

«Ազգային գրադարան»



NL0372278

59.606

